

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿՐԵՄԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԾԱՌԱՅԱՐԱՆ



1990թ.
1991թ.
1992թ.
1993թ.
1994թ.
1995թ.
1996թ.
1997թ.
1998թ.
1999թ.
2000թ.

ԽՈՐՀՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈՐՈՅԱԿԱՆԻ «ՄՊԻՏԱԿ ԷԶԵՐԸ»




ДЕЛО 1216

10

116

283

АРХИВЫ



ԾԱՌԱՅԱՐԱՆ

104


Մ-84
92

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԻ
«ՍՊԻՏԱԿ ԷԶԵՐԸ»
(1940-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ - 2020



6426

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Խ 841

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի կողմից
տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 18T-6A225
գիտական թեմայի շրջանակներում:

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. Կ. Հ. Խաչատրյան

Խ 841 Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը»
(1940-1960-ական թվականներ): Հոդվածների ժողովածու /
Խմբ.՝ Կ.Հ. Խաչատրյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստի-
տուտ, 2020.- 200 էջ:

Ժողովածուում ներառված գիտական հոդվածներում նորա-
հայտ արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների անտիպ և
հրատարակված հուշերի, նրանց հետ անցկացվող հարցազրույցնե-
րի, գրականության, փաստագրական ու գեղարվեստական ֆիլմե-
րի համալիր ուսումնասիրության լայն հենքի վրա ներկայացված են
Խորհրդային Հայաստանի 1940-1960-ական թվականների պատ-
մության չուսումնասիրված, հասարակության լայն շերտերին ան-
ծանոթ հարցերը՝ «սպիտակ մնացած» էջերը:

Ժողովածուում հասցեագրված է պատմաբաններին և հարակից
գիտաձյուղերի մասնագետներին, հայրենի պատմությամբ հե-
տաքրքրվողներին:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-93-0

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին համաշխարհային
պատմագիտական մտքի մեջ նկատելի դարձած ճգնաժամը գի-
տական հանրության մոտ հանգեցրեց այն մտայնությանը, որ հե-
տազոտական ավանդական մոտեցումները, մեթոդներն ու մար-
տավարությունը չեն բավարարում ժամանակի պահանջներին:
Պատմագիտության մեջ նախկին դարաշրջաններում ընդունված
մոտեցումները և դրանց արդյունավետությունը դրվեցին կասկա-
ծի տակ: Եվրոպացի պատմաբանները սկսեցին վերաիմաստա-
վորել պատմական գիտության առարկան ու խնդիրները:

Հաջորդ տասնամյակներում առաջ եկած պատմագիտական
ուղղություններից մեկն էլ հանդիսանում է առօրեականության
պատմությունը, որի նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվել է
1960-70-ական թթ. և պահպանվում է մինչև այժմ: Առօրեակա-
նության պատմությունն իր մեջ ներառեց պատմագիտական
տարբեր դպրոցների հետազոտական խնդիրները՝ դառնալով
պատմագիտության առանձին ճյուղ: Առօրեականության պատ-
մության հետազոտությունն առաջին հերթին ենթադրում է ոչ թե
պատմական կարևոր իրադարձությունների լուսաբանում, այլ սո-
վորական մարդկանց կյանքի, արտաքին իրադարձություններին
նրանց հարմարվելու, այդ իրադարձությունների նկատմամբ
նրանց հուզական արձագանքների ուսումնասիրություն: Պատմա-
գիտության մեջ առաջին անգամ հասարակության սովորական

անհատները կամ սոցիալական առանձին խմբերը դադարում են պատմական իրադարձությունների ներգործության սոսկ օբյեկտ լինել: Եթե նախկինում կենցաղը, մարդկանց ապրելակերպը կա՛մ անտեսվել է պատմագրության մեջ, կա՛մ էլ ներկայացվել է սոցիալ-տնտեսական գործառույթների ընդհանուր նկարագրությունների համատեքստում և հասարակության կենսամակարդակի վիճակագրական բնույթի ցուցանիշներում, ապա առօրեականության պատմության միջոցով անհատն իր կենցաղով, իր ամենօրյա կենսագործունեությամբ դառնում է պատմության հերոսը, նրա կերտողը, պատմական գործընթացի տեսանելի մասնակիցն ու ուղղորդողը:

Պատմագիտության առարկայի, ուսումնասիրության օբյեկտի նման ընկալումը ըստ էության ոչ այլ ինչ է, եթե ոչ պատմագիտության սոցիալականացում, ինչն այսօր պատմագիտության արդիականացման համատեքստում դիտարկվում է որպես գիտական անհրաժեշտություն: Հայ պատմագիտության մեջ պարզ, սովորական մարդկանց, կամ սոցիալական առանձին խմբերի և սոցիալական կյանքի նշված կառուցակարգերի համալիր ուսումնասիրությունը չափազանց կարևոր է, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է Հայոց պատմության խորհրդային ժամանակաշրջանին: Այդ տասնամյակներն առանձնահատուկ էին ոչ միայն սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, այլ նաև քաղաքական ամբողջատիրական համակարգի ներդրմամբ, որի արդյունքում հաստատվեց կոմկուսի մենատիրությունը: Այս փոփոխություններն իրենց ուղղակի ազդեցություններն էին թողնում մարդկանց կյանքում՝ ձևավորելով հասարակական առանձնահատուկ հարաբերություններ, մարդկանց թելադրելով յուրօրինակ մտածելակերպ ու կենսակերպ:

Եթե Խորհրդային Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը բավականաչափ ուսումնասիրված է, ապա խորհրդային ապրելակերպն իր տարաբնույթ՝ թե՛ դրական և թե՛ բացասական դրսևորումներով հայ պատմագիտության կողմից դեռևս ամբողջությամբ լուսաբանված չէ: Խորհրդային կյանքի բազմաթիվ կողմեր դուրս են մնացել հայ հետազոտողների ուշադրությունից՝ դրանց կարևորության թերագնահատման և, հատկապես, «գաղտնի» նշագրումով փաստաթղթերը նախորդ սերնդի գիտնականներին անհասանելի լինելու պատճառներով: Արդյունքում՝ խորհրդային հասարակարգին վերաբերվող պատմագիտական ուսումնասիրություններում առաջացել է միակողմանիության վտանգ, երբ լուսաբանվում են հասարակական-քաղաքական իրողությունները, սակայն դրանց արձագանքները հանրային մտածողության մեջ՝ առաջացրած հետևանքների, ազդեցությունների ձևով, մնում են չբացահայտված:

Պետություն-հասարակություն առնչությունները, քաղաքացիների՝ պետության որոշումներին հարմարվելու ընդունակությունները, ձևերը, սոցիալական վարքագծի տարաբնույթ դրսևորումները, պետական գաղափարախոսական թելադրանքի հանրային ընկալումները և դրա արտացոլումը առօրյա կյանքում և բազմաթիվ այլ հարցեր այսօր մեծ արդիականություն ունեն և՛ ռուսական, և՛ արևմտյան պատմագիտական մտքի համար:

Խորհրդային Հայաստանն անցել է պատմության գիրկը, սակայն այսօր էլ արդիական և հրատապ է նրա պատմության գիտական ուսումնասիրումն ու արժևորումը, «մութ անցքերի» և «սպիտակ էջերի» վերհանումը, երևույթներ, որոնց մասին խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում չէր կարող բարձրաձայնվել: Այս տեսանկյունից անհրաժեշտ է

համալիր ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերը»՝ հայ ժողովրդի պատմության առանցքային ժամանակներից մեկի վերաբերյալ մեր ունեցած պատմական գիտելիքն ավելի ամբողջական դարձնելու, նաև՝ պատմագիտական մտքի ժամանակակից զարգացումներին ընդառաջ գնալու ակնկալիքով:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության անկախ պետականության պայմաններում հայրենական պատմագիտության առջև լայն հնարավորություններ են բացվել կատարելու պատմագիտական օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ այնպիսի թեմաներով, որոնց մասնակի անդրադարձն անգամ բացառված էր Խորհրդային պետության գոյության ողջ ժամանակաշրջանում: Խորհրդային ամբողջատիրական համակարգը և պետական գրաքննության մամլիչ մեքենան իր բազմաթիվ օղակներով աչալուրջ հետևում և խստորեն կասեցնում էր ոչ միայն Խորհրդային քաղաքական կամ ռազմական, այլև հասարակական-տնտեսական կյանքի՝ պետության համար ոչ ցանկալի երևույթների լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներում ու գիտական ուսումնասիրություններում:

Վերը նշված հանգամանքներով էլ պայմանավորված են ժողովածուում ընդգրկված ուսումնասիրությունների արդիականությունը: Բնականաբար՝ դրանք ունեն նաև կիրառական նշանակություն: Ներկայումս հայաստանյան հասարակությունում առկա բացասական դրսևորումներից որոշների արմատները գալիս են խնդրո առարկա ժամանակաշրջանից: Ուստի՝ դրանց խորքային պատճառների բացահայտումն օգտակար կարող է լինել նաև մերօրյա բացասական երևույթներն արմատախիլ անելու գործում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՅՈՒՂԻ ԱՌՕՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ԴԱԼՄԱՅԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հանգուցային բառեր – աշխատանք, հաղթանակ, ընտանիք, շինարարություն, օգնություն, կոլտնտեսություն, գյուղատնտեսություն:

Գյուղատնտեսության բնագավառում Խորհրդային պետության համար արդիական համարվող նոր հողերի յուրացումը հիմնականում տեղի էր ունենում գյուղացիության պլանային վերաբնակեցումների միջոցով: Հայկական ԽՍՀ-ում նոր այգիներ ստեղծելը համընկավ հանրապետության սակավահող, ոչ բերրի շրջաններից գյուղացիներին ավելի հողառատ, բերրի տարածքներ (մեծամասամբ՝ Արարատյան դաշտ) տեղափոխելու նախկինից շարունակվող պետական քաղաքականության հետ: 1939 թ. դեկտեմբերին շահագործման հանձնվող Դալմայի նոր ջրանցքը հնարավորություն տվեց ոռոգելի դարձնել խաղողի և պտղատու այգիների համար պիտանի հարյուրավոր հեկտարներ: Ջրանցքի կառուցմամբ պայմանավորված՝ առաջ էր գալիս ոռոգելի դարձող՝ Երևանին մերձակա (Աշտարակի և Էջմիածնի ճանապարհին) Դալմայի ամայի, «ղռ» հողերի յուրացման խնդիրը, ուր նախատեսվում էր խաղողի և պտղատու այգիներ հիմնել [18, էջ 453–454]: Նշյալ տարածքների յուրացման համար թիրախային էին համարվում հատկապես Ապարանի, Մարտունու, Նոր Բայազետի շրջանների լեռնային սակավահող գյուղերի բնակիչները:

1939–1940 թթ. վերաբնակեցման ճանապարհով Երևանի մերձակայքում՝ Դալմայի ամայի հողատարածքներում, հիմնվեցին 4 նոր բնակավայրեր՝ Առաջին գյուղը կամ Դավիթաշենը, Երրորդ գյուղը կամ Անաստասավանը, Երրորդ գյուղը կամ Սպանդարյանը (Սիլիկյան թաղամաս), Չորրորդ գյուղը կամ Հաղթանակը: Վերջինները մտան 1939 թ. սեպտեմբերին հիմնադրված Երևանի գյուղական (1940 թ. հունիսից՝ Բերիայի անվան) շրջանի մեջ [19, էջ 168–174]: Նոր հիմնադրված և կայացման ուղին բռնող Բերիայի շրջանի բնակավայրերի առօրյա կյանքը խաթարվեց 1941 թ. հունիսի 22-ին սկսված Հայրենական մեծ պատերազմի պատճառով: Հիմնադրման դժվարությունները, այնուհետև պատերազմը Բերիայի շրջանի ղեկավարությանը թույլ չտվեց լրջորեն զբաղվել նորաստեղծ գյուղերի սանիտարական, կենցաղային, մշակութային խնդիրներով:

Պատերազմի բոլոր ԽՍՀՄ բազմազգ բնակչության շրջանում հայրենասիրական և դրանից բխող հականացիստական պոռթկում առաջ բերեց: Ինչպես Խորհրդային Միության ողջ տարածքում, այնպես էլ Հայկական ԽՍՀ քաղաքներում, ավաններում ու գյուղերում հունիսի 22-ին և հաջորդ օրերին հակագերմանական կարգախոսներով զանգվածային միտինգներ տեղի ունեցան: Հունիսի 22-ին գումարված միտինգում գերմանական ֆաշիզմը դատապարտող ելույթներ ունեցան Երրորդ գյուղի բնակիչները: Առանձնապես հուզումնալի էր գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ Հակոբ Դավոյանի ելույթը: Ներկաները մեծ ոգևորությամբ ընդունեցին նրա խոսքերը, թե գյուղացիները պատրաստ են սեփական արյան գնով պաշտպանել հայրենիքը՝ պարտության մատնելով ահեղ թշնամուն: «Վայ նրան, ով կհանդգնի կասեցնել մեր հաղթական արշավը», - իր

ելույթն այսպես եզրափակեց կոլտնտեսության նախագահը [13, N 42]:

Պատերազմի ընթացքում Խորհրդային Միության քաղաքացիները տարբեր ճանապարհներով օժանդակում էին ռազմի դաշտում կռվողներին: Հայկական ԽՍՀ բնակչությունը ևս այս գործից անմասն չէր: Ռազմաճակատին օգնելու նպատակով 1941 թ. հուլիսին ստեղծվեց հայրենիքի պաշտպանության ֆոնդ: Պատերազմի տարիներին Հայաստանի բնակչությունը միլիոնավոր ռուբլիներ մուծեց պատերազմական կարիքների համար ստեղծված պաշտպանության և կարմիր բանակի հիմնադրամներին, ռազմաճակատ ուղարկեցին մեկ միլիոն կտորից ավել տաք հագուստ (մուշտակներ, բաճկոններ, ձեռնոցներ, գուլպաներ, գլխարկներ, սպիտակեղեն և այլն), տասնյակ հազարավոր անհատական ծանրոցներ [17, էջ 588]: Հանրապետության մյուս բնակավայրերի թվում ռազմաճակատում կռվող մարտիկներին համեստ օգնություն (տաք հագուստ, գումարներ, տարբեր իրեր) ուղարկեցին նաև Դալմայի գյուղերի բնակիչները [13, N 56; 14, N 5]:

Հայրենական պատերազմի պայմաններում Հայկական ԽՍՀ-ում իրականացվող տարբեր ծրագրերի թվում մինչև պատերազմի ավարտը հետաձգվեցին նաև Դալմայի գյուղերի շինարարական աշխատանքները: Սա բխում էր ԽՍՀՄ-ում շրջանառվող «ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանից: Շրջանի բնակավայրերում ընթացող շինարարական աշխատանքների շարքում առաջնությունը տրվեց դպրոցների կառուցմանը: Հարկ է նշել, որ նույնիսկ այս դեպքում դպրոցաշինությունը չափազանց դանդաղ էր ընթանում: Այս տեսակետից նույնանման անմխիթար վիճակում էին

Բերիայի շրջանի նորակառույց գյուղերի մեծ մասը՝ Դավիթաշենը, Նոր Արեշը, Երրորդ գյուղը, Չորրորդ գյուղը և այլն: Նշյալ բնակավայրերում շինարարական աշխատանքներն ուշացումներով ու ձգձգումներով էր ընթանում [2, թ. 11; 3, թ. 121–122]:

Պատերազմի առաջին օրերից ռազմաճակատ մեկնեցին նաև Դավթայի չորս գյուղերի երիտասարդ բնակիչները: Աշխատող երիտասարդ ձեռքերից զրկվելն առանձնապես խաթարեց գյուղատնտեսության զարգացմանն ուղղված քայլերը: Ծանր վիճակում հայտնվեցին նաև Բերիայի շրջանի կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները: Կարմիր բանակ զորակոչվածների թվում էին գյուղատնտեսական աշխատանքներում զգալի փորձ կուտակած շատ մասնագետներ: Ամենուր աշխատող ձեռքերի կարիք էր զգացվում: Շրջանի նորաստեղծ չորս գյուղերի պարագայում խնդիրը բարդացնում էր այն հանգամանքը, որ գյուղացիներն իրենց նախկին բնակավայրերում հմտացել էին անասնապահության, հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի մշակության գործում: Տեղական ժամանակում մասնագետ գյուղատնտեսների շարունակական օգնության պայմաններում միայն նրանք կարող էին արդյունավետ զբաղվել այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ: Սակայն պատերազմական պայմաններում նման հնարավորություն չկար: Արհեստավարժ մասնագետների բացակայությունն ու գյուղացիների անփորձությունը գյուղատնտեսական աշխատանքներում բացթողումների էր հանգեցնում: Բնակավայրերի գյուղատնտեսական աշխատանքներին խոչընդոտող հանգամանք էր դաշտային աշխատանքներից գյուղացիների զգալի մասի խուսափելու իրողությունը: Նրանցից որոշները, նոր բնակավայրում դեռևս վերջնականապես չհիմնավորված, երբեմն սոսկ հացի գրքույկ ստանալու

համար, ձգտում էին աշխատանք գտնել Երևան քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում [2, թ. 33–36; 6, թ. 19]:

Գյուղերի բնակիչներին հուզող կարևոր խնդիրներից էր կարմիրբանակայինների ընտանիքների անդամներին օգնելու հարցը, որովհետև շատ ընտանիքներ զրկվել էին իրենց կերակրողներից: Տեղական ղեկավարները բանակ զորակոչվածների ընտանիքներին օժանդակում էին սննդամթերքով, շինանյութով, անասնակերով [1, թ. 105–106 շրջ.]: Ինչպես հանրապետության, այնպես էլ Բերիայի շրջանի ղեկավարները կարևորում էին այս խնդիրը: 1943 թ. փետրվարին հիմնվեց կարմիրբանակայինների ընտանիքներին օգնելու գծով շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալի պաշտոն: Այդ պաշտոնին նշանակվեց Երվանդ Ներսիսյանը [11, թ. 25]: Դրանից հետո շրջանի բնակավայրերում (այդ թվում՝ Դավթայի չորս գյուղերում) առավել հաստատուն հիմքերի վրա դրվեց կարմիրբանակայինների ընտանիքներին օգնելու գործը:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Դավթայի գյուղերում ռազմադաշտ մեկնած տղամարդկանց ամենօրյա աշխատանքներում փոխարինեցին մեծահասակները, կանայք և դեռահասները: Այդ նպատակով գյուղերի կոմերիտականներից կազմակերպվում էին բարձր բերքի երիտասարդական օղակներ և այլն: Շրջանային թերթում տպված մի լրատվությունից տեղեկանում ենք, որ 1941 թ. գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցում էին տասնյակ կանայք [13, N 58]:

Դաշտային աշխատանքներին կանանց լիարժեք մասնակցությունն ապահովելու տեսակետից կարևոր էր մանկապարտեզների, մանկամսուրների, երեխաների համար անհրաժեշտ խաղահրապարակների առկայությունը: Բացի ստացիոնար ման-

կապարտեզից՝ գյուղատնտեսական աշխատանքների սկզբում բնակավայրերում ամառային մանկաիրապարակներ և մանկամսուրներ էին կազմակերպվում՝ խնդիր ունենալով այդտեղ ընդգրկել գյուղի բոլոր մանկահասակ երեխաներին: Սա տեղի էր ունենում կոլտնտեսության միջոցների հաշվին: Բերիայի շրջանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում այս խնդրին: Մանկաիրապարակների ու մանկամսուրների սննդի, խնամքի ու բուժսպասարկման անմխիթար վիճակով պայմանավորված՝ երբեմն ծնողներն ավելի նախընտրում էին երեխաներին տանը պահել: Չնայած պատերազմական պայմաններում կանանց աշխատուժը լիարժեք օգտագործելու հրամայականին՝ գյուղերի կոլտնտեսությունների ղեկավարները հաճախ անուշադրության էին մատնում մանկաիրապարակներն ու մանկամսուրները, առանց շրջանի ղեկավարության գիտության փակում դրանք: Այս իրողությունը բնորոշ էր շրջանի գրեթե բոլոր բնակավայրերին [9, թ. 38–41; 10, թ. 41–42]:

Մանկապարտեզների և մանկամսուրների ստեղծումով մանկահասակ երեխաներ ունեցող կանայք հնարավորություն ստացան շարունակել աշխատանքը կոլտնտեսություններում: Կոլտնտեսությունից ստացած չնչին աշխօրը գյուղացիներին հնարավորություն էր տալիս պահպանել սեփական գոյությունը՝ սպասելով աշխարհակործան պատերազմի ավարտին:

Պատերազմի տարիներին գյուղերն ապրում էին առօրյա հոգսերով՝ գյուղատնտեսություն, անասնապահություն, աշխօրերի բաշխում, ռազմաճակատին, կարմիրբանակայինների ընտանիքներին օգնելու քայլեր: Յուրաքանչյուր գարնան սկզբում նախապատրաստվում էին գյուղատնտեսական աշխատանքներին՝ հաշվառում, վերանորոգում գյուղատնտեսական գործիքները,

պակաս լինելու դեպքում նորերը ծեռք բերում, հաշվառում աշխատանքի ունակ գյուղացիներին, մոբիլիզացնում եղած աշխատանքային ռեսուրսները: Կոմունիստական քարոզչության կողմից ներկայացվում էր, որ թիկունքում արդյունավետ աշխատանքն ու պետության կողմից առաջադրված պարտավորությունների անշեղ կատարումը, տնտեսության զարգացումը կնպաստի կարմիր բանակի ռազմական հաջողություններին: Պատահական չէ, որ գյուղացիներն իրապես հավատում էին, որ գյուղատնտեսական աշխատանքների հաջող կատարման պարագայում կարմիր բանակն ապահովված կլինի ավելի սննդամթերքով, ինչը և կմոտեցնի գերմանացիներին պարտության մատնելու և Խորհրդային Միության սահմաններից դուրս քշելու և իրենց հարազատների՝ տուն վերադառնալու պահը: Իշխող կոմունիստական կուսակցության կողմից կարևոր խնդիր էր համարվում քաղաքական-մասսայական աշխատանքները պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելը, այն է՝ ռազմադաշտում տեղի ունեցած սխրագործությունները և աշխատանքային ոլորտի հաջողությունները «մասսաներին հասցնելը»: Այս տեսակետից կարևոր գործառույթներ էր վերապահված գյուղական ագիտատորներին: Կոլտնտեսային աշխատանքները հաջող կազմակերպելու հիմնավորմամբ՝ ագիտատորներ էին կցվում նաև կոլտնտեսության բրիգադներին [8, թ. 16 և շրջ.]:

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի գյուղերի բնակչությունն ապրում էր սոցիալական ծանր պայմաններում, ինչը հաճախ հանգեցնում էր հանրային սեփականությունից կատարվող «գողությունների» կամ «յուրացումների»: Տարածված էին կոլտնտեսությունների դաշտերից հասկեր գողանա-

լու դեպքերը, որոնց մասնակցում էին նաև երեխաները: Այդ տարիներին հանրապետությունում բազում են մանր գողությունների համար (մեկ դույլ կարտոֆիլ, մեկ պարկ ցորեն և այլն) գյուղացիներին բանտարկելու, կոմկուսի անդամ հանդիսանալու պարագայում կուսակցությունից հեռացման դեպքերը: Տարածված էին կոլտնտեսությունների դաշտերից ցորենի հասկեր գողանալու դեպքերը, որոնց մասնակցում էին նաև դպրոցահասակ երեխաները: Հաճախ միանշանակ պարզ չէր լինում, թե տվյալ անհատն իրականում մեղավոր է, թե՛ ոչ: Նման «հանցանքներում» մեղադրվում էին գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ղեկավար աշխատողներից շատերը: Այսպես՝ 1943 թ. փետրվարի 28-ին ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի բյուրոն «պատերազմական պայմաններում հացի շոայլումներ ու խարդախություններ կատարելու» մեղադրանքով աշխատանքից ազատեց շրջանի Երրորդ գյուղի գյուղխորհրդի նախագահ Հայրապետ Գրիգորյանին և գործը դատարան ուղարկեց: Վերջինի «մեղքն» այն էր եղել, որ նախատեսվածից ավել ստացած հացը ոչ թե հետ էր վերադարձրել, այլ գյուղի կոլտնտեսության վարչության նախագահի և սկզբնական կուսկազմակերպության քարտուղարի համաձայնությամբ բաշխել էր չքավոր կարմիրբանակայիների ընտանիքներին և կոլտնտեսությունում աշխատողներին [5, թ. 34; 4, թ. 11]:

Տարածված երևույթ էր նաև ավելորդ վարչարարությունը: Մեկ օրինակ ներկայացնենք: Որպես շարքային կոլտնտեսականներին օժանդակություն՝ նույն Երրորդ գյուղի կոլտնտեսության վարչությունը թույլատրել էր մեկ տնամերձից ավել աշնանացան կատարել՝ փորձելով դրանով լուծել գյուղացիների ծնուն հացի խնդիրը: ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի բյուրոն 1944 թ. նոյեմբերի 26-

ին կոլտնտեսային հաջողությունների համար դրվատանքի արժանացրեց կոլտնտեսության նախագահ Մկրտիչ Պողոսյանին և սկզբնական կուսկազմակերպության քարտուղար Երվանդ Հովհաննիսյանին, իսկ կոլտնտեսականներին ցուցաբերած արտոնության համար նրանց խիստ նախազգուշացում հայտարարեց՝ «կոլխոզային կանոնադրությունը կոպիտ կարգով խախտելու» համար [7, թ. 217–218]: Նման օրինակները բազում են: Խորհրդային համակարգի բնորոշ տարրը կազմող ավելորդ վարչարարությունը շատ հաճախ հակոտնյա էր սովորական քաղաքացու շահերին:

Հայրենական պատերազմում ԽՍՀՄ ժողովուրդների տարած հաղթանակում կարևոր ներդրում ունեցան թիկունքի աշխատողները: Բերիայի շրջանի «Նոր Կյանք» պաշտոնաթերթը մանրամասն լուսաբանում էր շրջանի բնակավայրերում եղած աշխատանքային հաջողությունները՝ ներկայացնելով գյուղատնտեսության և անասնապահության մեջ աչքի ընկնող աշխատավորներին [15, N 15, 22, 36; 16, N 25]: Մեծ հայրենական ավարտից անմիջապես հետո՝ 1945 թ. մայիսի 23-ին, Բերիայի շրջխորհրդի գործկոմը պատերազմի ընթացքում «գյուղատնտեսական աշխատանքների բնագավառում լավագույն գործունեություն ցուցաբերելու համար» գովասանագրերով պարգևատրեց շրջանի 45 աշխատավորների (մեկ տասնյակը ներկայացնում էին Դալմայի գյուղերը) [12, թ. 3 և շրջ.]:

Պատերազմի ավարտից հետո կարմիր բանակի մյուս զինծառայողների թվում 1945–1946 թթ. զորացրվեցին և հայրենի բնակավայրեր վերադարձան նաև Դավիթաշենից, Անաստասավանից, Երրորդ և Չորրորդ գյուղերից զորակոչվածները՝ ձեռնամուխ լինելով նորաստեղծ բնակավայրերի կայացմանն ու շենաց-

մանը: Գյուղատնտեսության բնագավառում Դալմայի գյուղերի արձանագրած հաջողությունները վերաբերում են հետպատերազմյան տարիներին: Իսկ արդեն 1958–1959 թթ. Դալմայի չորս գյուղերը միացվեցին Երևան քաղաքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 43:
2. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 68:
3. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 69:
4. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 121:
5. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 135:
6. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 152:
7. ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 154:
8. ՀԱԱ, ֆ. 1463, ց. 8, գ. 4:
9. ՀԱԱ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 11:
10. ՀԱԱ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 12:
11. ՀԱԱ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 13:
12. ՀԱԱ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 24:
13. «Նոր Կյանք», Շահումյան, 1941 թ.:
14. «Նոր Կյանք», Շահումյան, 1942 թ.:
15. «Նոր Կյանք», Շահումյան, 1943 թ.:
16. «Նոր Կյանք», Շահումյան, 1944 թ.:
17. Հայոց պատմություն, հ. IV, գիրք I. Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), պատ. Խմբագիր՝ Վ. Ղազախեցյան, Երևան, Զանգակ-97, 2010, 800 էջ:
18. Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, Պատմության ինստիտուտ, 2006, 564 էջ:
19. Սուքիասյան Հ., Երևան քաղաքի ընդարձակման պատմությունից. Դալմայի չորս գյուղերի հիմնադրումը (1939–1940 թթ.), «Երևան 4:

Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2016, էջ 168–174:

АМО СУКИАСЯН

ПОВСЕДНЕВНАЯ ЖИЗНЬ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ДЕРЕВНИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (НА ПРИМЕРЕ ДАЛМИНСКИХ ПОСЕЛЕНИЙ)

Резюме

Ключевые слова – работа, победа, семья, строительство, мощь, колхоз, сельское хозяйство.

В сфере сельского хозяйства актуальным для советских властей было освоение новых земель, что выполнялось в основном за счет плановых переселений крестьянства. В 1939–1940-ых годах путем переселения в окрестностях Еревана, в заброшенных земельных участках Далма, было основано 4 новых поселения – Арачин гюх (Первое село) или Давидашен, Еркюрд гюх (Второе село) или Анастасаван, Ерорд гюх (Третье село) или Спандарян (квартал Силикян), Чорорд гюх (четвертое село) или Ахтанак (Победа). Привычный уклад жизни новооснованных поселений был нарушен 22-го июня 1941 года, когда началась Великая Отечественная война.

Мерам, предпринятым по развитию сельского хозяйства, помешал тот факт, что из-за войны поселения лишились рабочей силы. Отправленных на фронт мужчин в повседневных работах сменили старики, женщины и подростки. В годы войны население

ние армянских деревень проживало в тяжелых социально-экономических условиях. Кроме трудностей, обусловленных войной, жизнь населения осложнялась и излишним бюрократизмом советской системы, идущей в разрез интересам обычных граждан. В годы войны жители четырёх сел Далма помогали фронту теплой одеждой, деньгами, разными вещами, протягивали руку помощи и семьям красноармейцев.

Незаменим вклад работников тыла в победе народов СССР над фашизмом, они твердо верили, что своим тяжелым трудом приближают заветный час победы.

HAMO SUKIASYAN

THE EVERYDAY LIFE OF A SOVIET ARMENIAN VILLAGE DURING THE GREAT PATRIOTIC WAR (ON THE EXAMPLE OF SETTLEMENTS OF DALMA)

Summary

Key words – work, victory, family, construction, help, collective farm, agriculture.

The cultivation of new lands, considered to be actual for the Soviet state in the sphere of agriculture, mainly took place due to the planned resettlement of the peasantry. By means of resettlement four new settlements were founded near Yerevan, in the deserted lands of Dalma during the 1939–1940ss – the First Village or Davitashen, the Second Village or Anastasavan, the Third Village or Spandaryan (Silikyan district), the Forth Village or Victory. The

everyday life of the newly established settlements was disrupted due to the Great Patriotic War, which broke out on June 22, 1941.

The deprivation of the young working hands because of the war seriously undermined the steps for the agricultural development of the villages. Elderly people, women and adolescents were replaced by men in the daily routine. During the years of war, the population of the Armenian villages lived in difficult social conditions. In addition to the difficulties caused by the war, the life of the population was disturbed by the unnecessary administration characteristic to the Soviet system, which was contrary to the interests of the ordinary citizen. In the course of the war, the residents of four villages of Dalma sent warm clothing, money, various items to help the soldiers fighting on the front, helped the family members of the Red Army.

In the victory of the Great Patriotic War won by the peoples of the USSR, the rear workers had an enormous input who were convinced that each moment their hard work brought closer to the hour of victory.

*Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված
Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին և
Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման
50-ամյակին, Երևան, 2019, էջ 308–315:*

**ՀԱՄՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՅՐԵՆԱՊԱՐԶՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1946–1948 ԹԹ.)**

1946–1948 թթ. Մեծ հայրենադարձության կազմակերպչական աշխատանքում կարևոր տեղ են զբաղեցնում հայրենադարձների ընդունման, տեղավորման, նրանց բնակարանային, առաջին անհրաժեշտության կենցաղային պայմաններով ապահովման և ինտեգրման խնդիրները:

Ներգաղթողների տեղաբաշխման հարցը լուծվում էր հենց ընդունման կայարաններում: Նրանց տեղափոխությունը կատարվում էր բեռնատար մեքենաներով: Հայրենադարձներին տեղավորում էին Հայկական ԽՍՀ ողջ տարածքում՝ քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, գյուղեր՝ սակավաթիվ բացառություններով հաշվի չառնելով նախկինում նրանց քաղաքաբնակ կամ գյուղաբնակ լինելը, ունեցած մասնագիտությունը, ինչը նոր միջավայրին հարմարվելու տեսակետից խոչընդոտներ էր ստեղծում և կոնֆլիկտների պատճառ դառնում: 1946 թ. վերաբերող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Ախտայի (Հրազդանի) շրջանի 14 գյուղերում (Ներքին Ախտա, Աղփարա, Մաքրավանք, Աթարբեկյան, Դարաչիչակ, Քաղսի, Սոլակ, Արգաքանդ, Ալփարս, Ֆանտան, Ռնդամալ, Բջնի, Վերին Ախտա, Բաբաքշի) հաստատվել էր 172 ընտանիք (744 անձ): Նրանց համար կառուցվող 26 շենքից 20-ը արդեն ավարտվել էր [8, թ. 2]: Շրջանի

ղեկավարությունը հայրենադարձներին օգնում էր անհրաժեշտ պարագաներով ու սննդամթերքով: 1946–1947 թթ. հայրենադարձ 132 ընտանիքի իբրև օգնություն տրամադրվել է դրամական միջոցներ, այլուր, կրուպա, շաքար, օճառ, տնային ամանեղեն, կենցաղային ապրանքներ և այլն [9, թ. 1–2, թ. 6–7, 15, 27–32]: Իսկ 1948 թ. Արարատի շրջանի Նովյուզլուի գյուղխորհրդի գործկոմի նախագահության նիստի արձանագրությունից պարզ է դառնում, որ հայրենադարձները վարկ էին ստանում նաև անասուններ ձեռք բերելու համար [7, թ. 1]: Հայրենադարձների տեղավորմանն առնչվող խնդիրները պարբերաբար քննարկվում էին կուսակցական կազմակերպությունների կողմից: Այսպես՝ 1948 թ. հոկտեմբերի առաջին օրերին կայացած Բերիայի անվան շրջանի կուսկազմակերպության շրջանային կոնֆերանսում քննության նյութ է հանդիսացել «Հայրենադարձ հայերին ընդունելու, տեղավորելու, աշխատանք տալու և նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք ցույց տալու» հարցը [23]: Նմանատիպ փաստաթղթերից պարզորոշ է, որ հանրապետության կառավարությունը հստակ քայլեր է ձեռնարկել հայրենադարձներին տեղավորելու, նրանց ժամանակավոր և հիմնական բնակարաններով, պարենով և կենցաղային անհրաժեշտ իրերով ապահովելու ուղղությամբ: Սակայն այդ գործընթացը չէր կարող զերծ մնալ թերացումներից և բացթողումներից: Նման երևույթների մասին արձանագրումներ կան հենց պաշտոնական փաստաթղթերում [20, էջ 156–170]: Խնդիրն այն էր, որ Խորհրդային Հայաստանը պատրաստ չէր մի քանի տասնյակ հազար նոր քաղաքացիներ ընդունելու, տեղավորելու և հոգալու նրանց նվազագույն կարիքները: Պատերազմի բեռը նոր-նոր թոթափել փորձող ՀԽՍՀ քաղաքացիները իրենք էլ էին օգնության կարիք զգում:

Հայրենադարձների տեղավորման գործընթացը բուրոկվին այլ պատկեր է ստանում հենց ականատես ներգաղթողների հուշերում, ովքեր իրենց վերապրած դրվագները ներկայացնում են որպես իրադարձությունների շղթա, որոնցով նրանք առաջին պատկերացումն էին կազմել հայրենիքի մասին: 1946 թ. Իրանից Հայաստան ներգաղթած Վահան Քամայանը Հայրենիքի մասին իր առաջին հիշողությունների մասին պատմում է. «Մեզ Ջուլֆայից տարան Մխչյան գյուղ: Մենք շուկի մեջ էինք: Ես երեխա էի, բայց հիշում եմ, թե մամաս ու պապաս ոնց էին լացում, որ թողեցին ամեն ինչ ու եկան: Մեզ բուրիս՝ մի 3 ընտանիք, լցրեցին մի գոմանման տեղում, էնտեղ 10 օր առանց պայմանների ապրեցինք, նոր մի փոքր հողատարածք տվին: Հաց չունեինք ուտելու, ամբողջ օրը լաց էինք լինում... Էդ ժամանակ արդեն ծնողներիս աչքին էլ ինչ հայրենիք էր երևում» [13]: Հայրենադարձի հուշերից ակնհայտ երևում է, որ եղած ծանր սոցիալ-տնտեսական պայմանները մի կողմ էր նետել այն մոլիչ ուժը, որը նրանց ստիպել էր Հայաստան գալ: Շատ դեպքերում հայրենադարձներն ամբողջությամբ իրենց էին մեղադրում ստեղծված վիճակի համար, քանի որ լսել էին հայրենիքի ոչ բարվոք դրության մասին, բայց կուրորեն չէին հավատացել ու հայրենադարձվել էին [16, էջ 133]: Շատերին ահուսարսափ էր պատճառում հենց միայն այն միտքը, որ նրանց որպես «զանգվածի» տեղափոխում էին բեռնատար մեքենաներով և անտեսվում էր իրենց մասնագիտական ունակություններն ու պահանջները: Հայրենադարձ Դավիթ Դավթյանն այդ մասին պատկերավոր գրում է. «Ներգաղթի կոմիտեի պաշտոնյաները խորհրդավոր տեսք ընդունելով ռուսերեն խոսքեր էին փոխանակում և ցույց էին տալիս ինչ-որ բաներ մեր գործերի մեջ: Նրանք, ըստ երևույթին, չէին էլ պատկերացնում, թե

իրենց դեմ գտնվողներս ինչպիսի հոգեբանական խոր և զգայացունց, սրտատրոփ սպասողական վիճակում ենք: Վճռվում էր մեր ապագան, մեր հետագա ճակատագիրը» [4, էջ 27]:

Տեղավորման ընթացքում ներգաղթողները բախվում էին նաև հայաստանյան գյուղական միջավայրի հետ: Պատահակա-նության սկզբունքով նրանց բաժին ընկած գյուղերում սպասվում էր կենցաղային տարրական պայմանների բացակայություն, որին գումարվում էր նաև գյուղացիների կրթական ցածր մակարդակը: Նման պայմաններում տեղի էին ունենում նաև զավեշտալի դեպքեր, որոնք առավել քան պատկերավոր են նկարագրում իրավիճակը: Այսպես՝ Էմիլյա Օհանյանը պատմում է. «Ես ծնվել եմ մոխիրների վրա: Թոնիրից մոխիրը հանում, փռում են մի տեղ և ծնունդը ընդունում են մոխիրի վրա: Հաջորդ զավեշտը լինում է այն, որ իմ ծնունդը գրանցում են մի քանի ամիս հետո, երբ ծյունը հալվում է, ճամփաները՝ բացվում: Գյուղխորհրդի նախագահը գնում է Արթիկ: Գյուղի նորածինների ոչ անուններն է հիշում, ոչ՝ ազգանունները: Օհանյան ազգանունս մոտավոր Հովհաննիսյան է հիշում, իսկ ծնողներիս դրած Աստղիկ անունը չի հիշում, վերցնում ինձ կպցնում է Գերմանիայում կռվի ժամանակ իր սիրած աղջկա՝ Էմիլյայի անունը» [5]:

Տեղավորման ընթացքում հաշվի չէր առնվել նաև այն բարոյահոգեբանական մթնոլորտը, որը ձևավորվում էր հայրենադարձներին տեղացիների տանը տեղավորելուց հետո: Խնդիրն այն էր, որ շատ դեպքերում ազատ շենքեր չլինելու պատճառով հայրենադարձներին տեղավորում էին տեղացիներից բռնի վերցված սենյակներում, ինչն արդեն իսկ խոչընդոտ էր հանդիսանում նորեկների և տեղացիների միջև հարաբերություններ կառուցելու գործում: Դա շատ լավ հասկանում էին հայրենադարձները:

Նրանցից Սայենի Պալյանն այդ մասին գրում է. «Կարելի է պատկերացնել լուռ դժգոհությանը, դժգոհելու իրատունքից զրկուած այն տանտիրոջ, որ չորս տարի, Հայրենական պատերազմի շրջանին անասանելի դժուարությունների կտրծք տալուց յետոյ հիմա էլ իր մի սենեակը յատկացնելով նորեկ հայերին, ինքն իր բազմանդամ ընտանիքով սեղմում էր իր միւս սենեակում» [19, էջ 65]:

Տեղավորումից և ստացած առաջին տպավորություններից հետո հայրենադարձներին սպասվում էր ինտեգրման բարդ և դժվարին ճանապարհ՝ կենցաղային հարցերից մինչև նոր իրականության և աշխարհայացքի ընկալում: Հոգեբանական տեսանկյունից հայրենադարձների անցած ճանապարհը փուլայնացնելու դեպքում հարմարվելու առաջին շրջանը կարելի է բնութագրել որպես մերժման փուլ: Այս փուլում նրանց համար խորթ էր գրեթե ամեն ինչ: Այսպես՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից առաջնային խնդիր էր դիտվում հայրենադարձների շրջանում քաղաքական-մասսայական աշխատանքների անցկացումը, նրանց՝ սոցիալիստական ու կոմունիստական գանդափարներով վերադաստիարակությունը: Հայրենադարձներին խորհրդային իրականության մեջ ներգրավելու համար կարևոր գործառույթ էր վերապահված կուսակցական կազմակերպությունների սկզբնական օղակներին, ինչպես նաև խորհրդային, կոմերիտական և արհմիութենական կազմակերպություններին: Հայրենադարձների համար դասախոսություններ էին կազմակերպվում «Վ.Ի. Լենինի կենսագրությունը», «Միջազգային դրության մասին», «ՍՍՌՄ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները», «Սովետական հայրենասիրության մասին» և նմանատիպ այլ թեմաներով [22]: Մասնավորապես ԼԿԵՄ

կոմիտեներին հանձնարարվում էր բնակավայրերում և աշխատանքի վայրերում ներգաղթյալ երիտասարդության համար պարբերաբար զրույցներ ու զեկուցումներ կազմակերպել «Ինչ տվեց սովետական իշխանությունը երիտասարդությանը», «Սովետական Միության և բուլշևիկների պարտիայի հոգատար վերաբերմունքը երիտասարդության նկատմամբ» և այլ թեմաներով [11, թ. 36]: Ավելին, շրջանային թերթերից մեկում տպագրված հոդվածում խորհրդային նոր քաղաքացիների մեջ քարոզչական-մասսայական աշխատանքը կազմակերպելու, նրանց ամենօրյա մշակութային-կենցաղային հարցերով զբաղվելու գործը համարվում էր պատվավոր աշխատանք [22]: Այդ աշխատանքներին էին լծված կոմունիստ ագիտատորների խմբերը:

Այս միջոցառումները հայրենադարձների համար, մեղմ ասած, այնքան էլ սրտամոտ չէին: Ավելին, տարբեր առիթպատրվակներով նրանք խուսափում էին այդ դասընթացներին, դասախոսություններին մասնակցելուց: Դա առավել տհաճություն էր պատճառում արվեստի ներկայացուցիչներին, որոնց մեծամասնությունը չուներ հիմնավոր կրթություն, չէր հարում որևէ կուսակցության և անգամ քաղաքականությամբ չէր հետաքրքրվում: Դրան գումարվում էր նաև դասախոսություններն արևելահայերենով ներկայացվելու հանգամանքը, որը շատ շուտ հոգնացնում և ձանձրացնում էր նրանց: Օրինակ՝ 1946 թ. Բեյրութից ընտանիքով Հայաստան ժամանած նկարիչ Հարություն Կալենցը շատ դժվարությամբ էր մասնակցում այդ դասընթացներին և մի օր նույնիսկ քննություններից մեկի ժամանակ, երբ նրան հարցնում են, թե «այս վերջին պատերազմին ով էր Սովետական Միության վրա հարձակվողը», նա պատասխանում է. «Դեմոկրատական Գերմանիան»: Այդ պատասխանը ոչ միայն զավեշտի

թեմա է դառնում, այլև հասնում է մինչև Հայկոմկուսի կենտկոմ [6, էջ 71-72]: Նմանատիպ երևույթների հանդիպում ենք նաև հետազայում: Այսպես՝ 1960-ականներին հայրենիք վերադարձած և Հրազդան քաղաքում հաստատված հայերի շրջանում տարվող մշակութային-մասսայական աշխատանքներին վերաբերվող մի զեկուցագրում արձանագրվում էր. «Անբավարար է հայրենադարձների մասնակցությունը «Լենինը հավերժ մեզ հետ է» ժողովրդական համալսարանի պարապմունքներին» [10, թ. 2]: Նման բովանդակությամբ փաստաթղթերը բազմաթիվ են:

Ի դեպ, հայրենադարձների շրջանում քաղաքական-քարոզչական աշխատանքներ իրականացնելու հարցում համանման պասիվություն էին հանդես բերում նաև կոմունիստ ագիտատորները, ովքեր կուսակցության հրահանգով նախապես մշակված հարցադրումներով հաճախակի այցելում էին հայրենադարձների տները: Ասվածի վառ օրինակ էր հայրենադարձ Սայենի Պալյանի բնակարան եկող դպրոցի ուսմասվար, ագիտատոր Սիրուշը, ով, պարբերաբար հիշեցնելով կապիտալիստական իրավակարգի համեմատ սոցիալիստականի առավելությունների մասին, ի վերջո, վստահելով հայրենադարձին, առաջարկում է. «Շատ եմ խնդրում, եթե պարտիայից մարդ գայ ու հարցնի «Ագիտատորը Սիրուշը գալի՞ս է», պատասխանեցէք «Այո», իսկ ես չեմ գալու: ... Ի՞նչ կարիք կայ, որ ես ձեզ ժամերով զբաղեցնեմ՝ ասելու համար այնպիսի բաներ, որոնց ոչ դուք էք հաւատում եւ ոչ էլ ես. սակայն պարտիայի պարտադրանքով հարկադրուած եմ խօսելու, դուք էլ՝ լսելու ինձ: Սա ի՞նչ արտասահման չի: Դուք այստեղ էք եւ ամէն ինչ տեսնում էք ...» [19, էջ 89]:

Խորհրդային իրականությանն ինտեգրվելու հարցում հայրենադարձների առջև ծառացած խոչընդոտների թվում էր ռուսաց

լեզվին չտիրապետելը: Կապ չունենալով, թե տվյալ անձը քանի լեզու գիտեր, եթե ռուսերեն չգիտեր, նրա համար ամեն տեղ բարդություն կար: «Հայերենով առաջ գնալ չի լինի» տարածված կարծիքը թևածում էր ամբողջ Հայաստանով մեկ: Հայրենադարձների համար դժվար էր համակերպվել այն մտքի հետ, որ պետք է ապրեն մի երկրում, ուր խոսում են մայրենիից տարբեր՝ իրենց անհասկանալի լեզվով. այն պարագայում, երբ նրանց մի մասը լեզվապահպանման խնդիր ուներ: Հայրենադարձ ուսանողների մոտ ռուսաց լեզվի ուսուցման ընթացքն ավելի արագ էր տեղի ունենում, քանի որ ուսուցանվող գրականությունը գրեթե ամբողջությամբ ռուսերենով էր: Նրանց համար բուհերում կազմակերպվում էին անհատական արագացված պարապմունքներ: Այդ հարցում նրանց օգնում էին նաև տեղացի երիտասարդները [21]: Հայրենադարձ Սուրեն Բուրսայանի կարծիքով՝ ռուսաց լեզուն նույնիսկ թեև ոչ բարեհնչյուն, սակայն ճկուն և հարուստ էր [3, էջ 33]: Սակայն շատ դեպքերում լեզվի չիմացությունը հայրենադարձներին այնքան էր կաշկանդում, որ թաքցնում էին այդ փաստը՝ «անգրագետ» չպիտակավորվելու համար [19, էջ 92]: Լեզվի չիմացությունը երբեմն նույնիսկ թյուրիմացությունների էր առաջացնում, որը կամ վեճի ու կռվի առիթ էր դառնում, կամ էլ ծիծաղելի իրավիճակի հանգեցնում: Ահա այդպիսի մի իրավիճակ էր ստեղծվել ներգաղթյալներին ընդունող պաշտոնյայի և մի հայրենադարձի միջև, ով ռուսերեն «կարավատ-մահճակալ»-ը հասկացել էր ֆրանսերեն «կրավատ-փողկապ», որը հետագայում ծիծաղելի մանրապատում էր դարձել [3, էջ 38]:

Ինտեգրման փուլում խոչընդոտ էին հանդիսանում նաև տեղացիների և հայրենադարձների միջև եղած տարբերությունները: Առաջին պատնեշը, որով սահման էր գծվում այդ փոխհարա-

բերություններում, դա հայրենադարձներին՝ տեղացիների տված «ախպար» անվանումն էր: Երբեմն որպես փոխհամաձայնեցում նրանց կոչում էին «նորեկներ»: Դա կարծես մեղմացնում էր իրավիճակը: Նույնիսկ թաղամասեր կային առանձնացված, որոնք տեղացիները կոչում էին «Ախպարների թաղամաս» կամ «Ախպարաշեն»: Հետաքրքիր է, որ «ախպար» բառի իմաստը իրենք՝ հայրենադարձները յուրովի էին բացատրում: Ոմանք բացատրվում էին, որ բառը «աղբ» բառից է գալիս [18], ոմանց համար դա արևմտահայերեն «եղբայր» բառն էր [14]: Դա գալիս էր իրավիճակին հայրենադարձների՝ իրենց տեսանկյունից դիտելու ցանկությունից:

Տեղացիներին խորթ էր հայրենադարձների առօրյայի շատ մանրամասներ՝ սուրճ խմելու մշակույթը, ուտեստները, հագուստը, և դա հանգեցնում էր նրան, որ տեղացի-հայրենադարձ ամուսնություններ ոչ միայն շատ հազվադեպ էին տեղի ունենում, այլև 2 հատվածները խուսափում էին իրար հետ շփվելուց: Կահիրեից հայրենադարձված Անի Ամսեյանը պատմում է. «լսելով երբեմն, որ եթե հայրենադարձը ամուսնանում էր տեղացի որեւէ մեկի հետ, ընտանիքում պրոբլեմ էին ունենում, ինքս իմ մեջ որոշել էի չամուսնանալ տեղացի տղայի հետ: Եվ հայրենադարձի հետ ամուսնացա» [1]: Հայրենադարձների մոտ կար նաև տարածված մի թեզ. «տեղացուց աղջիկ բեր, բայց տեղացուն աղջիկ մի տուր»: Դրանով նրանք շեշտում էին այն հանգամանքը, որ տեղացիները «հարս լավ չէին պահում»: Ամուսնության թեման բավական նուրբ հարց էր նաև հենց հայրենադարձների մոտ: Բեյրութահայը ձգտում էր ամուսնանալ բեյրութահայի հետ, հունահայը՝ հունահայի, և ոչ հակառակը: Դա կենցաղամշակութային անհարմարություններ էր ստեղծում:

Այս ամենին զուգահեռ՝ հայրենադարձները փորձում էին ընկալել նոր իրականությունը, իրենց մատուցված նոր աշխարհայացքը, հասկանալ «սովետ» ասվածի իմաստը, հարմարվել նոր կենցաղին ու բարքերին: Հարմարվելու շրջանը հատկապես արագ ընթացավ երիտասարդների մոտ, որոնց մի մասը, մոռանալով սկզբնական փուլում առաջ եկած դժվարությունները, նոր միջավայրում փորձեց նոր կյանք կառուցել: Այս կամ այն երևույթի կամ հարցի վերաբերյալ երիտասարդների տեսակետների փոփոխությունը տեղի էր ունենում աստիճանաբար, բայց երբեմն՝ ենթագիտակցաբար: Այնպես, որ նրանք էլ չէին կարողանում բացատրել այդ փոփոխության պատճառը: Այդ մասին պատկերավոր գրում է Սուրեն Բուրսալյանը. «... Եվ որքան եղավ իմ զարմանքը, երբ մի քանի տարի հետո հանկարծ տեսա, որ ինձ համար էլ արդեն գոյություն չունի ազատության գաղափարը: Վիրահատական այդ գործիքի զորությունը զգացի այն ժամանակ, երբ մայիսմեկյան կամ նոյեմբերյան շքերթների՝ Ստալինի նկարը ձեռքիս, դեռևս առանց հավատի, բայց այնուամենայնիվ բնական համարեցի ծայնս միացնել երկիր-երկինք դղրդացող համաժողովրդական բոցաշունչ ուռուռաապին» [3, էջ 70]:

Նման մի իրավիճակ էր ստեղծվել նաև Եգիպտոսից հայրենադարձված Ժողեֆի մոտ, ով մի օր հասկացավ, որ հայրենիք վերադառնալուց հետո իր կյանքի ամենաերջանիկ օրը դա «փեջի (վառարանի) ու կերոգազի (նավթավառ)» գնումն էր եղել [16, էջ 155]:

Հայրենադարձների մի մասը սկսեց շատ արագ յուրացնել նաև խորհրդային քաղաքացիների շրջանում բավական խորը արմատներ գցած «կենցաղային կոռուպցիան», այսպես կոչված «տանելու արվեստ»-ը: Ընդ որում՝ դա չէր բնութագրվում որպես

գողություն, այլ մեկնաբանվում էր հետևյալ պարզ նախադասությամբ. «պետք է, պիտի տանես» [15, էջ 28]: Ահա, թե ինչպես է այդ «արվեստը» յուրացնելու գործընթացը մեկնաբանում Հունաստանից հայրենադարձված Օննիկ Խաչատրյանը. «Կօշիկի գործարանը ծեարար կ'աշխատիմ: ...Օր մը պատահաբար, աշխատանքի վերջավորութեան տեսայ, իմ դագգահի դիմացը ծեարար Արտաշը գուպաների մէջ բաներ մը կը տեղավորէ, մեղատրի զգուշութեամբ:... Մեզի համար այս ամօթալի երեւոյթին վրայ ամբողջ շաբաթ մը մտածեցի ինչպէս կատարեմ նոյնանման գողութիւն:... Առաջին օրը դողով ու վախով 3 զոյգ կօշիկի երեսացու կաշի դուրս հանեցի: Ամբողջ գիշեր չկրցայ քնանալ:... Հիմա արդէն լաւ եմ, ապրուստի մղձաւանջ չունիմ» [2, էջ 79–80]: Ասվածից երևում է, որ հայրենադարձ Օննիկը ոչ միայն հաղթահարել էր տանջող մտքերն ու վախը, հարմարվելու մասնակից դարձել հանրայնորեն դատապարտելի չհամարվող գործընթացներին, այլև իրեն զգում էր երջանիկ և բավարարված: Իսկ հայրենադարձ Հակոբ Շղյանը որպես այդ ամենի արդարացում օրինակ էր բերում հետևյալ ժողովրդական առածը. «Երբ գնում ես մի ուրիշ քաղաք, և այդ քաղաքի բնակիչների աչքի մեկը կույր է, դու ևս փակիր քո աչքի մեկը, որպեսզի նմանվես նրանց» [15, էջ 35]: «Բոլորն անում են, դու էլ պետք է անես» կոլեկտիվ հոգեբանությամբ հայրենադարձները փորձում էին առաջնորդվել նաև կենցաղում: Դրա վառ օրինակ է կյուրինցի հայրենադարձ Միհրան Մենդիլյանը, ով փողոցում տեսնելով, որ բոլորը խանութի մոտ հերթ են կանգնել, ինքն էլ է կանգնում: Երբ հերթը հասնում է իրեն, պարզվում է, որ տակաոի մեջ մանրացված ու թթու դրած կաղամբ են վաճառում՝ բորչի համար: Հայրենադարձը այդ փաստից շատ է զայրանում, քանի որ չէր կարծում, թե մարդը

կարող է ժամեր շարունակ հերթ կանգնել ընդամենը թթու դրած կաղամբի համար [15, էջ 36]:

Հայրենադարձները հանդիպեցին նաև Խորհրդային Հայաստանում արմատներ գցած մեկ այլ արատավոր երևույթի՝ կաշառքի հետ: Կաշառքը Խորհրդային քաղաքացին փոխարինում էր «մաղարիչ» մեղմացուցիչ բառով: «Մաղարիչ»-ով կարելի էր ընդունվել Համալսարան, բարձրացնել պաշտոնը, լուծել զանազան մեծ և փոքր հարցեր: Պետք է նշել նաև, որ այդ երևույթին հանդիպում ենք ոչ միայն 1940–1950-ական թվականներին, հետագա տարիներին: Այսպես՝ 1969 թ. ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի բաժնում արձանագրված գործերից մեկում Մինիստրների Խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման ու տեղավորման կոմիտեի Աբովյան քաղաքի տեսուչ Մայիս Սիմոյանը մեղադրվում էր բնակարանների բաշխման իրեն տրված լիազորությունները խախտելու, «մաղարիչ»-ի անվան տակ հայրենադարձներից կաշառք վերցնելու և անօրինական ճանապարհով նրանց տարբեր հարկերում բնակարաններ տրամադրելու մեջ [12, թ. 135 և շրջ.]:

Միանշանակ չենք կարող փաստել, որ Խորհրդային իրականության մեջ ապրողներին բնորոշ վերը նշված երևույթներն ամբողջությամբ խորթ էին հայրենադարձների համար: Կային նաև վատ վարքագիծ դրսևորող անձիք, որոնք երբեմն չէին գործում հանգամանքների ազդեցությամբ: Դրանցից էր Մովսես Բազարյանի նամակներում հիշատակվող Հունաստանից ներգաղթած Կարպիս Պետրոսյանը, ով Աթենքի շրջանում ապօրինի ատամնարուժությամբ էր զբաղվել: Փախչելով ոստիկաններից՝ նա ներգաղթում է Հայաստան, որից հետո սկսում է համագործակցել պետական անվտանգության մարմինների աշխատակիցների

հետ: Նա ոչ միայն սկսում է մատնել ներգաղթողներին, այլև իր ստացած ատամնաբուժարանի սենյակները տրամադրում է ՊԱԿ-ի աշխատակիցներին՝ հանդիսանալով սիրային հանդիպումների միջնորդ [2, էջ 136–137]: Իսկ ներգաղթյալ Վահան Դաքեսյանը օգտագործելով իր բանաստեղծի և հասարակական գործչի հոչակը, 1947–1949 թթ. ողջ ընթացքում նամակներ է գրում արտասահմանյան հայկական թերթերում՝ ներկայացնելով իր և հայրենակիցների ճոխ կենցաղն ու Հայաստանի դրախտավայր լինելը: Արդյունքում, նրան տրամադրվեց հողամաս՝ քաղաքի հարմարավետ մասում և շինանյութ՝ երկհարկանի բնակարան կառուցելու համար: Ապա նաև Հայպետհրատում նշանակվեց խմբագիր [2, էջ 163]:

Այսպիսով, ընդհանուր գծերով ներկայացնելով հայրենադարձների տեղավորման և ինտեգրման ընթացքում առաջ եկած խնդիրներն ու ղեկավարությունները, կարելի է փաստել, որ հայրենադարձության կազմակերպման ինչպես նախապատրաստական, այնպես էլ հետագայում նրանց տեղավորման ընթացքում որևէ ձևով հաշվի չէր առնվել նրանց կենցաղամշակութային ու հոգեբանական առանձնահատկությունները: Արդյունքում՝ հայրենադարձության առաջին փուլում ներգաղթյալների մոտ ձևավորվել էր հոգեբանական և ֆիզիկական անհարմար վիճակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անի Ամսեյանի հարցազրույցը, <http://www.hayrenadardz.org/hy/lifestory/ani-amseyan> (այցելությունը՝ 06.02.2020):

2. Բազարյան Մ., Նամակներ Սովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Երևան, 1996, 287 էջ:

3. Բուրսայան Ա., Ամորձատված սերունդ, Լոս-Անճելես, 1993, 356 էջ:

4. Դավթյան Դ., Չխամրող հուշեր, Լոս Անջելես, 2007, 512 էջ:

5. Էմիլիա Օհանյանի հարցազրույցը, <http://hayrenadardz.org/hy/lifestory/emilya-ohanyan> (այցելությունը՝ 29.01.2020):

6. Կալենց Ա., Ներիր ինձ Հարություն, Երևան, 1997, 208 էջ:

7. ՀԱԱ, Արարատի մարզային մասնաճյուղ (ԱՄՄ), ֆ. 135, ց. 1, գ. 17:

8. ՀԱԱ, Կոտայքի մարզային մասնաճյուղ (ԿՄՄ), ֆ. 1, ց. 2, գ. 36:

9. ՀԱԱ, ԿՄՄ, ֆ. 1, ց. 2, գ. 64, գ. 67:

10. ՀԱԱ, ԿՄՄ, ֆ. 20, ց. 4, գ. 367:

11. ՀԱԱ, ֆ. 1463, ց. 8, գ. 10:

12. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 15:

13. Հայրենադարձ Վահան Քամալյանի հուշերից (12.09.2018):

14. Հարություն Քեհեյանի հարցազրույցը, <http://hayrenadardz.org/hy/lifestory/harutyun-keheyan-1> (այցելությունը՝ 06.02.2020):

15. Ճղյան Հ., Չսպված ըմբոստության ուշացած խոստովանանք, Երևան, 1994, 168 էջ:

16. Մարիկյան Մոնա-Մարիան, Հույսը զորավիգ, ընտանեկան ճակատագիր, Երևան, 2011, 332 էջ:

17. Էմիլյա Օհանյանի հարցազրույցը, <http://hayrenadardz.org/hy/lifestory/emilya-ohanyan> (այցելությունը՝ 29.01.2020):

18. Մարտիրոս Գյուլդերյանի հարցազրույցը, <http://hayrenadardz.org/hy/lifestory/martiros-gyowlderyan> (այցելությունը՝ 29.01.2020):

19. Պալեան Ա., Յուշեր ստալինեան օրերից, Լոս Անճելես, 1988, 202 էջ:

20. Սարգսյան Ն., Սփյուռքահայերի 1946–1948 թթ. հայրենադարձը, Երևան, 2014, 286 էջ:

21. «Ավանագարդ», 18 հուլիսի, 1947:

22. «Նոր Կյանք», 10 մայիսի 1948, N 18:
23. «Նոր Կյանք», 7 հոկտեմբերի 1948, N 39:

**ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ
ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1946–1948 ԹԹ.)**

Ամփոփում

Բանալի բաներ՝ հայրենադարձներ, տեղացիներ, տեղավորման գործընթաց, աշխարհայացքի ընկալում, կենցաղային վեճեր, կաշառք:

1946–1948 թթ. նշանավորվեց տասնյակ հազարավոր հայերի՝ դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթով: Այն պատմության մեջ մնաց որպես Մեծ հայրենադարձություն: Մեծ հայրենադարձության կազմակերպչական աշխատանքում կարևոր տեղ են զբաղեցնում հայրենադարձների տեղավորման, նրանց բնակարանային, առաջին անհրաժեշտության կենցաղային պայմաններով ապահովելու և ինտեգրման խնդիրները: Հոդվածում անդրադարձել ենք հայրենադարձների տեղավորման և ինտեգրացման ընթացքում ի հայտ խնդիրներին և դժվարություններին: Նման երևույթների քննարկումը կարևորվում է Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության որոշ հարցերի լուսաբանման տեսանկյունից:

**АМО СУКИАСЯН,
ГАЯНЕ КАЗАРЯН**

**ИЗ ИСТОРИИ ПРИЕМА РАЗМЕЩЕНИЯ И ИНТЕГРАЦИИ
РЕПАТРИАНТОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ
(1946–1948-Е ГОДЫ)**

Резюме

Ключевые слова: Репатрианты, местные жители, процесс размещения, восприятие мировоззрения, бытовые споры, взятка.

1946–1948 годы ознаменовались иммиграцией десятков тысяч армян в Советскую Армению. В истории это осталось как Великая репатриации. В организационной работе Великой репатриации имеют большое значение вопросы размещения репатриантов, их жилья, основные условия жизни и проблемы интеграции. В статье рассматриваются проблемы и трудности, возникающие при размещении и интеграции репатриантов. Обсуждение таких явлений важно с точки зрения освещения некоторых вопросов истории повседневной жизни Советской Армении.

HAMO SUKIASYAN,
GAYANE GHAZARYAN

FROM THE HISTORY OF RECEPTION OF
ACCOMMODATION AND INTEGRATION OF REPATRIANTS
IN SOVIET ARMENIA (1946–1948)

Summary

Key words: Repatriates, local residents, localization process, perception of worldview, domestic disputes, bribe.

The years 1946–1948 were marked by the immigration of tens of thousands of Armenians to Soviet Armenia. In the armenian history, this remains as the Great Repatriation. In the organizational work of the Great Repatriation, issues of the placement of repatriates, their housing, basic living conditions and integration problems are of great importance. The article discusses the problems and difficulties encountered in the placement and integration of returnees. The discussion of such phenomena is important from the point of view of covering some questions of the history of everyday life of Soviet Armenia.

«Պատմություն և քաղաքականություն. Կեղծարարություն, ֆոթիա, առասպելաստեղծություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Սյունիական կերպ, 2020, էջ 160–169:

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1946–1948 ԹԹ.)

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, հայրենադարձներ, կորսված հայրենիք, առօրեականություն, «սպիտակ էջեր», սոցիալական դժվարություններ, ախպար, բողոքներ, դժգոհություն:

Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ հաղթանակը նոր փուլ բացեց ոչ միայն Միության երկրների և ժողովուրդների, այլև՝ աշխարհի տարբեր անկյուններում սփռված հայության կյանքում: Ստեղծված բարենպաստ պայմանները հիմք հանդիսացան հազարավոր սփյուռքահայերի Հայաստան գալու:

1946 թ. դեպի Խորհրդային Հայաստան կազմակերպված Մեծ հայրենադարձության արդյունքում աշխարհի շուրջ 15 երկրներից տասնյակ հազարավոր հայեր վերագտան «կորսված հայրենիք»-ը: Թե՛ ընդգրկման ծավալով, և թե՛ մարդկանց թվաքանակով դա ամենամեծ ներգաղթն էր: Չնայած տարածված համընդհանուր ոգևորության՝ ներգաղթողները ստիպված էին բախվել մի շարք խնդիրների հետ, որոնք իրենց դրսևորումները գտան Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքում և «սպիտակ էջեր»-ի մաս կազմեցին:

Հայրենադարձների փորձությունները սկսվեցին Խորհրդային Հայաստան ոտք դնելուց անմիջապես հետո: Նրանք անցան դժվարին կյանքի տարբեր փուլեր՝ բնակավայրի փոփոխություն, կենցաղային նոր պայմաններ, հացի պակաս, սով. այդ ամենն իրենց սպասումներից տարբեր նոր իրականության մեջ:

Առաջին դժվարությունը, որին հանդիպեցին ներգաղթողները Հայաստանում, տեղաբաշխման, բնակավայրի, բնակարանի խնդիրն էր: Հայաստանյան իշխանությունները հիմնականում մտահոգված էին մարդկանց արագ տեղավորելու հարցով, և այդ էր պատճառը, որ մեծամասամբ անտեսվում էր նրանց զբաղմունքը, մասնագիտությունը, գյուղաբնակ կամ քաղաքաբնակ լինելը¹: Նրանցից շատերը որակյալ արհեստավորներ և մասնագետներ էին, ովքեր ոչինչ չունեին անելու գյուղում: Օրինակ՝ Աթենքից ներգաղթած մի կահույքագործ, ով իր հետ բերել էր մրցանակներ շահած կահույքի նմուշներ, մնացել էր անգործ, քանի որ Սպիտակի շրջանի գյուղերում նույնիսկ աթոռ-սեղանի պատվերներ չէին լինում: Յավոք, հողահատակ խրճիթի առաստաղից թափվող ջրից նրա բերած ամբողջ կահույքը փչացել էր²: Այս և նմանօրինակ դեպքերը ցույց էին տալիս, որ ներգաղթողներից շատերի ոգևորությունը՝ աշխատելու, նոր բան արարելու, անմիջապես մարել է, և տեղիք տվել հիասթափության:

Սակայն միայն արհեստավորները չէին, որ չէին ցանկանում մնալ գյուղում: Բոլորն էին ձգտում քաղաք. և՛ իրենց «սալօնական» կյանքը թողած մեծահարուստները, և՛ սովորել ցանկացող երիտասարդները, և՛ նույնիսկ գյուղական կյանքով ապրող մարդիկ: Մեծահարուստների ու հատկապես, նրանց կանանց համար դժվար էր պատկերացնել, թե ինչպես կարող էր հայ գյուղացին ամբողջ օրն արևի տակ կռացած և ոտքերը ցեխակալած հողում քաղիան անել ու դրա դիմաց ստացած աշխօրով չկարողանալ լուծել ընտանիքի հացի խնդիրը: Ահա թե ինչպես է սահման

գծում կոլտնտեսուհիների և իր միջև 1946 թ. Բեյրութից հայրենադարձված Սայենի Պալյանը. «Պեյրութի «սալօնական» կեանքից անմիջապես յետոյ, ինչպէ՛ս կարողանալու էի կոխոզնիկուհու կեանքը ապրել, երբ մի քիչ առանց հովանոցի արեւի տակ մնալիս՝ հիվանդանում ու բժշկի օգնութեանն էի դիմում: Դրա համար իմ ֆիզիքական կառուցուածքը ընտելացած պէտք էր լինէր մանկութիւնից: Այսպես միանգամից ո՞նց կարելի էր ...»³: Բարձրաշխարհիկ կյանքով ապրող կանանց համար իսկական հիասթափություն էր այն, որ նրանք չէին կարող կրել իրենց բերած լայնեզր գլխարկները, բարձրակրունկ կոշիկները և պարահանդեսային զգեստները, քանի որ գյուղերի փողոցները փոշոտ էին ու ցեխոտ:

Քաղաք էր ձգտում նաև ներգաղթած հայ երիտասարդությունը, որոնցից շատերի երազանքն էր կրթություն ստանալ հայրենիքում: Շատ ընտանիքներ Հայաստան էին նույնիսկ եկել հենց այդ նպատակով: Նրանցից էր նաև հետագայում արդեն հայկական բասկետբոլի վաստակավոր մարզիկ կոչմանն արժանացած Դավիթ Դավիթյանի ընտանիքը: Վերջինս գրում է. «Մենք բուռն փափագ ունեինք սովորելու, ուսման մեջ ծարավ ունեինք, դա մեր (իր և եղբայրների – Գ.Դ.) երազանքն էր՝ սովորել Մայր Հայրենիքում»⁴: Եվ երբ նրանց փորձում են տեղավորել Ալավերդիում՝ պղնձահանքերում աշխատելու համար, մայրը լացակումած հայտարարում է. «Ես իմ զավակներին չարաչար աշխատանքով մեծացրել ու հասցրել եմ Հայաստան, որ նրանք պղնձահանքերում աշխատե՞ն, ոչ, երբեք ...»⁵: ԱՄՆ-ից ներգաղթած

¹ Ա. Ստեփանյան. XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010, էջ 144:

² Տե՛ս նույն տեղում, էջ 145:

³ Ս. Պալյան. Յուշեր ստալինեան օրերից, Լուս Անճելոս, 1988, էջ 60:

⁴ Դ. Դավիթյան. Զխամրող հուշեր, Լուս Անճելոս, 2007, էջ 27:

⁵ Նույն տեղում:

երիտասարդ Փոլ Մուրադյանը նպատակ ուներ կրթություն ստանալ Հայաստանում և անմիջապես վերադառնալ ծննդավայր⁶:

Հայկական գյուղերից փախչում էին նաև գյուղական վայրերից եկածները: Նրանցից շատերը, դեռ չըմբռնելով այն հանգամանքը, որ հեշտությամբ չեն կարող ԽՍՀՄ սահմանը հատել, երանությամբ սպասում էին այդ օրվան և խուսափում աշխատանքից: Օրինակ՝ Հալեպից գաղթած 5 զավակի՝ հայր Աբրահամ Նահապետյանը, ով երկրագործական մեքենաներ աշխատեցնող և նորոգող էր, չէր ցանկանում գյուղ գնալ, իսկ քաղաքում էլ նրա համար աշխատանք չկար⁷: Չգնալը հիմնականում պատճառաբանվում էր աշխօրով, որը երբեմն տրվում էր ոչ թե դրամով, այլ՝ մթերքով: Հայկական գյուղերը չունեին երկրագործական նոր տեխնիկա, բոլորն աշխատում էին հին համակարգով, ինչն ավելի էր վանում հայրենադարձներին: Բացի այդ, գյուղական բնակավայրերում ազատ բնակմակերես չլինելու պատճառով հաճախ հայրենադարձներին ժամանակավոր բնակությամբ տեղավորում էին տեղացիների բնակարաններում՝ կրկնակի անհարմարություններ պատճառելով վերջիններս: Երբեմն նաև նրանք ստիպված էին լինում ապրել նույնիսկ գոմերում:

Սակայն կային նաև ներգաղթողներ, որոնք երբեք չնկճվեցին, պատրաստ էին դիմակայել ամեն ինչի և վայրկյան անգամ չէին ափսոսում, որ եկել ու ապրում էին ծանր պայմաններում: Դրա փայլուն օրինակը 1946 թ. Սիրիայից ներգաղթած Զարուհի Զաթալյանի ընտանիքն էր: Ահա թե ինչ է պատմում հայրենա-

դարձը. «Պապաս չորանություն արեց: Կոլխոզ էր էն ժամանակ, կոլխոզում չորանություն արեց: Կովերի համար ժմեխ էին բերում: Ժմեխը գիտե՞ք, կեր էր կովերի, անասունների համար: Գնում էինք, ուտում էինք էդ ժմեխը, բայց երբեք ու երբեք պապայիս մտքով չի անցել, թե ընչի՞ եկա: Երբե՞ք: Լավ օրեր չտեսանք, բայց իմ պապաս ասում էր՝ մեր հայրենիքն է: Օ՛, հայրենիք, օ՛, հայրենիք՝ ասելով, հայրենիքում էլ մեռավ»⁸: Նման օրինակները եզակի չէին:

Խնդրահարույց էր նաև հայրենադարձների բնակության, նրանց համար տներ կառուցելու հարցը: 1946 թ. հունիսի 21-ի ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման համաձայն հաստատվել էր բնակարանային շինարարության պլան: ՀԽՍՀ-ում կենտրոնական կոմունալ բանկը և գյուղատնտեսական բանկը պարտավորվում էին գյուղերում մասնավոր տներ կառուցելու համար հայրենիք վերադարձող ընտանիքների տրամադրել 25 հազար ռուբլի, իսկ քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում՝ մինչև 30 հազար ռուբլի վարկ՝ 15 տարում մարելու պայմաններով: Գյուղերում վերաբնակեցված հայրենադարձները 2 տարի ժամանակով ազատվում էին գյուղատնտեսական հարկից, ինչպես նաև՝ ամուրի և միայնակ քաղաքացիները⁹: Այս և նմանատիպ պաշտոնական փաստաթղթերով կարծես ամեն ինչ հստակ էր: Իրավիճակը, սակայն, այլ էր: Բանն այն էր, որ բնակարանային շինարարության համար նախատեսվող շինանյութի գումարները հաշվարկված էր պետական գներով, իսկ խորհրդային իրականության մեջ բացառություն կլիներ, եթե բնակարան կառուցողը

⁶ «Վերջին երազանք կամ GAME OVER» վավերագրական ֆիլմ (Տ. Պասկևիչյանի անձնական արխիվ):

⁷ Մ. Բազադյան. Նամակներ սովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Երևան, 1996, էջ 45:

⁸ Զ. Զաթալյանի հարցազրույցը տե՛ս <http://hayrenadardz.org/hy/video/zaruhi-chatalian> (15.IX.2019 թ.):

⁹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 35, գ. 31, թ. 104-110:

կարողանար իրեն պետք եղած շինանյութը գնել համապատասխան պահեստներից: Գործարքը պարտադիր կատարվում էր պահեստապետի «միջնորդությամբ»՝ երբեմն պետական արժեքից երկու կամ երեք անգամ բարձր: Այդ պայմաններում պետական կառույցներին շինանյութ մատակարարող վարպետները քարհանքից քար, պահեստներից այլ շինանյութեր շինարարական հրապարակ տանելու փոխարեն գաղտնի բերում և բարձր գներով վաճառում էին բնակարան կառուցող ներգաղթյալներին: Շինանյութին բարձր գին վճարելուց բացի, մի փոքր հարմար տեղում հողամաս ստանալու համար պետական ինժեներին պետք էր կաշառել: Հաջորդիվ պետք էր գումար տալ նաև շինարարության կատարողականը հաստատող պաշտոնյային՝ բանկից վարկի մասնավճար ստանալու համար, քանի որ առանց նրա ստորագրության «բանկը գումար բաց չէր թողնում»¹⁰: Բացի այդ, շատ դեպքերում հայրենադարձների ձեռք բերած շինանյութը¹¹ տեղացիները գողանում էին շինհրապարակից: Հայրենադարձների մոտ ընդունված էր բնակարանաշինության խնդիրները նկարագրել հետևյալ կերպ. «Տուն չիներ անե՞ծք է Հայաստանին մեջ: Եթե մէկուն կուգես անիծել, ասա. «ի՞նչալլահ Հայաստանի մէջ տուն կշինէս»»¹²: Այս ամենով հանդերձ, վարկի մի մասը ծախսվում էր սնունդ ձեռք բերելու համար: Շատ դեպքերում այն ստացողը կաշառում էր ինժեներին, որպեսզի նա կատարողական թերթիկի մեջ նշի, թե իբր բաց թողնված գումարն ամբողջ

ջությամբ ծառայել է նպատակին, սակայն իրականության մեջ դա տրամադրվում էր ուտելիքին, իսկ որոշները հավաքում էին այդ գումարը՝ երկրից փախչելու նպատակով¹³: Հանապազօրյա հացի խնդիրը լուծելը շատ ծանր էր հայրենադարձների համար:

Կոմբինատներում և արտադրամասերում աշխատող հայրենադարձների վարձատրության կարգը պատշաճ կերպով չէր վերահսկվում, ինչի պատճառով ոմանք երբեմն դիմում էին զարտուղի ճանապարհների¹⁴: Շատ էին հատկապես նրանց կողմից խանութներից կատարված գողությունները: Հայկոմկուսի Լենինականի քաղաքային կոմիտեի քարտուղար Ա. Հարությունյանին ՀԽՍՀ ՆԳՄ Լենինականի քաղաքային բաժնի պետ մայոր Զավալովի ուղարկած գրությունից երևում է, որ հայրենադարձները, քաղաքի խանութներից մեկի վրա հարձակվելով, տարել էին միայն առաջին անհրաժեշտության մթերքներ՝ պանիր, ծխախոտ, կոնֆետ (իրիս)¹⁵ և այլն¹⁶:

Ահա այս և նմանատիպ առաջնային խնդիրները պատճառ դարձան, որ հայրենադարձների մեծ մասը հայրենիք ուղք դնելուց շաբաթներ անց ցանկացան լքել այն: Չկարողանալով ճեղքել «երկաթյա վարագույրը»՝ հայրենադարձները փորձում էին ուղիներ փնտրել, որպեսզի թույլ չտային հարազատներին հետևել իրենց օրինակին: Միակ լուծումը նամակագրությունն էր: Երբեմն վերաբնակեցման վարչության աշխատակիցները ստիպում էին

¹³ Մ. Վարդանյան. Խորտակված երագների արահետներով, Լոս Անջելես, 1992, էջ 46:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 46, ց. 10, գ. 4, թ. 31, գ. 8, թ. 8:

¹⁵ Այդ տարիներին շատ տարածված էր «շուշա» կոնֆետը, որը հայրենադարձները շատ էին օգտագործում թեյի հետ՝ լուծելով շաքարի խնդիրը: Իսկ «իրիս» կոնֆետն ուղղակի «ճոխություն էր» երեխաների համար (Մ. Բուրասյան. Ամորձատված սերունդ, Լոս Անջելես, 1993, էջ 61):

¹⁶ ՀԱԱ, ֆ. 46, ց. 10, գ. 8, թ. 75:

¹⁰ Մ. Բազարյան. նշվ. աշխ., էջ 20:

¹¹ Շատ դեպքերում հայրենադարձները շինանյութը իրենց հետ էին բերում: Օրինակ՝ 1946 թ. Առափնիայից հայրենադարձված Սարգիս Մազմանյանի հայրը իր հետ բերել էր «տախտակներ և արմատուրա», քանի որ լսել էր, որ «Հայաստանում երկաթ չի ճարվում»: Մ. Մազմանյանի հարցազրույցը տե՛ս <http://hayrenadardz.org/hy/lifestory/sargis-mazmanian> (20.IX.2019 թ.):

¹² Մ. Բազարյան. նշվ. աշխ., էջ 21:

կեղծ նամակներ գրել արտասահմանում մնացած իրենց բարեկամներին և հարազատներին՝ նրանց Հայաստան բերելու նպատակով: Շատերը գնում էին նման քայլի, քանի որ հակառակ դեպքում կարող էին զրկվել կամ փոխադրվել ավելի ցածր վարձատրվող աշխատանքի¹⁷: Հայաստանից ուղարկվող գրեթե բոլոր նամակները ենթարկվում էին գրաքննության: Այդ էր պատճառը, որ երբեմն ստիպված էին կողավորված գրել երկրի ծանր դրության մասին: 1947 թ. ԱՄՆ-ից ներգաղթած Փոլ Անթառամյանը պատմում է. «Մենք ուրիշ նահանգում, Շիքագոյից էլ հեռու (մինչ Հայաստան ներգաղթելը – Գ.Ղ.), հողամաս ունեինք: Էդ հողամասի հարեանությամբ երկու աղքատ ներգաղթող էին ապրում. մեկը՝ Լիտվայից, մյուսը՝ Լեհաստանից: Խմել շատ էին սիրում, բայց գինու փող չունեին՝ քացախ էին խմում ...: Երեւանից որ նամակ էինք գրում, ասում էինք՝ մամա, պապա, շատ լավ ենք, էդ կողքի հարուստներից էլ (նրանց անուններն էինք տալիս) լավ ենք ապրում»¹⁸: Մեկ այլ դեպքում գրում էին. «Աղջկադ ամուսնացրու, հետո արի»: Այն պարագայում, երբ աղջիկն ընդամենը 2 տարեկան էր¹⁹: Երբեմն հարազատները դժվարությամբ էին վերձանում նամակները, որոշ դեպքերում անմիջապես հասկանում էին էությունը, բայց դա չէր խանգարում նրանց ետ կանգնել իրենց որոշումից: Երբեմն էլ կարդալով և հասկանալով ամենը՝ նույնաթուղանակ նամակ էին ուղարկում: Օրինակ՝ Սայենի Պալյանը գրել էր իր եղբորը հետևյալ բովանդակությամբ. «Ձեր վերի յարկում մնացած լուսամփոփը հետներդ բերէք, չառած չգաք», իսկ եղբայրը պատասխանել էր. «Սայեն՝ փափաքիդ

համաձայն, երբ վերի յարկից իջեցնում էինք լուսամփոփը, աստիճանների վրայ մեր ձեռքից ընկավ ու փշուր-փշուր եղաւ, այնպէս, որ բռնելիք տեղը չմնաց»²⁰: Իրականում լուսամփոփը գոյություն չունեւ, իսկ «վերին հարկը» տանիքն էր, որտեղ չէր կարելի որևէ իր պահել:

Շատ դեպքերում նամակները գլխացավանք էին դառնում հենց տեղացի նամակատար պաշտոնյաների համար: Նախ ներգաղթյալները գրում էին արևմտահայերեն, այն պարագայում, երբ տեղացին իր կյանքում արևմտահայերեն չէր լսել, այնուհետև մանրակրկիտ գրաքննություն էին անցնում. հետևաբար, պաշտոնյան պատասխանատու էր յուրաքանչյուր տողի համար: Բացի այդ, հստակ էր, որ հայրենադարձները շատ են դժգոհում տիրող կարգերից: Արտասահմանում տարածվող անցանկալի տեղեկությունները կարող էին թանկ նստել պաշտոնյայի համար՝ աշխատանքից ազատվելուց մինչև բանտարկություն²¹: Այդ էր պատճառը, որ նրանցից շատերը խուսափում էին նամակները վերցնել, շատ դեպքերում էլ ավելորդ խնդիրներից խուսափելու համար դրանք պատռում և դեն էին նետում²²:

Բարդ և խճճված էին հայրենադարձ-տեղացի փոխհարաբերությունները: Ներգաղթողների համար խորթ էր այն մթնոլորտը, որը տիրում էր երկրում: Նրանք ստիպված էին ընդունել և ընկալել ապրելակերպի յուրահատուկ նորմեր սահմանած մի կացութաձև, որն ինքնին սոցիալիստական էր և նման պարագայում անհնար էր՝ այն յուրացրած, ու «իրենցը» համարող տեղացիների հետ բախում չլիներ:

¹⁷ Ա. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 188:

¹⁸ Փ. Անթառամյանի հարցազրույցը տե՛ս <http://www.hayrenadardz.Org/hy/lifestory/paul-antaramian> (20.IX.2019 թ.):

¹⁹ S. Meghreblian. An Armenian Odyssey. London, 2012, p. 65.

²⁰ Ս. Պալեան. նշվ. աշխ., էջ 82:

²¹ Նույն տեղում, էջ 78:

²² Նույն տեղում:

Հայրենադարձ կանանց համար զարմանալի էր այն փաստը, որ տեղացի կանայք որևէ պատկերացում չունեին ո՛չ համաշխարհային մոդայի, ո՛չ նրբաճաշակ հագնվելու մասին: Տեղացի աղջիկներին զարմացնում էր հայրենադարձների հագուկապը, «ֆրանսիական ժուռնալներից» կարված նորածն զգեստները, լայնեզր գլխարկները, բարձրակրունկ կոշիկները, լայնաթև հագուստները, գեղեցիկ զարդերը և այլն: Հայրենադարձների համար օտար և ոչ ընդունելի էր տեղացիների կենցաղի պարզությունն ու որոշ դեպքերում նաև միամտությունը, հաճախ անտեղյակությունն այս կամ այն պարզունակ հարցի վերաբերյալ: Երբեմն այն դարձնում էին ծաղրի առարկա: Այսպես, 1947 թ. Կահիրեից ներգաղթած Էմիլիա Օհանյանը պատմում է, թե ինչպես էր մայրը զարմանքից քարացել, երբ գյուղխորհրդի նախագահի կինը հարցրել էր, թե «արդյո՞ք լուսինը իրենց մոտ էլ է էսպես»²³: Մեկ այլ դեպքում «կանանց արտասովելու աստիճան ծիծաղեցրել էր» այն հանգամանքը, որ կարիքից դրդված «Սև շուկայում» նրանցից մեկը «իր գիշերանոցը վաճառել էր որպես երեկոյան այցելության՝ օպերային շքեղ զգեստ, իսկ մյուսը բաղնիքի ցամքոցը համալսարանի դասախոսին վաճառել էր որպես թիկնոց»²⁴: Այս և նմանատիպ իրավիճակները ծիծաղ էին պատճառում հայրենադարձներին, ինչը նրանք դիտում էին որպես «դժոխքում դիմանալու միակ զենք»²⁵: Հայրենադարձ-տեղացի վեճերը հաճախակի էին լինում, որը երբեմն լեզվակոմից վերածվում էր ողբերգության: Բավական էր, որ նրանք հանդիպեին

²³ Է. Օհանյանի հարցազրույցը տե՛ս <http://hayrenadardz.org/hy/video/emilia-ohanyan> (21.IX.2019 թ.):

²⁴ Մ.-Մ. Մարիկյան. Հույսը գորավիզ, ընտանեկան ճակատագիր, Երևան, 2011, էջ 145:

²⁵ Նույն տեղում, էջ 152:

որևէ տեղ՝ տանը, թե փողոցում, երկուստեք կուտակված զայրույթը պողթկում էր: Տեղացիները նրանց ծաղրում էին արևմտահայ բարբառով խոսելու, նրանց հագուկապի համար: Դա երբեմն այնքան էր ճնշում հայրենադարձներին՝ հատկապես երիտասարդներին, որ նրանք ամաչում էին տրանսպորտ նստել: Տեղացիները ծաղրում էին աղջիկների տաբատ հագնելը, տղամարդկանց փողկապ կապելը, նույնիսկ գլխարկ դնելը²⁶: Վիրավորական էր նաև «ախպար» արտահայտությունը, որով նրանք արդեն իսկ զգում էին այն սահմանը, որ տեղացիները գծում էին իրենց միջև: Արտաքին աշխարհից կտրված հայաստանցիների համար հայրենադարձ հայերը կարծես ուրիշ մոլորակից եկած մարդիկ լինեին:

Ծանր էր նաև տեղացիների վիճակը: Երկիրը պատերազմից նոր էր դուրս եկել: Համատարած սով, թշվառություն և այդ պայմաններում հայերը ոչ միայն ստիպված էին մի կերպ պահպանել իրենց գոյությունը, այլև սեփական տունը կիսել արտասահմանից եկած իրենց «տարօրինակ» հայրենակիցների հետ: Բացի այդ, նրանք վիրավորված էին զգում: Չկար մի տուն, որը զերծ էր մնացել պատերազմի արհավիրքից: Տղամարդկանցից ոմանք, ովքեր ընտանիքի միակ կերակրողներ էին, զոհվել էին, ոմանք ետ էին վերադարձել հաշմանդամ: Հետևաբար, նրանք հայրենիքին մատուցած ծառայության դիմաց ակնկալում էին գոնե իրավիճակի չնչին բարելավում և ինչ-որ տեղ նաև «արտոնյալ» կարգավիճակի հաստատում: Իսկ ներգաղթողների գալով, փոխվեց ուշադրության կենտրոնը: Շատ էին լինում, երբ վեճերի ժամանակ տեղացիները վրդովված ասում էին. «Հերիք չէ Հայրենա-

²⁶ Փ. Անթառամյանի հարցազրույցը տե՛ս <http://www.hayrenadardz.org/hy/lifestory/paul-antaramian> (25.IX.2019 թ.):

կան պատերազմում այնքան զոհեր ենք տվել ու անասելի թշվառ օրեր ենք ապրել ու լուռ տառապել, հիմա էլ դուք եք եկել, գրավել մեր տները ու վայելում եք, իսկ մե՞նք»²⁷: Դա գիտակցում էին նաև հայրենադարձներից շատերը, ովքեր նման վերաբերմունքը բնական էին համարում: Մարսելից ներգաղթած Ռոբերտ Տեր-Մերգերյանը հիշում է. «Հորս հետ ման եմ գալիս, մի տղա հանկարծ ձեռքիցս խլում է պաղպաղակը: Ես չեմ մեղադրում, ուտելու բան չկար, կյանքը շատ դժվար էր»²⁸: Շատ դեպքերում հայրենադարձներն ամբողջ մեղքը բարդում էին իշխանությունների վրա: 1948 թ. Սուդանից ներգաղթած Աննա Սեմիրյանը, ներկայացնելով հայրենադարձ-տեղացի տարբերությունները, նշում է. «Այդ չհասկնալը բնական է, ամերիկացիների ասած քոմյունիստների խնդիր է: Ոչ տեղացիներին են բացատրել, որ հայրենիք են գալու հայեր՝ ջարդից փրկված, իրար կորցրած-գտած, ոչ նորեկողներին են բացատրել, որ հայաստանցիները պատերազմ են տեսել, դժվարությունների մեջ են: Դրա համար էլ մի տեսակ իրար չէինք հասկանում»²⁹:

Տեղացիներից ոմանք խոստովանում են, որ ունեին նախանձի՝ զգացում հայրենադարձների նկատմամբ: Դա հատկապես ակնհայտ էր երիտասարդների մոտ. «Նրանց տղաները լավ էին հագնվում, ունեին գեղեցիկ վարվելաձև, նիստուկաց, ինչը դուր էր գալիս աղջիկներին և դուր չէր գալիս մեզ»³⁰: Երբ ներգաղթողներին մաքուր ու կոկիկ հագնված էին տեսնում, առանց պատշա-

²⁷ Մ. Պալեան. նշվ. աշխ., էջ 71:

²⁸ Ռ. Տեր-Մերգերյանի հարցազրույցը տե՛ս <http://hayrenadardz.org/hy/lifestory/robert-ter-mergerian> (25.IX.2019 թ.):

²⁹ Ա. Սեմիրյանի հարցազրույցը տե՛ս <http://www.hayrenadardz.org/hy/lifestory/anna-semirjian> (29.IX.2019 թ.):

³⁰ Մեր գրառած նյութերից (Երևան, 2019 թ.):

ճությունները հաշվի առնելու տեղացիները երբեմն ասում էին. «Դուք ուրիշ էլ կունենաք, սա վաճառեք մեզ»³¹: Դիպուկ է Մովսես Բազարյանի վկայությունը, թե ինչպես երկու երիտասարդ իրեն դաշույնով սպառնացել են և հրամայել հանել բաճկոնը՝ գոռալով. «Դու շատ ես հագել, մեզ էլ է պետք»³²:

Մշակութային տարբերությունները խոչընդոտ էին նաև ամուսնությունների հարցում. նրանք միմյանց աղջիկ տալուց խուսափում էին: Հայրենադարձների կարծիքով տեղացիներն ապրում էին «բուլնիկյան հոգեբանությամբ», մոռացել էին ընտանեկան մաքրամաքուր կապերը և բարոյական ավանդները, իսկ տեղացիները նրանց ավանդապաշտությունը բնորոշում էին որպես «ազգային սահմանափակություն»: Չնայած դրան, «խառնամուսնություններ», իհարկե, տեղի էին ունենում, որոնք ուղեկցվում էին ընտանեկան վեճերով. երբեմն այնպիսի հարցերի շուրջ, որոնք ներկայումս անհեթեթություններ կարող են թվալ: Հունաստանից ներգաղթած Ռուզան Խաչատրյանը պատմում է. «Մայրս դարաբաղի էր: Չորս տարի դիմացավ մորս ու հորս ամուսնությունը: Էն էլ՝ պարբերական կովով-դավով: Տառս ասում էր՝ բաստուրմա էինք սարքում, մամադ լաց լինելով փախչում էր մոր մոտ՝ դրանք հում միս են ուտում: Զեյթուն էինք ուտում, բերանն էր ծռում՝ էս ինչ թույն ա»³³:

Ճիշտ հարթության վրա չէին դրված նաև օրենքի ներկայացուցիչներ-հայրենադարձներ հարաբերությունները: Խնդիրն այն էր, որ պատերազմից հետո ստեղծված բարձիթողի պայմաններում իրավական մարմինները՝ հատկապես շրջաններում, թույլ

³¹ Մ. Բազարյան. նշվ. աշխ., էջ 38:

³² Նույն տեղում, էջ 36:

³³ Ռ. Խաչատրյանի հարցազրույցը տե՛ս <http://www.hayrenadardz.org/hy/lifestory/ruzan-khachatryan> (29.IX.2019 թ.):

էին աշխատում և օրենքի շատ ներկայացուցիչներ վարկաբեկում էին համակարգը, իսկական պատուհաս դառնում ոչ միայն տեղի բնակիչների, այլև հայրենադարձների համար: Նրանք հաճախ վիրավորական արտահայտություններ էին հնչեցնում հայրենադարձների հասցեին, ինչն «ավելի էր զգում վերջիններիս տեղացիների աչքերում»³⁴: Իրավապահներից ետ չէին մնում նաև պետական պաշտոնյաները: Այսպես՝ Լենինականի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի ֆինանսական բաժնի պետ Տ. Բաղդասարյանն աշխատակիցներին հանձնարարել էր կոլխոզներում և «Սև շուկաներում» ստիպողաբար «հարկման» ենթարկել այն հայրենադարձներին, ովքեր վաճառում էին իրենց անձնական ու տնային իրերը³⁵: Ֆինբաժնի աշխատակիցները, որպես իրենց քայլի արդարացում, հայտնել էին՝ «արհեստական դժվարություններ են ստեղծում հայրենադարձների համար և այդ կերպ պայքարում «հակախորհրդային տարր»-ի դեմ»³⁶:

Վերը շարադրվածը վկայում է, որ հակասությունների պատճառ ոչ միայն սոցիալական, ֆինանսական ծանր դրությունն էր կամ նախանձն ու, առավել ևս, ոտնահարված արժանապատվությունը, այլև սոցիալիստական մտածելակերպը: Խորհրդային իշխանությունը հայրենադարձներին դիտում էր որպես պոտենցիալ լրտեսներ և երբեմն պիտակավորում իբրև «հակախորհրդային տարր»: Ուստի մի հասարակարգում, որում տիրում էր վախի մթնոլորտ և ստեղծված էին ընդհանուր մտածողության պայմաններ, չէր կարող օբյեկտիվ վերաբերմունք դրսևորվել «այլ աշխարհից» եկած անձանց նկատմամբ: Ազատ և լայն մտափոր-

զոն ունեցող հայրենադարձի համար նման երևույթները խորթ էին: Նրանք չէին պատկերացնում, թե ինչպես կարող էր հանրային մտածողությունը կախված լինել բացառապես քաղաքական համակարգից:

Այսպիսով՝ քննարկված խնդիրները թույլ են տալիս փաստել՝ ստեղծված ծանր պայմանների պատճառով խորհրդային իշխանություններին չհաջողվեց ճիշտ կազմակերպել և համակարգել նման ծավալով հայրենադարձություն, որի կազմակերպման և ներգաղթողներին տեղավորելու ժամանակ թույլ տված սխալները բացասական տրամադրությունների պատճառ դարձան: Այդ ամենին գումարվեց նաև նույն ժողովրդի երկու հատվածի միջև գոյություն ունեցող լարվածության և անվստահության մթնոլորտը: Արդյունքում, հայրենադարձներից ոմանք չկարողացան հարմարվել և ծուլվել տեղի իրականությանը:

Մյուս կողմից, սակայն, նրանց համար Հայրենիքը դարձավ շոշափելի. շատերը հասկացան, որ անկախ քաղաքական իրադրությունից, սոցիալ-տնտեսական պայմաններից, դա իրենց երկիրն է և պետք է ոչ միայն մատնանշել թերություններն ու սխալները, այլև պայքարել այն վերացնելու համար: Նրանք գիտակցեցին, որ հայրենիքի գաղափարն իմաստավորվում է միայն այնտեղ ապրելու ժամանակ:

References

- Bazaryan M. Namakner sovetakan «drakhtits» (nergaghti ev nergaghtoghneri masin), Yerevan, 1996 (In Armenian).
Bursalyan S. Amordzatvads serund, Los Angeles, 1993 (In Armenian).
Davitean D. Chkhamrogh husher, Los Angeles, 2007 (In Armenian).

³⁴ ՀԱԱ, ֆ. 46, ց. 10, գ. 31, թ. 97, 100, գ. 45, թ. 46:

³⁵ Նույն տեղում, գ. 8, թ. 22–24:

³⁶ Նույն տեղում:

Hayastani azgayin arkhiv, f. 1, c. 35, g. 31, f. 46; c. 10, g. 8; g. 4; f. 46, c. 31, g. 31; g. 45; g. 8 (In Armenian).

Marikyan M.-M. Huyse zoravig, entanekan jakatagir, Yerevan, 2011 (In Armenian).

Meghreblian S. An Armenian Odyssey. London, 2012.

Palean S. Husher stalinean orerits, Los Angeles, 1988 (In Armenian).

Stepanyan A. XX dari hayrenadardzutyune hayots inknutyan hamakargum, Yerevan, 2010 (In Armenian).

Vardanyan M. Khortakvads erazneri arahetnerov, Los Angeles, 1992 (In Armenian).

«Verjin erazank kam GAME OVERb vaveragrakan film (T. Paskevichyani andznakan arxiv) (In Armenian).

<http://www.hayrenadardz.org/hy/lifestory/paul-antaramian>

<http://hayrenadardz.org/hy/video/zaruhi-chatalian>

<http://www.hayrenadardz.org/hy/lifestory/ruzan-khachatryan>

<http://hayrenadardz.org/hy/lifestory/sargis-mazmanian>

<http://hayrenadardz.org/hy/video/emilia-ohanyan>

<http://www.hayrenadardz.org/hy/lifestory/anna-semirjian>

<http://hayrenadardz.org/hy/lifestory/robert-ter-mergerian>

ГАЯНЕ КАЗАРЯН

ИЗ ИСТОРИИ ПОВСЕДНЕВНОЙ ЖИЗНИ РЕПАТРИАНТОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1946–1948-Е ГОДЫ)

Резюме

Ключевые слова: Советская Армения, репатрианты, потерянная родина, повседневность, «белые страницы», социальные трудности, ахпар, жалобы, недовольство.

Победа СССР в Великой Отечественной войне вызвала большой энтузиазм не только среди народов советских республик, но и среди рассеянных по всему миру армян. Создававшаяся благоприятная международная обстановка послужила основой для возвращения тысяч армян в Армению, и началась Великая репатриация.

Репатрианты столкнулись со множеством проблем сразу после того, как прибыли в Советскую Армению. Им суждено было преодолеть такие трудности, как новые бытовые условия, нехватка хлеба, голод. Тем не менее, следует отметить, что самая большая репатриация XX в. со всеми ее проблемами и негативными последствиями дала огромные положительные результаты. Первым из них было то, что родина стала материальной для репатриантов.

GAYANE GHAZARYAN

FROM THE EVERYDAY LIFE HISTORY OF THE REPATRIATES IN SOVIET ARMENIA (1946–1948)

Summary

Key words: Soviet Armenia, repatriates, lost homeland, everyday life, “white pages”, social difficulties, akhpar, complaints, discontent.

The victory of the USSR in the Great Patriotic War aroused great enthusiasm not only among the countries and people of the Soviet republics, but also among Armenians spread all over the world. The victory, as well as the created favorable international

situation, served as a basis for the arrival of thousands of Armenians to Armenia. The Great repatriation of Armenians began.

The repatriates faced a number of problems immediately after they had arrived in their homeland. They were destined to overcome various difficulties such as new living conditions, lack of bread, hunger.

Nevertheless, it should be noted that the largest repatriation of the 20th century with its all problems and negative consequences gave the huge positive results. The first among them was that homeland became tangible to repatriates.

Պարմաբանասիրական հանդես», 2019, N 3, էջ 120–131:

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՌՈՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(ՆԿԱՐԻՉՆԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ
ԿԱԼԵՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Քանալի բառեր՝ սփյուռքահայություն, սոցիալ-տնտեսական վիճակ, հայրենիք, նոր կյանք, բնակարանաշինություն, նկարիչների միություն, խորհրդային քարոզչություն, Կալենցներ:

XX դարում իրականացած հայոց ներգաղթի երրորդ փուլն ընդգրկում է 1946–1948 թվականները, որի ընթացքում աշխարհի շուրջ տասնհինգ երկրներից մոտ 90 հազար մարդ ներգաղթեց Խորհրդային Հայաստան: Թե՛ ընդգրկման ծավալով և թե՛ մարդկանց թվաքանակով սա ամենամեծ ներգաղթն էր, որը խորհրդահայ պատմագրության մեջ մտավ «Մեծ հայրենադարձություն» անունով [2, 95–97]:

1946–1947 թթ. հազարավոր հայերի հետ Խորհրդային Հայաստան եկան նաև արվեստագետների մի մեծ խումբ, որոնց թվում էին նկարիչներ Հարություն և Արմինե Կալենցները (Բեյրութ), Հովհաննես Ասատրյանը (Սիրիա, Հալեպ), Տիրան Սուբչյանը (Ֆրանսիա), Մարո Մարգարյանը (Պարսկաստան), Հովհաննես Զոմյանը (Բեյրութ), Հրանտ Վառարանյանը (Եթովպիա), Բարթոլ Վարդանյանը (Ռումինիա), քանդակագործներ Գևորգ Գանտահարյանը, Արամիկ Ղարիբյանը (Ռումինիա), Գրիգոր Ահարոնյանը (Բուլղարիա) և ուրիշներ [8, ապրիլի 29]: Նկարչու-

հի Արմինե Կալենցը, ամուսնուն՝ Հարություն Կալենցին նվիրված իր հուշերում [1], ներկայացնելով իրենց հայրենադարձության մանրամասները, վեր է հանում տեղացի-հայրենադարձ փոխհարաբերությունների բարդ շղթան ներկայացնող մի շարք խնդիրներ, որոնք իրենցից մեծ կարևորություն են ներկայացնում Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության հետազոտության տեսանկյունից:

Պատերազմից հետո, ինչպես շատ-շատերը, հայրենադարձները նույնպես Խորհրդային Միությունը ընկալում էին որպես վերափոխված աշխարհ, որտեղ կա փրկություն և ճշմարտություն: Վերափմաստավորվել էր հայրենիքի գաղափարը: Այն սկսեց ընկալվել ոչ միայն որպես խաղաղ ու հանգիստ ապրելու և ստեղծագործելու բնօրրան, այլև աշխարհը մեծագույն չարիքից՝ ֆաշիզմից փրկած երկիր:

Հայրենիքը դիտվում էր նաև իրենց մեծ երազանքների կատարման միակ վայր: Այդ մասին Արմինե Կալենցը գրում է. «Երկաթե վարագույրի ետևում, ինչ էլ լինի քո հայրենիքն է: Ես այնտեղ գնացի փնտրելու արդարություն, նա (Հարություն Կալենցը) գտնելու գնաց հայրենիքը՝ Հայաստանը, օտար լինելու զգացմունքից ազատվելու միակ վայրը, նրա համար ի սպաս դնելու իր բոլոր չօգտագործված ուժերը [1, 60]»: Բնականաբար, հայրենիքը շենացնելուց, նրան օգտակար լինելու ձգտումից զատ նրանք լավ ու բարեկեցիկ ապագայի հույսեր ունեին: Հետո սկսվեց հիասթափությունների շղթան, որը նրանց, ինչպես և շատ այլ հայրենադարձ արվեստագետների, ուղեկցեց մինչև իրենց կյանքի ավարտը: Այդ մասին դիպուկ նշում է 1946 թ. Իրանից Հայաստան ներգաղթած գրող, դրամատուրգ Հայկ Վարդանյանը. «Հայաստան ոտք դնելուց անմիջապես հետո, բոլորիս հետ կատար-

վեց նույնը. դեռ չվերագտած, մենք կորցրեցինք մեր հայրենիքը» [5, 74]: Դա իրենց կյանքի մի նոր փուլն էր, որի ժամանակ ազատամիտ և անկաշկանդ արվեստագետները փորձում էին ընկալել և ընդունել ապրելակերպի յուրահատուկ նորմեր սահմանած և «արտասահմանյան մտածելակերպից» [6, 64] ամբողջովին տարբեր Խորհրդային իրականությունը:

Հայրենադարձության առաջին տարիներն ամենաբարդն էին արվեստագետների համար: Հենց սկզբից նրանք բախվեցին այնպիսի սոցիալ-տնտեսական բարդությունների հետ, որոնց մինչ այդ սովոր չէին: Նրանց հատկացվեց Արաբկիրի «Բլուր» կոչվող տարածքը՝ մի չոր և քարքարոտ վայր, որտեղ պետք է կառուցեին իրենց տները: Բնակարանաշինությունը բավական դանդաղ էր ընթանում: Պատերազմից քայքայված երկրում չկային շինարարական նյութեր, իսկ տեղացիները մեծ գումարներ էին պահանջում դրանց համար: Բանն այն էր, որ որոշ տեղացիների ընկալմամբ՝ հայրենիք վերադարձածներն իրենց հետ բերել էին շատ գումարներ, ուստի նրանցից կարելի է որքան հնարավոր է շորթել: Շորթում էին նաև տեղացի աղջիկները, որոնք, իբրև թե «արվեստ սովորելու նպատակով», «կաշում» էին հայրենադարձ արվեստագետներին և նրանց հաշվին զվարճանում: Իսկ տեղացի տղաների համար թիրախ էին դառնում հայրենադարձ աղջիկները, ովքեր տղաների համար դառնում էին «գրագի առարկա» [1, 75, 82]: Ձևավորված հոգեբանությունը որոշ չափով պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ տեղացիները հայրենադարձներից մեծ օգնություն էին ակնկալում, նրանց համար «արտասահմանից» եկած հայը դիտվում էր որպես ստեղծված ծանր դրությունից դուրս գալու հնարավորություններից մեկը: Բացի այդ, նրանց մոտ կարծես թե ձևավորվել

էր խանդի զգացում հայրենակիցների նկատմամբ, ուստի առաջ եկած գոյության կոիվը շատ դեպքերում մի կողմ էր դնում հայրենասիրական միտումները: Երիտասարդության պարագայում հայրենադարձ տղաների և աղջիկների հետ շփվելով նրանք առերեսվում էին խորհրդային մտածելակերպից բոլորովին տարբեր նոր իրականության հետ, որը բավական գայթակղիչ էր: Հայրենադարձները սովոր չէին նման վերաբերմունքի: Տարիներ շարունակ ապրելով հայրենիքից դուրս, նրանք ունեին բոլորովին այլ զգացումներ: Նրանք եկել էին այն հայրենիքը, որտեղ «ամենուր մեղր ու կարագ է հոսում» [3, 11.01.2019], և բոլորը «քույր և եղբայրներ էին» [1, 65]: Բայց սա դեռ սկիզբն էր: Նրանց դեռ սպասում էր նոր բարքերին և սովորոյթներին ընտելանալու բարդ և դժվարին ուղին: Ավելի ուշ, որոշ չափով համակերպվելով իրականության հետ, նրանք փորձում էին ելքեր որոնել իրենց կենսապայմանները բարելավելու համար: Դրա ցայտուն օրինակը հայրենադարձներից մի քանիսի ամուսնությունն էր տեղացիների հետ՝ բնակարանային խնդիրը լուծելու նպատակով [1, 67]:

Խորհրդային Հայաստանը հայրենադարձների համար բնակարանային պայմաններ ապահովելուց զատ, սկսեց կազմակերպել նաև քաղաքական ուսուցման դասընթացներ: Ազատ մտածող, փխրուն և զգայուն հոգի ունեցող նկարիչների համար քաղաքականությունը խորթ երևույթ էր: Հատկապես Հարություն Կալենցի նման մի անձնավորության, որն իր մանկությունն ու պատանեկությունն անց էր կացրել մանկատանը, ոչ մի հիմնավոր կրթություն չէր ստացել ու, բնականաբար, հեռու էր քաղաքականությունից: Հետևաբար դա իր համար մեծագույն տանջանք էր, որին գումարվում էր նաև դասընթացների արևելահա-

յրեն անցկացումը: Նրա չիմացությունն անգամ այն աստիճանի էր հասնում, որ դասընթացների ավարտին կազմակերպված քննության ժամանակ խորհրդային Միության վրա հարձակվող տերությանն անվանում է Դեմոկրատական Գերմանիա, որը մեծ աղմուկ է բարձրացնում [1, 71-72]: Չնայած այս ամենին, արվեստագետը գտնվում էր խիստ հսկողության տակ: Նրան չէին սիրում նաև Հայաստանի նկարիչների միությունում, որի նախագահը գեղանկարիչ Մարտիրոս Սարյանն էր: Քանդակագործ, ֆոտոնկարիչ Վաչիկ Խաչատուրյանն իր հուշերում ներկայացնելով Մ. Սարյանի և Հ. Կալենցի փոխհարաբերությունները, գրում է. «Կալենցը հիանում էր Սարյանի արվեստով, բարձր գնահատում նրան որպես դպրոցի հիմնադիր, բայց որպես մարդու՝ չէր սիրում» [5, 70]: Բանն այն է, որ այդ տարիներին ընդունված էր տոներին՝ նոյեմբերի 7, մայիսի 1, նկարել ղեկավարության անդամների դիմանկարները, որոնք փակցվում էին քաղաքի տարբեր մասերում: Արվեստագետները դա անվանում էին «խալտուրա»: Այն նկարիչները, ովքեր համաձայնվում էին «խալտուրա» անել, որոշ չափով կարողանում էին ապահովել իրենց և ընդունելի էին Միության կողմից: Իսկ Հարություն Կալենցը կտրականապես դեմ էր «խալտուրային» [5, 16]: Նրան նույնիսկ սկսեցին անվանել խորամախտ, արտասահմանյան արվեստի ներկայացուցիչ, որը խորհրդային Հայաստանի նկարիչների համար կարծես թե վիճավորանք լիներ: Բնականաբար, այն տարիներին, երբ արվեստագետներին ամեն պահ սպառնում էր ձերբակալվելու վտանգը, Կալենցին ոչ ոք չէր ընդունում: Դա մի ժամանակաշրջան էր, երբ նոր հասկացություններ ընդունելը, մարսելը, մշակելն ու դրանք ինքնատիպ ներկայացնելն արգելված էր: Արվեստը, ինչպես մյուս բնագավառները, կոչված էր ծառայելու մարքսիզմ-լենինիզ-

մի գաղափարախոսությանը: Նույնիսկ իրավիճակը հասավ նրան, որ Կալենցին արգելեցին ցուցահանդեսների մասնակցել: Միակ մարդիկ, ովքեր համարձակվում էին շփվել նրա հետ, քանդակագործներ Արտո Չաքմաքչյանը և Երվանդ Քոչարն էին [5, 26]: Նկարչին անընդհատ սպառնում էր ձերբակալվելու վտանգը: Նույնիսկ հարևանները վախենալով, որ կարող են որակվել որպես նկարչին մատնողներ, ձևացնում էին որ չեն ճանաչում նրան [5, 26]: Իրավիճակը փրկում էր միայն նկարչի կինը՝ Արմինեն, որն իր ելույթներում, գովաբանելով խորհրդային կառավարությանը և Ստալինին, փորձում էր մեղմել վերաբերմունքը Հ. Կալենցի նկատմամբ [7, ապրիլի 26]: Սակայն շատ շուտով քննադատությունների կենտրոնում է հայտնվում նաև Արմինե Կալենցը, որն իր «հայրենի հողում ստեղծագործության համար» որակվում էր որպես «բուրժուական գեղանկարիչ» [9, մայիսի 11]: Այս հոդվածը Արմինեի կյանքում ծանր հետևանք ունեցավ: Նրան արգելեցին մասնակցել Միության ցուցահանդեսներին, զրկեցին պետական պատվերներից, որը ապրուստի միակ միջոցն էր մնացել: Այդպիսի արվեստագետները հավասարեցվում էին «պորտաբույծներին»: «Դա մի ժամանակաշրջան էր, երբ չէին կարողանում բավարարել մեր տարրական պահանջները», - գրում է նա [1, 122]:

Մեծագույն ողբերգությունը, սակայն, այն էր, որ տեղացի նկարիչներն ընդունում էին Հ. Կալենցի արվեստը, հիանում նրա վրձնի ազատ հարվածներով, գույների բազմազանությամբ, նեղ շրջանակներում ծավալում ազատ արվեստի մասին գրույցներ, բայց գործելակերպում դրսևորում զգուշավորություն, քանզի հասկանում էին, որ իրենց՝ որպես արվեստագետների ընդունելը և մեծարելը, մեծապես կախված էր, ինչպես իրենք էին բնորո-

շում, «վերևներից» [1, 122]: Իսկ այդ «վերևները» շատ լավ գիտակցում էին, որ արվեստը մեծապես ազդում է հասարակական մտածողության վրա, ուստի ազատություն արվեստում նշանակում էր ազատություն մտքերում:

Այս ամենով հանդերձ՝ Կալենցներն իրենց հետ բերեցին կենցաղավարման յուրահատուկ կանոններ, բոհեմական շունչ: Նրանց մտերիմ բարեկամ Ռիտա Շաքարյանը, նկարագրելով նկարիչների տանն անցկացրած երեկոները, գրում է. «Կալենցները սիրում էին հյուրասիրությունը վերածել յուրահատուկ ծիսակարգի: Նրանց տանը պատրաստում էին արևելյան համեղ քաղցրավենիքներ և ճաշեր, որոնց բույրը խենթացնող էր: Նրանք սուրճի մեջ ավելացնում էին պաղպաղակ, որը մեզ համար նորություն էր: Մենք՝ տեղացիներս, սովոր չէինք սև սուրճ խմելու: Այդ սովորույթը իրենց հետ բերեցին հայրենադարձները» [5, 36]: Նման կենցաղավարումը բնորոշ չէր միայն Կալենցներին և Հայաստան եկած մյուս արվեստագետներին: Այն տիպիկ էր բոլոր հայրենադարձներին: Կարելի է ասել տեղի ունեցավ «մշակույթների» յուրահատուկ սինթեզ, որը իր հետքը թողեց հասարակության կենցաղավարման մեջ:

Նման փորձությունների միջով անցան նաև հայրենադարձ մյուս նկարիչները: Ռումինիայից եկած նկարիչ Արամիկ Ղարիբյանը մինչև իր կյանքի վերջն ապրեց անտեսված: Նկարչության ակադեմիական մոտեցման և որոշակի թեմատիկայի պայմաններում, նկարչի եվրոպական շնչով սև և մոխրագույն նկարները չէին կարող ընդունվել Միության կողմից: Ղարիբյանն ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ՝ օգնություն ստանալով հայրենադարձ նկարիչներից: Նման անտեսված նկարիչների մոտ աստիճանաբար ձևավորվում էր «ուրիշից մի բան պոկելու» հոգեբա-

նությունը, որը պահպանվեց անգամ 1960-ական թվականներին, երբ իրավիճակը համեմատաբար բարվոք էր [1, 99]: Խնդիրն այն էր, որ հայրենադարձ նկարիչների մի մասը, չունենալով ապրելու տարրական միջոցներ, անընդհատ գումարային կախվածության մեջ էր գտնվում քիչ թե շատ բարվոք վիճակում գտնվող հայրենադարձ մյուս արվեստագետներից: Նրանց համար ստեղծված իրավիճակում դա այլընտրանք էր, որն աստիճանաբար դարձավ բնավորություն:

Եղան նկարիչներ, ովքեր արժանացան ավելի դառը ճակատագրի: Նրանցից Տիրան Սուքոյանը, որը գաղթել էր Ֆրանսիայից, Հայաստան ուղք դնելուց մի քանի օր անց համակվեց հետապնդման վախով և խելագարվեց: Չկայացավ անգամ նրա անհատական ցուցահանդեսը, որը պատճառաբանվում էր նրա ազատ ֆրանսիական մտածելակերպով [1, 100–101]: Նմանատիպ ճակատագրի արժանացավ նաև կրկին Ֆրանսիայից հայրենադարձված Պետրոս Կոնտրաջյանը: Նկարիչն այնտեղ թողնելով ամեն ինչ, եկել էր Հայաստան. «1947-ին սոցիալիզմի սիրոյն համար ես հրաժարուեցա իմ թանկագին հարազատներից և մէն-մենակ ներգաղթեցի Հայաստան», - գրում է նա [4]: Հայրենադարձության սկզբնական շրջանում ապրելով Լենինականում, ապա Երևանում, Պ. Կոնտրաջյանը նկարել է գեղեցիկ բնանկարներ, որոնք նոր գույներով են ներկայացնում Հայաստանը: Նա նույնպես խելագարվեց և կասկածելի պայմաններում հիվանդանոցի պատուհանից իրեն դուրս նետեց [4]: Նրանք հայրենադարձ նկարիչների այն խմբին էին պատկանում, ովքեր չկարողացան որևէ կերպ հարմարվել նոր իրադրությանը, չընդունեցին հայրենիքը նման ընկալումներում և դրա համար վճարեցին կյանքով:

Փոխհարաբերությունների նման լարվածությունը որոշակիորեն մեղմացավ հայրենադարձության մյուս փուլերում, և դա պայմանավորված էր 2 կարևորագույն հանգամանքով. Նախ՝ որոշ չափով հաղթահարվեցին սոցիալ-տնտեսական դժվարությունները, կայունացավ կյանքի որակը, երկիրը սկսեց ապրել իր բնականոն կյանքով, որն ուղիղ կապով ազդեց շրջապատի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Այդ մթնոլորտի ազդեցության տակ մեղմացավ տեղացիների վերաբերմունքը հայրենադարձների նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կալենց Ա., Ներիր ինձ Հարություն, Երևան, 1997:
2. Հայոց պատմություն, IV հատոր, գիրք երկրորդ, Երևան, 2016:
3. Հեղինակի հարցազրույցը Իրանից Հայաստան ներգաղթած Վահան Քամալյանի հետ, 11.01.2019:
4. Պետրոս Կոնտրաջյան 1905–1956, այբոմ – մենագրություն, Հալեպ, 2010:
5. Арутюн Каленц в воспоминаниях современников (сост. А. Нерсисян), Ереван, 2012.
6. Нерсисян А., Художник Арутюн Каленц, жизнь и творчество, Ереван, 2012.

ՄԱՄՈՒԼ

7. Սովետական Հայաստան, 1947 թ., № 98:
8. Սովետական Հայաստան, 1947 թ., № 100:
9. Սովետական Հայաստան, 1948 թ., № 100:

GAYANE GHAZARYAN

THE EVERYDAY LIFE OF REPATRIATED ARTISTS IN SOVIET ARMENIA DURING THE FIRST YEARS OF POST- WAR PERIOD (THE EXAMPLE OF PAINTERS ARMINE AND ARUTYUN KALENTSS)

Summary

Keywords – *Armenian Diaspora, social-economic status, motherland, new life, communal construction, The Union of painters, Soviet propaganda, Kalents.*

Victory of the Soviet Union during the Second World War was admitted with great joy by the armenians from all over the world. Repatriation of armenians was permitted in 1945 by the leader of Soviet Union Stalin. In 1946–1948 during the great repatriation 90.000 armenians immigrated to Armenia from 15 countries. In this article the lives of famous immigrated armenian artists is introduced. They immigrated from Iran, Syria, Greece and Bulgaria. It was a great happiness for the armenians living in the Diaspora, because they had an opportunity to come back to their motherland. But after they had come, they faced the Soviet reality. They had to overcome and live new life, understand new ideas and values, think and create in new atmosphere. They also had to struggle to get rid of the name “the foreigner”.

The painters couldn't think freely. One of those painters was Harutyun Kalents and part of the article is dedicated to him.

Harutyun and the other painters were ignored by the soviet government.

ГАЯНЕ КАЗАРЯН

ПОВСЕДНЕВНОСТЬ РЕПАТРИАНТОВ ИСКУССТВОВЕДОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ПЕРВЫЕ ПОСЛЕВОЕННЫЕ ГОДЫ (ПО ПРИМЕРУ ХУДОЖНИКОВ АРМИНЕ И АРУТЮН КАЛЕНЦОВ)

Резюме

Ключевые слова – *Армянская диаспора, социально-экономический статус, родина, новая жизнь, жилищное строительство, Союз художников, советская пропаганда, Каленцы.*

Победа Советского Союза во Второй мировой войне с радостью приняли армяне, живущие в разных уголках мира. Репатриация армян была разрешена в 1945 году, по решению лидера Советского Союза Сталина. В 1946–1948 гг. в результате крупной репатриации 90.000 человек из 15 стран иммигрировали в Армению.

В статье представлены проявления повседневной жизни известных армянских искусствоведов репатриированных в 1946–1948 годах. Они иммигрировали из Ирана, Сирии, Ливана, Греции и из Болгарии.

Для армянской диаспоры это была большая радость, потому что у них была возможность вернуться на родину. Они вернулись на родину, с надеждой на новую, лучшую жизнь. Но сразу после

того, как оказались на родине, они столкнулись с советской действительностью. Им суждено было приспособиться к новой жизни, воспринимать новые идеи, переносить горечь новой среды и бороться за избавление от ярлыка «чужого».

Художники не могли свободно мыслить. Один из этих художников был Арутюн Каленц, которому посвящена большая часть статьи. Арутюн и другие репатриированные художники были игнорированы правительством.

*Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝
նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին
և Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին,
Երևան, 2019, էջ 263–270:*

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ «ՄԵԾ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ» ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1946–1948 ԹԹ.)**

Զանգվածային հայրենադարձության կազմակերպումը և իրականացումը Խորհրդային Հայաստանի շուրջ 70 տարիների պատմության նշանակալի իրադարձություններից էր: Մի քանի փուլերով տեղի ունեցած գործընթացի արդյունքում աշխարհի տասնյակ երկրներից Խորհրդային Հայաստան տեղափոխվեց շուրջ 200.000 սփյուռքահայ: Դա, անկասկած, դրական և առաջադիմական երևույթ էր հայ իրականության մեջ, մեծապես նպաստեց Հայաստանի բնակչության քանակական և որակական աճին: Միայն 1946–1948 թթ. «Մեծ հայրենադարձության» արդյունքում Խորհրդային Հայաստանում բնակություն հաստատեց շուրջ 90.000 հայ: Նրանց գերակշիռ մեծամասնությունը մեծ եռանդով ներգրավվեց հանրապետության պետական շինարարության, տնտեսության վերականգման, մշակույթի, կրթության և գիտության զարգացման գործին:

Հայրենադարձության կազմակերպման և իրականացման, սփյուռքահայերի տեղավորման, աշխատանքով ապահովելու, նրանց հոգեբանական և սոցիալական խնդիրները հոգալու գործընթացում արձանագրվեցին նաև բացասական երևույթներ: Դրանք առավել ցայտուն արտահայտվեցին հատկապես «Մեծ հայրենադարձության» ընթացքում և հետագա տարիներին:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1946 թ. հունիսի 21-ին ընդունված սփյուռքահայության ներգաղթի հետ կապված գործնական միջոցառումների մասին որոշումից¹ ընդամենը օրեր անց ներգաղթողների առաջին խմբերը ժամանեցին Խորհրդային Միության: Հայրենադարձների առաջին խումբը «Տրանսիլվանիա» շոգենավով Բելյուզից դուրս էր եկել 1946 թ. հունիսի 23-ին և ժամանել Բաթումի նավահանգիստ, իսկ այստեղից գնացքներով տեղափոխվել Խորհրդային Հայաստան: Մինչև հոկտեմբերի կեսերը Լիբանանից, Սիրիայից, Իրանից, Բուլղարիայից, Հունաստանից և այլ երկրներից հայրենադարձվեց ավելի քան 50 հազար մարդ՝ նախատեսված 30–35 հազարի փոխարեն: Անմիջապես առաջացան նրանց բնակարաններով, աշխատանքով, սնունդով ապահովելու, նյութական օգնություն ցույց տալու և այլ խնդիրներ, պարզ էր, որ իշխանություններն անպատրաստ են այդ հարցերում՝ չնայած ընդունված բազմաթիվ որոշումներին: Դժվարություններն առաջին հերթին պայմանավորված էին հայրենադարձների աննախադեպ մեծ քանակով, հետպատերազմյա սոցիալ-տնտեսական, բնակչության կենցաղային ծանր պայմաններով, հայրենակիցներին ընդունելու և տեղավորելու գործում տարբեր մակարդակի իշխանությունների կողմից թույլտրված լուրջ թերություններով, նաև՝ ակնառու սխալներով: Ուստի հայրենադարձվածների որոշ մասի մոտ հասկանալի դժգոհություններ առաջացան, որոնք արտահայտվեցին ինչպես բազմաթիվ հիասթափություններով, անթաքույց բողոքներով և ընդվզումներով, այնպես էլ Խորհրդային երկրից արտագաղթելու տրամադրվածություններով: Եվ քանի որ սահմանը հատելու և ար-

¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 1, ց. 26, գ. 44, թ. 175–177, գ. 45, թ. 407–410:

տասահման մեկնելու օրինական հնարավորությունները Խորհրդային երկրում գրեթե իսպառ բացառված էին, ուստի հայրենադարձների կողմից արտագաղթելու միակ հնարավորությունը սահմանը գաղտնի անցնելու փորձն էր՝ սահմանախախտումը:

Հայրենադարձների կողմից Խորհրդային պետական սահմանը խախտելու փորձեր արձանագրվեցին «Մեծ հայրենադարձության» առաջին իսկ փուլում: Ֆրանսիայից 1947 թ. ներգաղթած Ժան Կյուրեղյանն իր հուշերում պատմում է, որ որոշ հայրենադարձներ, հիմնականում երիտասարդ, փախուստի առաջին փորձերը կատարում էին նախքան Հայաստան հասնելը՝ Բաթումի նավահանգստից, քանի որ Բաթումը մոտ էր Թուրքիայի սահմանին. «Ջահելների մեջ արդեն Բաթումում վերադարձի ցանկություն եղավ: Մի խումբ՝ գետինը նստած, ժողով էին անում, որոշեցին սահմանը անցնեն: Եվ բոլորը ծովը նետվեցին: Իհարկե, դրանց բոլորին բռնեցին: Բարեբախտաբար, չպատժեցին: Մի քանի հոգի թաքնվեցին նավի մեջ, որ Եվրոպա վերադառնան, բայց բոլորին բռնեցին, ուղարկեցին Հայաստան»: Կյուրեղյանը նշում է, որ սկզբնական շրջանում փախուստի համար նախատեսված պատիժը սիմվոլիկ էր, սակայն տարիների ընթացքում այն խստացվեց: 1948–1949 թթ. 10 տարով ազատազրկվածները համարվում էին հայրենիքի դավաճաններ: Երևանի բանտերը շուտով լցվեցին փախուստի դիմած հայրենադարձներով (մեծամասամբ Լիբանանից և Սիրիայից եկածներով)»²:

Այդուհանդերձ, հայրենադարձների կողմից սահմանը խախտելու փորձերը հիմնականում իրականացվում էին Խորհրդային

² Տե՛ս Joan V. Gureghian, My fathers destiny The Golgotha of Armenia Minor an eye Witness account of Armenian genocide, London 2015, p. 80: <http://hayrenadardz.org/hy/lifestory/jean-kyureghian>

Հայաստանի տարածքից՝ ԽՍՀՄ-ի խորհրդա-իրանական և խորհրդա-թուրքական սահմաններից:

ՀԿ(Բ)Կ Երքադկոմի քարտուղար Բ. Աստվածատրյանին 1946 թ. նոյեմբերի 12-ին ուղղված «Հատուկ հաղորդագրությամբ» ՀԽՍՀ ներքին գործերի նախարարի տեղակալ, միլիցիայի երրորդ աստիճանի կոմիսար Հակոբովը տեղեկացնում է, որ 1946 թ. հոկտեմբերի 27-ին ՆԳՆ Մեղրիի պետական սահմանային հատվածը սպասարկող թիվ 6 ուղեկալի սահմանապահ կարգախումբը խորհրդա-իրանական սահմանագոտու Մեղրիի հատվածում գտնվող երկաթգծային մի անբնակ տնակում հատնաբերել և ձերբակալել է երեք քաղաքացիների³: Նրանք են. Բեյրութից ներգաղթած Երևանի բնակիչներ Հայկ Մուշեղի Զաքարյանը (ծնվ.՝ 1928 թ. Արթենիկ քաղաքում (Հունաստան), կրթությունը՝ հնգամյա, մասնագիտությունը՝ ժամագործ, չի աշխատում, անկուսակցական, չամուսնացած, չդատված: Երևանում ապրում են. հայրը՝ Մուշեղ Զաքարյանը, մայրը, երկու մանկահասակ եղբայրները՝ Հակոբը և Մկրտիչը: Բեյրութում ապրում են. հարազատ քույրը՝ Վեհանուշը, հորեղբոր տղան՝ Կարապետ Զաքարյանը և քեռին՝ Պեկրոս Սիմիդյանը), Մեսրոպ Ղազարի Մեսրոպյանը (ծնվ.՝ 1927 թ. Դամասկոսում (Սիրիա), կրթությունը՝ վեցամյա, մասնագիտությունը՝ փականագործ, չի աշխատում, անկուսակցական, չամուսնացած, չդատված: Երևանում ապրում են. հայրը՝ Ղազար Մեսրոպյանը, մայրը՝ Մաքրուհին, եղբայրները՝ Միսակը, Օնիկը, Զոգեֆը և քույրը՝ Վանուհին: Բեյրութում ապրում են. քեռին՝ Ասատուրը, մորաքույրը՝ Մուսադինը), Սիմոն Գյուլբանկի Դեմուրյանը (ծնվ.՝ 1927 թ. Թուրքիայի Հանրապետությունում, կի-

սագրագետ, մասնագիտությունը՝ արհեստավոր, չի աշխատում, անկուսակցական, չամուսնացած, չդատված: Երևանում ապրում են. հայրը՝ Գյուլբանկ Դեմուրյանը և մայրը՝ Մանիկը):

Հետաքննության ընթացքում պարզվել է, որ ձերբակալվածները հաճախակի հանդիպել են Երևանի կոլտնտեսական շուկայում, դժգոհել ծանր ապրելակերպից: Հ. Զաքարյանը մասնավորապես նշել է, որ «Մինչև մեր գալը Երևան, Բեյրութում մեզ պատմում էին, որ ԽՍՀՄ-ում ամեն ինչ կա, և երբ մենք գանք Երևան, ապա ապահովված կլինենք ամեն ինչով, իսկ իրականում մենք ապահովված չէինք, և երբ հայտնվեցինք տնտեսական ծանր պայմաններում, ես մտադրվեցի վերադառնալ Լիվան...»⁴:

Ձերբակալվածները հետաքրքիր մանրամասներ են ներկայացնում պետական սահմանը խախտելու փորձի մասին: Ըստ նրանց՝ նախապես իրենք ցանկացել են Իրանի սահմանն անցնել Ադրբեջանի սահմանամերձ հատվածից: Այդ նպատակով 1946 թ. հոկտեմբերի 20-ին գնացքով հասել են Բաքու, որտեղից փորձել են մեկնել Լենքորան: Բայց քանի որ գնացքի տոմսեր ձեռք բերելու համար անցաթուղթ է պահանջվել, ուստի որոշել են հասնել մինչև Սալյան և այնտեղից անցնել Լենքորան: Հոկտեմբերի 23-ին Հ. Զաքարյանին ի վերջո հաջողվում է մի ադրբեջանցու միջոցով գնացքի տոմս ձեռք բերել և հասնել Լենքորան: Այստեղ Զաքարյանը համոզվում է, որ իր երկու ընկերների համար դժվար կլինի հասնել Լենքորան, ուստի վերադառնում է Սալյան և առաջարկում Մեսրոպյանին ու Դեմուրյանին ուղևորվել դեպի Հայաստան, իրականացնել սահմանի անցումը Մեղրիի կամ Զուլֆայի երկաթուղային կայարանի հատվածից: Հա-

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 157, ց. 25, գ. 469, թ. 117-118:

⁴ Նույն տեղում:

մածայնվելով Զաքարյանի առաջարկի հետ, ընկերները որոշում են նստել խորհրդա-իրանական սահմանի երկայնքով Արաքս գետի հունով ուղևորվող գնացքի վերջին վագոնը, հարմար պահի ցատկել գնացքից և լողալով անցնել Արաքսի իրանական ափը: Սակայն Արաքսում ջրահեղձ լինելու իրական վտանգը հետ է պահում ընկերներին գետը լողալով անցնելու մտադրությունից, ուստի որոշում են ոտքով շարժվել դեպի Մեղրի: Հոկտեմբերի 27-ի առավոտյան խումբը հասնում և պատսպարվում է Մեղրիի սահմանապահ պարետատան հատվածում գտնվող երկաթգծի մի անբնակ տնակում՝ մութն ընկնելուն պես սահմանն անցնելու մտադրությամբ: Սակայն, ինչպես նշվեց, այստեղ եռյակը հայտնաբերվում և ձերբակալվում է սահմանապահ կարգախմբի կողմից: Խուզարկությամբ Մեսրոբյանի մոտ հայտնաբերվում է 150 ամերիկյան դոլար և ոսկու արժույթով 33 ռուբլի, իսկ Զաքարյանի և Դեմուրյանի մոտ արժեքավոր ոչինչ չեն գտնում: Հետաքննության արդյունքում եռյակը ամբողջությամբ ընդունում է մեղքը և պետական սահմանը խախտելու փորձի մեղադրանքով հանձնվում դատարանին⁵:

1946 թ. նոյեմբերին խորհրդա-իրանական պետական սահմանը խախտելու փորձ է կատարել նաև Իրանից Հայաստան ներգաղթած մեքենավար Արտավազը Մանսուրյանը, ինչի համար դատապարտվել է մեկ և կես տարվա ազատազրկման: Պատիժը կրելուց հետո էլ Մանսուրյանը չի հրաժարվել իր մտադրությունից, և «դժգոհ լինելով սովետական կարգերից, իր շրջապատի անձանց մեջ սխտեմատիկաբար տարել է հակասովետական ագիտացիա, գովաբանել է կապիտալիստական

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 157, ց. 25, գ. 469, թ. 118–120: Այս գործով դատարանի որոշումը հայտնաբերել չի հաջողվել:

երկրների կյանքի պայմանները և կարգերը...»: Այս մեղադրանքով 1950 թ. դեկտեմբերի 11-ին դատարանը Մանսուրյանին դատապարտել է արդեն 8 տարի ազատազրկման⁶:

Հայրենադարձների կողմից սահմանախախտման փորձեր առավել շատ կատարվում էին պետական սահմանի խորհրդաթուղթական հատվածում: Սահմանը հատելու նպատակով Հայաստանի տարբեր շրջաններից ու քաղաքներից տասնյակ հայրենադարձներ նախապես բնակություն էին հաստատում Լենինականում (Գյումրի) և շրջանում բնակվող իրենց բարեկամների կամ ծանոթների մոտ:

ՀԽՍՀ ներքին գործերի նախարարության Լենինականի քաղբաժնի պետ մայոր Զալաբովի կողմից ՀԿ(Բ)Կ Լենինականի քաղկոմի քարտուղար Ա. Սավոյանին 1947 թ. հունվարի 29-ին ուղղված զեկուցագրից տեղեկանում ենք, որ Թուրքիա անցնելու նպատակով 1946–1947 թթ. դեկտեմբեր-հունվար ամիսներին Լենինական են տեղափոխվել Երևանի բնակչուհի Սառա Հովակիմյանը, Հոկտեմբերյանի շրջանի բնակիչ Սարգիս Սարգսյանը, Կիրովականի բնակիչ Խ. Կարա-Հակոբյանը՝ ամբողջ ընտանիքով, և այլք: Վերջիններս, նախապես վաճառելով կամ փոխանակելով իրենց ունեցվածքը և տեղափոխվելով Լենինական, այստեղ ծավալում են նախապատրաստական աշխատանքներ: Առաջին հերթին փնտրում և գտնում համախոհների, այնուհետև՝ սահմանամերձ գյուղերում բնակվող մուսուլման բնակիչների, որոնք կհամաձայնվեին օժանդակել սահմանը բարեհաջող խախտելուն:

⁶ Տե՛ս Մանուկյան Ա., Զաղաքական այլախոսությունը Հայաստանում 1950–1988 թթ., Ե., 2005, էջ 7–8:

Օրինակ, վերը հիշատակված Սառա Հովակիմյանին և նրա գյումրեցի ընկերոջը՝ Սուրեն Իսկանդարյանին, Թուրքիայի հետ պետական սահմանն անլեգալ անցնելու համար միանում է Լենինականի բնակիչ Աբգար Օրույանը ընտանիքով. կնոջ՝ Ազնիվի և աղջիկներ՝ Նվարդի և Մերիի հետ: Խումբը որպես ուղեկցող վարձում է Ամասիայի Մաղարաջուղ գյուղի բնակիչ Ախմետալի-Օղլի Ախունդովին, որը սահմանը անցկացնելու համար յուրաքանչյուրից պահանջում և ստանում է 4000-ական ռուբլի վարձատրություն: Սահմանախախտների խումբը, սակայն, 1946 թ. դեկտեմբերի 7-ին երեկոյան ժամը 8-ին ճանապարհին հայտնաբերվում և ձերբակալվում է⁷:

Սահմանը խախտելու նախապատրաստական աշխատանքների փուլում հայտնաբերվել են նաև Լենինականի բնակիչներ-գաղթածներ Գրիգոր Թովմասյանը, Ստեփան Մուշարյանը, Ախուրյանի շրջանի Օճախլու գյուղում բնակվող վերջինիս բարեկամ Գարեգին Մուշարյանը և այլք:

Վերը նշված զեկուցագրից տեղեկանում ենք նաև, որ Լենինականից անհայտացել են քաղաքի բնակիչ-հայրենադարձներ Աբրահամ Հարությունի Համամջյանը և Գրիգոր Մովսեսի Կիպինջյանը, որոնց գտնվելու վայրը հայտնի չէ⁸: Վերջիններիս, հավանաբար, հաջողվել է խախտել խորհրդա-թուրքական սահմանը: Դրա մասին է վկայում Բեյրութից հայրենադարձված Լենինականի մանածագործական ֆաբրիկայի աշխատակից Գրիգորի (ազգանունը հայտնի չէ) վկայությունը պատկան մարմիններին: Հարցաքննության ընթացքում խոստովանելով, որ հնարավորություններ է փնտրել Թուրքիայի սահմանն անցնելու համար,

Գրիգորը հայտնել է, որ ծանոթ է եղել համաքաղաքացիների, «որոնք արդեն ունեցել են փախուստ դեպի Թուրքիայի սահմանը. ինչ-որ Գրիգոր Կիպինջյան և Աբրահամ Համամջյան, որոնց հետ պետք է նա փախուստ կատարեր, բայց նրանք գնացել էին անսպասելի՝ չսպասելով նրան»⁹:

Հայրենադարձների կողմից պետական սահմանը խախտելու դեպքեր արձանագրվեցին նաև 1947 թ. սկզբին: Այսպես, մարտի 8-ին ՀԿ(Բ)Կ քարտուղար Միքայելյանին ուղղված զեկուցագրում ԽՍՀՄ ՆԳՆ Հայաստանի օկրուգի սահմանապահ զորքերի պետ գեներալ-մայոր Պրուսսկին տեղեկացնում է, որ հետախուզական տվյալներով հաստատվել է, որ 1947 թ. մարտի 1-ին «Հոկտեմբերյանի նո. 4 և նո. 6 խորհրդատեսության բնակիչներ Սամվել Շահգեղյանը, Պետրոս Բադուրյանը, Հովհաննես Չվիկյանը և Աբրահամ Մարկարյանը փորձել են խախտել Հոկտեմբերյանի շրջանի պետական սահմանը (39-րդ և 40-րդ սահմանապահ ուղեկալների սահմանագծում), սակայն չկարողանալով հաղթահարել գետը, հետ են վերադարձել»: Մարտի 2-ին, Լենինականից չորս կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, Թուրքիա փախչելու փորձ կատարելիս ձերբակալվել են Լենինական քաղաքի բնակիչ-հայրենադարձներ Վրոպան Ալմասահակյանը, Սամվել Վայրազյանը, Խաչիկ Բայրազյանը և Գրիգոր Ղուկասյանը: Մարտի 4-ին Ախուրյանի շրջանի Բաջիօղլի գյուղից Թուրքիա փախչելու փորձ կատարելիս ձերբակալվել են Լենինական քաղաքի բնակիչ-հայրենադարձներ Նազար Չերխեզյանը և Պարզև Կալինջյանը: Մարտի 7-ին Կարակալինսկի չորրորդ տեղամասի սահմանապահ ուղեկալի սահմանագոտում ձերբակալ-

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 474, թ. 8–13:

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 13:

⁹ Նույն տեղում, թ. 43:

վել են հայրենադարձներ Ասատուր Սիպկունյանը և Կարապետ Անտոնյանը¹⁰:

Ընդհանուր առմամբ. «Մեկ տարվա ընթացքում՝ մինչև 1947 թ. հունիս ամիսը, Թուրքիայի հետ սահմանը խախտում և մյուս կողմն է անցնում 21 մարդ, իսկ 110 հոգի ձերբակալվում է այդպիսի փորձ կատարելիս»¹¹:

Հայրենադարձների կողմից սահմանը խախտելու հաճախակի դարձած դեպքերը կանխելու նպատակով Հայաստանի կուսակցական և խորհրդային իշխանությունները ոչ միայն փորձում էին բարելավել նրանց կենցաղը, սոցիալական վիճակը, այլև ձեռնարկում էին կանխարգելիչ միջոցառումներ ՀԽՍՀ սահմանամերձ շրջանների սահմանային ռեժիմն ամրացնելու նպատակով: Այսպես, ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն 1947 թ. մայիսի 16-ի որոշումով լրացումներ է կատարում նույն թվականի ապրիլի 17-ի՝ «Հայրենադարձների շրջանում աշխատանքի ուժեղացման միջոցառումների մասին», կենտկոմի բյուրոյի որոշման մեջ: Ըստ այդմ՝ «որոշվում է.

1. Մեկամսյա ժամկետում անբարեհոյս հայրենադարձներին բնակեցնել հեռավոր շրջանների բնակեցված գյուղերում: Հետագայում նրանց թույլ չտալ բնակություն հաստատել սահմանի հինգ կիլոմետր երկարության տարածքում:

2. Պարտավորեցնել ՀԽՍՀ Ներքին գործերի նախարարությանը և Պետանվտանգության նախարարությանը՝ ներկայացնելու այն անձանց ցուցակները, որոնք բնակվում են սահմանամերձ շրջաններում և քաղաք Լենինականում, որոնք խախտել

են սահմանամերձ գոտին և ունեն հետ վերադառնալու տրամադրվածություն՝ հանրապետության հեռավոր բնակավայրեր տեղավորելու պատճառով:

3. Սահմանամերձ շրջանների ռեժիմը ամրացնելու նպատակով անհրաժեշտ է խորհրդային Միության խուլ անկյուններում բնակեցնել անձանց՝ Հայաստանի հիմնական բնակիչներով, որոնք ապրում են սահմանամերձ շրջանում և մեղադրվել են լրտեսությանը աջակցելու և անցյալում մասնակից են եղել ավազակային խմբավորումների ձևավորմանը, օժանդակել են պետական սահմանը խախտելու մեջ, որոնք ունեն արտագաղթելու տրամադրվածություն և ունեն բարեկամական կապեր Թուրքիայի սահմանամերձ գյուղերում: Պարտավորեցնել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին հարց դնել Միության կառավարության առջև՝ թույլատրելու վերաբնակեցնել Միության շրջանների խորքերում անձանց՝ Հայաստանի սահմաններից հեռու՝ 300-350 մարդ քանակով:

4. Սահմանամերձ ռեժիմը ամրացնելու համար կուսակցական, խորհրդային կազմակերպություններին և սահմանամերձ շրջանների բնակչությանն ու սահմանապահ զորքերին օգնելու նպատակով մինչև ս.թ. հունիսի 1-ը անցկացնել կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների և, իհարկե, կոլտնտեսականների հետ միասին ժողով, որտեղ մանրամասն պետք է քացատրել սահմանամերձ ռեժիմի ամրացման խնդիրները, քարձրացնելով աշխատավորների զգոնությունը պետական սահմանի պահպանության հարցում և չթույլատրել սահմանային ռեժիմի խախտումներ:

5. Պարտավորեցնել Ներքին գործերի նախարարությանը տասնօրյա ժամանակաընթացքում մշակել և ներկայացնել

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 56, թ. 153:

¹¹ Հայոց պատմություն. հ. IV, գիրք երկրորդ. նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ.), Ե., 2016, էջ 96:

ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ՝ քաղ. երևանի և քաղ. Լենինականի անձնագրային և սահմանապահական ռեժիմի ամրացման միջոցառումներ:

6. Մայիսի 20-ին հրավիրել խորհրդակցություն շրջկոմների և սահմանամերձ շրջանների գործկոմների նախագահների մասնակցությամբ՝ սահմանապահ ռեժիմը ամրացնելու հարցով և բնակչության շրջանում քաղաքական աշխատանքներ տանելու նպատակով:

7. Պարտավորեցնել Նախարարների խորհրդին և վերաբնակեցմանը կից հայրենադարձներին սննդամթերքով և արդյունաբերական ապրանքներով օգնություն ցույց տալու ֆոնդի բաշխման վարչությանը, սահմանամերձ շրջաններում տեղաբաշխված հայրենադարձներին առավել հնարավորություն տալ¹²:

Ի կատարումն այս որոշման՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1947 թ. մայիսի 22-ի և հունիսի 9-ի համապատասխան որոշումներով մինչև 1947 թ. հունիսի 10-ը հայ-թուրքական և հայ-իրանական սահմանամերձ գոտուց հանրապետության խորքեր վերաբնակեցվում են հայրենադարձված 194 ընտանիք, այդ թվում. Հոկտեմբերյանի շրջանից՝ 29, Հագինի՝ 57, Թալինի՝ 1, Էջմիածնի՝ 17, Բերիայի անվան շրջանից՝ 5, Արտաշատի՝ 19, Վեդու՝ 11, Ախուրյանի՝ 12, Մեղրիի՝ 6, Արթիկի՝ 1 և Լենինական քաղաքից՝ 36 ընտանիքներ: Իրականացվում է նաև 34 «անբարեհույս» ընտանիքների վերաբնակեցում սահմանամերձ շրջաններում՝ սահմանային գոտուց 5 կիլոմետր դեպի խորքը բնակեցված վայրեր: Հայաստանում իրականացված այս միջոցառումներ

րի մասին ՀԿ(Բ)Կ քարտուղար Գ. Հարությունյանը հայտնում է Մոսկվա՝ ՀամԿ(Բ)Կ կենտկոմ¹³:

1947 թ. սեպտեմբերի 30-ին ՀամԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Ի. Ստալինին ուղղված հերթական ընդարձակ զեկուցագրում Գ. Հարությունյանը նշում է, որ 1947 թ. երկրորդ կեսից սահմանային ռեժիմի խախտումները և պետական սահմանն անցնելու փորձերը Խորհրդային Հայաստանում նվազման միտում ունեն: «Դա կապված է մի կողմից՝ հայրենադարձների շրջանում տարվող քաղաքական աշխատանքների բարձրացման շնորհիվ, վերացնելով նրանց կենցաղային և աշխատանքի տեղավորման թերությունները, իսկ մյուս՝ սահմանապահ ռեժիմի խստացմամբ և 223 հայրենադարձ ընտանիքների վերաբնակեցմամբ»¹⁴:

1947 թ. կեսերից իրավիճակը հանրապետությունում թեև որոշ բարելավվեց, այդուհանդերձ, հայրենադարձների կողմից սահմանը խախտելու փորձեր շարունակվում էին արձանագրվել: Այսպես, Անդրկովկասյան ռազմական երկաթգծի Լենինականի ճաժանմունքի պետ կապիտան Գալուստովի կողմից ՀԿ(Բ)Կ Լենինականի քաղկոմի քարտուղար Ա. Սավոյանին 1947 թ. հուլիսի 19-ին ուղղված զեկուցագրում նշվում է, որ անբարեհույս հայրենադարձների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սահմանը գաղտնի խախտելու հնարավորություններ են ունենում Լենինականի բնակիչ-հայրենադարձներ Սարգիս Դեմիրճյանը, Ավետիս Ավետիսյանը, Պետրոս Տեմպեյանը, Հովհաննես Գասպարյանը, Աբրահամ Քեշմիշյանը և Պոլ (Պողոս) Կիրուզյանը: Վերջինիս հետ կապված նշվում է, որ նա «Լենինականի տեքստիլ կոմբինատի նախկին աշխատակից է, այժմ ապ-

¹² ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 26, թ. 16:

¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 76–80:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 100–105:

րում է Ստեփանավանի շրջանում: Գալով Լենինական քաղաք ասել է, որ ինքը մի եկվորի՝ Մովսես Սանթրոյանի հետ մտադրվել է արտասահման անցնել, և որ Մովսեսին ձերբակալել են, իսկ իրեն այդ տրամադրվածության պատճառով Լենինականից աքսորել են Հայաստանի խորքերը՝ Ստեփանավանի շրջան: Սակայն այդ չի փոխել իր տրամադրվածությունը արտասահման փախչելու համար, և ինքը փնտրում է նոր ուղիներ այն իրականացնելու համար»¹⁵:

1947 թ. նոյեմբերի 7-ի, լույս 8-ի գիշերը խորհրդա-թուրքական սահմանի 14-րդ և 15-րդ սահմանապահ ուղեկալների հատման կետում սահմանապահների կողմից հայտնաբերվում և ձերբակալվում է սահմանախախտների մի խումբ, որը շտապել էր դեպի թուրքական սահմանը: Պարզվել է, որ նրանք են. Եգիպտոսից հայրենադարձված Կարապետ Կարապետյանը և ազգությամբ հույն Ժան Իսակի Թաթարուգյադինը: Վերջինս Հայաստան էր տեղափոխվել քրոջ հետ, որն ամուսնացած էր հայրենադարձ եգիպտահայի հետ: Վերջիններիս ցուցմունքներից պարզվում է, որ Լենինականում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առթիվ կազմակերպված նոյեմբերի 7-ի շքերթից հետո նրանք ուղղվել են դեպի շուկա, որտեղ հանդիպել են Բեյրութից հայրենադարձված ոմն Օհաննես-Հովհաննեսի հետ: Վերջինս մտերմիկ գրույցի ժամանակ տեղեկացրել է, որ մտադիր է վերադառնալ Լիբանան, իսկ Կարապետյանը և Թաթարուգյադին ցանկություն են հայտնել վերադառնալ Եգիպտոս: Վերջիններս շուկայում հանդիպել և նույն խնդրի շուրջ գրուցել են երեք այլ հայրենադարձների՝ Հարությունի, Պողոսի և Վազգենի հետ, որոնք

նույնպես համաձայնվել են միանալ: Երբ վեց հոգանոց խումբը հավաքվել է, Հովհաննեսը հայտարարել է, որ ինքը ծանոթ է մի տղայի, որը նույնպես կարող է միանալ իրենց, և բոլորին տարել է մի տուն ու այնտեղից կանչել ոմն Աբրահամ-Համբարձումի, որը միացել է իրենց: Մինչ փախուստի դիմելը խումբը այցելել է ռեստորան, որտեղ «լավ կերել խմել է»: Այնուհետև, Հովհաննեսի խորհուրդով, ժամը 16.00-ին երկաթգծի ճանապարհով խումբը ոտքով շարժվել է դեպի Բայանդուր կայարան: Այստեղից սահմանախախտները ուղղվել են դեպի Թուրքիայի սահմանը, սակայն ճանապարհին հայտնաբերվել են սահմանապահ կարգախմբի կողմից: Սահմանապահները լուսավորում են տարածքը հրթիռով և նախազգուշական կրակ բացում սահմանախախտների ուղղությամբ: Վերջիններս վախեցած ու շփոթված փախչում են տարբեր ուղղություններով: Որոշ ժամանակ անց սահմանի Մուլա-Մուսա գյուղի շրջանում սահմանախախտներից մի քանիսը՝ Երևանի բնակիչ Սարգիս Վարուջյանը, Լենինականի և շրջանի բնակիչներ Կարապետ Կարապետյանը, Հարություն Կարապետյանը, Արամ Իջիջյանը և Ժան Թաթարուգյադինը ձերբակալվում և ուղղեկցվում են սահմանապահ ուղեկալ:

Լուսադեմին դեպքի վայրը զննելուց հետո սահմանապահները պարզում են, որ հինգ հոգու, այդուհանդերձ, հաջողվել է հատել սահմանը: Սահմանախախտներն էին՝ 1947 թ. օգոստոսին Լիբանանից խորհրդային Հայաստան ներգաղթած Օհաննես Կարապետի Քամքարյանը, Ֆրանսիայից 1947 թ. սեպտեմբերին ներգաղթած Պողոս Պետրոսի Տաշյանը և Վարդգես-Վազգեն Սարգիսի Ջաքարյանը, նույն թվականի սեպտեմբերին Եգիպտոս-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 474, թ. 42-43:

սից ներգաղթած Հարություն Հայկի Երանյանը և Համբարձում Կարապետի Թորիկյանը¹⁶:

Հայրենադարձների խմբի կողմից սահմանախախտման փաստը քննարկման առարկա է դառնում ՀԿ(Բ)Կ Լենինականի քաղկոմի բյուրոյի 1947 թ. նոյեմբերի 10-ի նիստում: Քաղկոմի բյուրոն մասնավորապես որոշում է. հայրենադարձներին աշխատանքով և սնունդով չապահովելու, նրանց համար բնակարանային, կենցաղային բարվոք պայմաններ չստեղծելու համար պատժել որոշ պատասխանատու ղեկավարների: Լենինականի քաղխորհրդի նախագահ Գ. Գյոդակյանին հանձնարարվում է ուշադրության կենտրոնում պահել հայրենադարձների բնակարանային, կենցաղի, աշխատանքի և այլ խնդիրները, քաղդաստիարակչական աշխատանք ծավալել հատկապես երիտասարդ հայրենադարձների շրջանում. նրանց ընդունել կոմերիտմիության շարքերը և այլն¹⁷:

Սահմանը խախտելու հերթական փորձի մասին տեղեկանում ենք ԽՍՀՄ ՆԳՆ Հայաստանի օկրուգի սահմանապահ զորքերի պետ գեներալ-մայոր Պրոսպերի կողմից 1948 թ. հունվարի 14-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին ուղղված զեկուցագրից: Պրոսպերին հայտնում է, որ 1947 թ. դեկտեմբերի 23-ին սահմանապահ կարգախումբը խորհրդա-թուրքական սահմանին ձերբակալել է սահմանախախտ հայրենադարձներ Էջմիածնի բնակիչներ Մովսես Շահինյանին և Կարապետ Թաստանյանին¹⁸:

Խորհրդային Հայաստանում պետական սահմանի հաճախակի դարձած խախտումների հարցին անրադառնում է ԽՍՀՄ դատախազությունը: «Արդյունքների մասին ՀամԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Ժդանովին ներկայացրած զեկուցագրում ԽՍՀՄ գլխավոր դատախազ Կ. Գորշենինը նշում է, որ 1946–1947 թթ. սահմանն անցնելու փորձի համար կալանավորվել է 286 մարդ, որոնք ցուցմունքներում իրենց քայլը հիմնականում պայմանավորել են բնակարանային-կենցաղային վատ պայմաններով»¹⁹:

Կ. Գորշենինի զեկուցագիրը դարձավ ինչպես ՀամԿ(Բ)Կ կենտկոմի, այնպես էլ ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա: ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն 1947 թ. նոյեմբերի 14-ին ընդունեց «Հայաստան վերադարձած արտասահմանյան հայերի աշխատանքային, բնակարանային, նյութական-կենցաղային հարցերի կարգավորման գործում եղած թերությունների վերացման միջոցառումների» ծրագիր²⁰: Իսկ 1947 թ. դեկտեմբերի 25-ի նիստում քննարկելով ՀԽՍՀ ՆԳՆ սահմանապահ զորքերի և սահմանների պահպանության խնդիրը, ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն որոշում է պետական սահմանի պահպանությունը ամրացնելու նպատակով հանձնարարել ՀԽՍՀ Նախարարների խորհրդին Թալինի, Վեդիի և Հոկտեմբերյանի շրջանների խորհրդա-թուրքական սահմանի որոշ հատվածներում տեղադրել Երևանի կոմպրեսորային գործարանում պատրաստված ազդանշանային տարբեր հարմարանքներ, նաև՝ երկաթբետոնե ցցեր և այլն²¹:

Հայրենադարձների նկատմամբ պետության ուշադրությունը թեև տարեցտարի աճում էր, իսկ սահմանի ամրապնդումը՝ ուժե-

¹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 475, թ. 9–17:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 28, գ. 95, թ. 28:

¹⁹ Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ. նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.), էջ 96: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 28, գ. 60, թ. 207:

²⁰ Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 33, թ. 79, գ. 34, թ. 45–49:

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 37, թ. 122:

ղացվում, այդուհանդերձ, սահմանը խախտելու դեպքերը շարունակվեցին նաև հետագա տարիներին: Միայն 1948 թ. առաջին կեսին սահմանը խախտելու փորձ կատարելիս հայտնաբերվել է մի քանի տասնյակ հայրենադարձ, 14-ին հաջողվել է անցնել սահմանը: 1949 թ. հունվար-օգոստոս ամիսներին սահմանն անցնելու փորձ է կատարում 168 հայրենադարձ²²:

Հայրենադարձների կողմից սահմանախախտումների մասին հետաքրքիր տեղեկություններ ենք հանդիպում ոչ միայն պաշտոնական փաստաթղթերում և նյութերում, այլև հայրենադարձների հուշերում: Այսպես, 1947 թ. ԱՄՆ-ից ներգաղթած Փոլ Անթառամյանը, որին հետագայում հաջողվել է վերադարձալ ԱՄՆ և հաստատվել Ֆրեզնոյում, նշում է. «Մենք՝ տարբեր երկրներից եկած երիտասարդներս, գտնում էինք իրար, կյանքն անց կացնելու միջոցներ էինք փնտրում: Շատերն էլ փախչելու միջոցներ էին մտածում՝ գնացքից թոչել ու Արաքսով անցնել Թուրքիա: Ես ու եղբայրս էլ էինք մտածում փախչել, բայց հրաժարվեցինք այդ մտքից: Թեկուզ ծնողքիս Հայաստանի վատ վիճակի մասին լուր էինք ուղարկել, բայց 100 տոկոսով գիտեինք՝ ինչ էլ գրենք, հայրս կգա»²³:

1947 թ. հայրենադարձված Հակոբ Ճղյանը իր հուշերում պատմում է, թե ինչպես Վեդիի շրջանի հայրենադարձ բնակիչներից մեկը, որը նախկինում եղել է գինվորական, Հայաստանում չի հարմարվել գյուղական կյանքին և որոշել է արտագաղթել: Ըստ Ճղյանի՝ այդ նպատակով նա ծանոթացել է իրենց գյուղում բնակվող մի թուրքի հետ, որը ոսկյա ժամացույցի դիմաց

օգնել է նրան խախտել խորհրդա-թուրքական սահմանը Նորաշենի հատվածում: Հետագայում, որպես քուրդ մուրացկան, հայրենադարձ-սահմանախախտը տեղափոխվել է քաղաքից քաղաք և, ի վերջո, անցել նաև թուրք-սիրիական սահմանը, որը բաց էր լինում կիրակի օրերին, վեց ժամով՝ առևտուր անողների համար²⁴:

1947 թ. Հալեպից հայրենադարձված Մարտիրոս Վարդանյանը պատմում է իր և ընկերոջ փախուստի պլանավորման և իրագործման մանրամասների մասին: Երբ երկար քննարկումներից հետո նրա ընտանիքը, ի վերջո, հրաժարվում է սահմանը խախտելու մտադրությունից, Մարտիրոսը փորձում է այն իրականացել իր մանկության ընկերների՝ Հալեպի Կրթասիրաց դպրոցի սաների հետ: Որոշված պլանի համաձայն. նրանք «նստելու էին Բաքու տանող գնացքի մեջ: Ընթացքի ժամանակ վայր էին նետվելու և հավաքվելով մի տեղում, գնալու էին սահմանագիծ»: Սակայն փախուստի պահին Մարտիրոսը հրաժարվում է իր որոշումից: Նա պատմում է. «Ծնկներս սկսեցին դողալ: Այդ պահին ինձ հալածել սկսեցին սուգի մատնված ընտանիքիս՝ հորս, մորս, քույրերիս և եղբայրներիս, վշտահար դեմքը»: Նրա երկու ընկերներից մեկին բռնում են հենց սահմանի վրա, մյուսին՝ հաջողվում է փախչել²⁵:

Սոնա-Մարիան Մարիկյանը հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում 1947 թ. Ալեքսանդրիայից (Եգիպտոս) Հայաստան ներգաղթած իր ծնողների՝ Ժոզեֆ և Սոնյա Մարիկյանների, առօրյա ծանր կյանքից, նաև՝ արտասահման փախչելու փորձերի

²² Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ. նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.), էջ 97: Տե՛ս նաև՝ ՀԱՄ, ֆ. 1, ց. 28, գ. 43, թ. 60:

²³ <http://www.hayrenadardz.org/hy/lifestory/paul-antaramian>

²⁴ Տե՛ս Ճղյան Հ., Չափված ըմբոստության ուշացած խոստովանանք (վավերագրական ակնարկներ և ճանապարհորդական նյութեր), Ե., 1994, էջ 31–33:

²⁵ Տե՛ս Վարդանյան Մ., Խորտակված երագների արահետներով, Լոս Անջելես, 1992, էջ 46–48:

մասին: Մարիկյանը գրում է. «...Ժողեֆը Սոնյային հաղորդեց իր ծրագրերը: Մեր միակ փրկությունը այս երկրից փախչելն է: Ես արդեն ծրագիր ունեմ կազմած, որոշել եմ Հայաստանի հարավային կողմերը երթալ: Էնտեղ կիմանամ մաքսանենգերի հետ Իրանի սահմանն անցնելու կարելիությունը: Դու երեխաների հետ կմնաս, հարցնողներին կասես գնացել եմ աշխատանք փնտրելու: Եթե հարավից հնարավոր չլինի, Սովետական Միության արևմուտք և հյուսիս՝ Էստոնիա, Ուկրաինա, Մոլդովիա կգնամ»:

Երեք օրից Ժողեֆը վերադարձում է Երևան: Հայաստանի հարավում նրան խորհուրդ էին տվել Ադրբեջանի կամ Թուրքմենիայի կողմերում փորձել իրականացնել սահմանը հատելու իր փորձը: Սակայն Ժողեֆը նախընտրում է մեկնել «Սովետական Միության արևմուտք», սկսում է Էստոնիայից: Այստեղ նրան հավաստիացնում են, «որ իրենց կողմից թռչունը նույնիսկ չի կարող խախտել ԽՍՀՄ սահմանը»: Երկշաբաթյա անարդյունք դեգերումներից հետո Ժողեֆը վերադարձում է Հայաստան, որոշում 1949 թ. գարնանից շարունակել սահմանն անցնելու ուղիների որոնումները՝ «այս անգամ երկրի հարավ-արևելյան կողմում»:

«1949 թ. հուլիսին արդեն փախուստի պլանը պատրաստ էր: Նրանք պետք է մեկնեին Բաքու, որտեղ Իրան մեկնող մի նավով հեռանաին: Նավապետը նշանակալի գումարի փոխարեն համաձայնվել էր գաղտնի տախտակամած վերցնել Մարիկյան ընտանիքին»: Սակայն Մարիկյաններին վիճակված չէր հատելու ԽՍՀՄ պետական սահմանը. փախուստի ճանապարհին նրանք

հայտնաբերվում են. Ժողեֆ Մարիկյանը բանտարկվում է, իսկ կինը և երեխաները տեղափոխվում են Երևան²⁶:

Այսպիսով, 1946–1948 թթ. «Մեծ հայրենադարձության» կազմակերպման և իրականացման գործընթացում խորհրդային իշխանությունների կողմից թույլտրված լուրջ թերությունների և թազմաթիվ սխալների արդյունքում հայրենադարձների որոշ մասի մոտ առաջացած հիասթափությունները և դժգոհությունները արտահայտվեցին Խորհրդային երկրից արտագաղթելու տրամադրվածություններով: Դրա միակ հնարավորությունը՝ հայրենադարձների կողմից պետական սահմանը խախտելու փորձն էր: Ոմանց դա հաջողվում է, մեծ մասին՝ ոչ:

Իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, որոնք միտված էին հայրենադարձների բնակարանային, սոցիալ-կենցաղային, աշխատանքային պայմանների բարելավմանը, նաև՝ սահմանային ռեժիմի ամրապնդմանը, հայրենադարձների կողմից սահմանախախտումների դեպքերը տարեցտարի նվազեցին: Այդուհանդերձ, հարկ է նաև հստակ արձանագրել, որ 1946–1948 թթ. Խորհրդային Հայաստան հայրենադարձված շուրջ 90.000 հայերի միայն չնչին մասը դիմեց սահմանը խախտելու ծայրահեղ քայլին:

²⁶ Տե՛ս Մարիկյան Ս.-Մ., Հույսը գորավիզ (ընտանեկան ճակատագիր), Ե., 2011, էջ 160–161, 167 և այլն:

ПРОБЛЕМА НАРУШЕНИЯ ГРАНИЦ АРМЯНАМИ-РЕПАТРИАНТАМИ В ГОДЫ «БОЛЬШОЙ РЕПАТРИАЦИИ» (1946–1948 ГГ.)

Резюме

В статье рассматривается проблема нарушения государственных границ СССР со стороны армян-репатриантов в годы «Большой репатриации» на участках советско-иранской и советско-турецкой границы.

Разочарования и недовольство, возникшие у некоторых репатриантов-армян в результате серьезных недостатков и многочисленных ошибок, допущенных советскими властями в процессе организации и осуществления «Большой репатриации» 1946–1948 гг., были выражены настроениями эмиграции из Советской страны. Единственной возможностью этого была попытка репатриантов нарушить государственную границу. Некоторым это удавалось, большей части – нет.

В результате предпринятых властями мероприятий, направленных на обеспечение репатриантов жильем и социально-бытовыми условиями, улучшение условий их труда, а также укрепление пограничного режима, случаи нарушения границ со стороны репатриантов с каждым годом уменьшались.

Тем не менее, следует также четко констатировать, что лишь незначительная часть из 90.000 армян, репатриировавшихся в 1946–1948 гг. в Советскую Армению, прибегла к крайнему шагу нарушения границы.

THE PROBLEM OF VIOLATIONS OF THE ARMENIAN-REPATRIATED BORDER DURING THE “GREAT REPATRIATION” (1946–1948)

Summary

The article examines the problem of violation of the state borders of the USSR by the Armenian repatriates during the years of the “Great Repatriation” on the sections of the Soviet-Iranian and Soviet-Turkish borders.

Disappointments and discontent that arose among some Armenian repatriates as a result of serious shortcomings and numerous mistakes made by the Soviet authorities in the process of organizing and implementing the “Great Repatriation” of 1946–1948 were expressed by the mood of emigration from the Soviet country. The only possibility of this was an attempt by the repatriates to violate the state border. Some succeeded, most did not.

As a result of measures taken by the authorities aimed at providing repatriates with housing and social-living conditions, improving their working conditions, as well as strengthening the border regime, cases of border violations by repatriates decreased year by year.

Nevertheless, it should also be clearly stated that only a small part of the 90,000 Armenians who repatriated in 1946–1948 to Soviet Armenia, resorted to the extreme step of violating the border.

վաբեր էր համարվում «բաժակի ընկերոջը» քրեական պատասխանատվության ենթարկելը⁵:

Որոշակի վերաբերմունք էր ձևավորվել նաև նոր կադրերի ընդունման և աշխատանքի ներգրավվելու հարցում: Միլիցիայի բաժանմունք եկած երիտասարդներին ոչ միայն պատշաճ կերպով չէին ընդունում, այլև տեղավորում էին բաժանմունքներում իրենց հայեցողությամբ, որոշ վայրերում (օրինակ՝ Արգավանդի շրջանում) նույնիսկ բռնություն էին կիրառում՝ չհատկացնելով բնակարաններ⁶: Խնդիրը նրանում էր, որ հետպատերազմյան շրջանում նվազել էր կրթական մակարդակը, գոյություն ուներ որակյալ կադրերի մեծ պակաս, իսկ օրգաններում աշխատել ցանկացողների թիվը բավական շատ էր: Դեպքեր էին լինում, երբ աշխատանքի ընդունելուց մի քանի օր հետո էր միայն պարզվում, որ տվյալ անձը հանցագործ է: Այդ մասին 1949 թ. հաշվետվության մեջ գրում է ներքին գործերի մինիստր Խ. Գրիգորյանը: Ամփոփելով 1948 թ.՝ նա նշում է, որ համակարգ ընդունված 622 աշխատակիցների 93,1%-ը ազատվել է հենց նույն տարում⁷: Կադրերի խնդրին հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում մանկական անօթևանության դեմ պայքարի վարչությունում: Դա երևում է 1949 թ. ՀԽՍՀ ՆԳ մինիստրի տեղակալ, գնդապետ Զախարյանի՝ Մանկական անօթևանության դեմ պայքարի վարչության պետ Բաբայանին ուղղված հանձնարարականում, որտեղ խստորեն դրվում էր կադրերի ընտրության, նրանց նկատմամբ «լիբերալ» վերաբերմունք ցույց չտալու հարցը⁸: Ուս-

տի կարելի է նաև այս ամենով պայմանավորել բաժանմունքների պետերի գործելակերպը:

Բարձրացված խնդիրների մեջ հատկապես կարևոր է շեշտել ավտոճանապարհային ոստիկանության թույլ տված խախտումները, որոնց պատճառով երբեմն կատարված հանցագործությունները մնում էին անպատիժ: Բանն այն էր, որ ԽՍՀՄ ՆԳ մինիստրության 1952 թ. № 19 հրամանի համաձայն հաշվետվությունների մեջ չէին ներառվելու այն ավտոճանապարհային պատահարները, որոնք ծանր հետևանքներ չեն ունեցել: Սակայն աշխատակիցները շատ դեպքերում առաջնորդվում էին այն հանգամանքով, որ եթե տուժողը բուժվել է 10–12 օրերի ընթացքում, ապա այդ դեպքը հարկավոր չէ ներառել հաշվետվության մեջ: Իսկ տուժողի բուժման հետագա ընթացքը որևէ կերպով չէր վերահսկվում: Ավելին, համաձայն այդ նույն հրամանի № 190 կետի՝ հաշվետվության մեջ չէին ներառվելու այն պատահարները, որոնք տեղի էին ունենում ՆԳ մինիստրությանը պատկանող գործարանների, պահեստների և խորհտնտեսությունների տառաձգներում: Ոստիկանները չարաշահում էին նաև այս հրամանը ու թաքցնում էին այն դեպքերը, որոնք տեղի էին ունենում ոչ ընտրոնական ավտոմայրուղու վրա⁹: Ասվածի վկայությունը ավտոմեքենայի հետևանքով 9-ամյա երեխայի մահվան փաստը թաքցնելն էր, որն աշխատակիցները փորձում էին բացատրել «պատահարի» ՆԳՄ խորհտնտեսությունների պահեստների մոնիթրակայքում կատարվելու պարագայով¹⁰: Սա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ տեսուչները և՛ ավագությամբ, և՛ ոչ ոչումով միմյանց չէին ենթարկվում և վարվում էին այնպես, ինչ-

⁵ «Մովետական միլիցիա», 1950, № 16:

⁶ ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 122, թ. 14–15:

⁷ Նույն տեղում, գ. 55, թ. 2:

⁸ Նույն տեղում, գ. 46, թ. 28–29:

⁹ Նույն տեղում, գ. 102, թ. 22:

¹⁰ Նույն տեղում:

պես ցանկանում էին: Քիչ չէին նաև ավտոճանապարհային տեսուչների կողմից վերցված կաշառքները՝ խախտումները և վարորդական իրավունք չունենալու փաստերը թաքցնելու համար¹¹:

Ծառայության նկատմամբ անփոյթ վերաբերմունքը հասնում էր նույնիսկ ծիծաղի աստիճանի, երբ աշխատակիցները կատարում էին այնպիսի արարքներ, որոնք որևէ բացատրություն չունեին: Այսպես, օրինակ, Երևանի ոստիկականական տեղամասերից մեկում աշխատակիցները պատռել էին գաղտնի թղթապանակում գտնվող 1941–1942 թթ. վերաբերող էջերը՝ ծխախոտ պատրաստելու նպատակով¹²: Սա նշանակում է, որ չկար անգամ լուրջ վերաբերմունք գաղտնի փաստաթղթերը պահելու, հաշվելու և գրանցելու առումով:

Նման իրավիճակ էր տիրում նաև քրեակատարողական հիմնարկներում, որտեղ տարածված էր կաշառակերությունը և հովանաորչությունը: Բանտարկյալները «աշխատակիցների օգնությամբ» հեշտությամբ կարողանում էին կազմակերպել և՛ իրենց փախուստը, և՛ անհրաժեշտ ակոհիլային խմիչքների ու թմրանյութերի մուտքը բանտախուց: Հաշվետվություններից ու կատարված ստուգումներից պարզ է դառնում, որ սովորաբար թեթև ռեժիմով գաղութներ ուղարկվում էին առավել ծանր հանցագործությունների համար (անչափահասների բռնաբարություն, պետական գույքի հափշտակում և այլն) դատապարտվածները¹³: Նմանօրինակ դեպքերը բավական շատ են, ինչը ապացուցելի է դարձնում այն պնդումը, որ համակարգում կաշառակերության երևույթը խոր արմատներ ուներ:

Աշխատակիցների և հատկապես հիմնարկների ղեկավարների շրջանում կար նաև միմյանց գործը «սևացնելու» միտում, որով նրանք փորձում էին վերահաստատել իրենց՝ սոցիալիզմի գաղափարներին հավատարիմ լինելը և մեկ անգամ ևս փորձում էին ընդգծել իրավապահ ու արդարամիտ աշխատակցի կերպարը: Սա ևս ձևավորված յուրահատուկ մտածելակերպ էր, որը բնորոշ էր խորհրդային ժամանակաշրջանին: Այս տեսանկյունից կարելի է վերցնել, օրինակ, 1956 թ. ՀԽՍՀ ՆԳ մինիստրության Վերահսկողական տեսչության ավագ տեսուչ Վարդանովի՝ ՆԳ մինիստրին ուղղված զեկուցումը Ուղղիչ աշխատանքային գաղութի պետի տեղակալ, լեյտենանտ Խուդոյանի աշխատանքում տեղ գտած թերացումների վերաբերյալ¹⁴: Հետաքրքիրն այստեղ, սակայն, այն էր, որ Վարդանովը տեղ գտած թերացումների մասին որևէ ձևով չէր հայտնել գաղութի ղեկավարությանը: Ավելին, գաղութի պետի մոտ իր գոհունակությունն էր հայտնել Խուդոյանի կատարած լավ աշխատանքի համար¹⁵:

«Գործ տվող» և գործընկերոջ («կոլեգայի») «գործը սևացնող» միլիցիոնների կերպարը՝ ի դեմս Արշոյի, ցայտուն կերպով արտացոլել է հայ ականավոր արձակագիր Հրանտ Մաթևոսյանը՝ իր «Մենք ենք մեր սարերը» վիպակում¹⁶: Վիպակում միլիցիոններ Արշուն խաբեությամբ Անտառամեջ գյուղի անասնապահ Իշխանից կորզելով Ռևազի ոչխարների մորթման մանրամասները, կապվում է շրջկենտրոն և «զեկուցում»: Արշոյի արած քայլից նույնիսկ խորշում է գյուղ եկած քննիչ, լեյտենանտ Հակոբյանը, ով հասկանում է, որ գյուղում կատարվածը հանցագործություն չէ,

¹¹ Նույն տեղում, գ. 46, թ. 8–9:

¹² Նույն տեղում, թ. 9:

¹³ Նույն տեղում, գ. 115, թ. 34, 139–140:

¹⁴ Նույն տեղում, գ. 130, թ. 197:

¹⁵ Նույն տեղում, թ. 206–210:

¹⁶ Մաթևոսյան Հ., Ընտիր երկեր երկու հատորով, հ. Ա, Ե., 1985, էջ 75–76:

սակայն շարունակում է գործը քննել, քանի որ «պետի» մոտ Արշուն նրան ներկայացրել էր որպես կաշառակեր, ով գումար է վերցրել գյուղացիներից՝ գործը կարճելու համար¹⁷։ Բնականաբար, նման մանրամասները, խորհրդային գրաքննության և կինոքննադատության պայմաններում չէին կարող տեղ գտնել 1969 թ. նկարահանված համանուն ֆիլմում¹⁸։

Ծառայողական կարգի խախտման դեպքերից զատ՝ քիչ չէին նաև օրինապահների կողմից կատարված հանցագործությունները¹⁹։ Լինում էին դեպքեր, երբ աշխատակիցները, երբեմն տուժողի ընկերների ու բարեկամների վրեժի վախից, երբեմն էլ կաշառքի դիմաց, դատարանում սուտ վկայություններ էին տալիս, որը ոչ միայն կարգապահական խախտում էր համարվում, այլև՝ վախկոտության դրսևորում։ Շատ դեպքերում իրենց սուտ վկայությունները փորձում էին քողարկել դատական գործընթացի սխալ արձանագրմամբ²⁰։ Համակարգի համար ամթաճ էր նաև այն հանգամանքը, երբ կոչումով անձիք հասարակական վայրերում ոգելիչ խմիչքի ազդեցության տակ իրենց թույլ էին տալիս միլիցիայի ղեկավար կազմի պատիվը զգող արարքներ։ Այսպես, օրինակ, Երևան քաղաքի բաժանմունքներից մեկի նախկին ղեկավար, միլիցիայի կապիտան Մուղալյանը, իր հա-

րազատներից մեկի հարսանիքի ժամանակ գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, հասարակական վայրում հարվածներ է հասցրել իր կնոջը, այնուհետև նստելով փողոցում գտնվող ավանակի վրա՝ դարձել է հասարակության ծաղրի առարկա²¹։ Մեկ այլ դեպքում, Լենինականի բաժանմունքներից մեկի նախկին աշխատակից, լեյտենանտ Հովսեփյանն իրեն պատկանող «նագան» տեսակի ատրճանակով անտեղի կրակոցներ է արձակել, որի ընթացքում քաղաքացի է վիրավորվել²²։ Իսկ հանրապետության շրջաններում լինում էին դեպքեր, երբ բաժանմունքի պետերը օղի էին վերցնում քաղաքացիներից՝ նրանց գործը կարճելու խոստումով²³։ Հարեցողությունն իսկական չարիք էր համակարգի համար, քանի որ նման գործելակերպով նրանք քանդում էին այն պատենշը, որը ստեղծել էր խորհրդային քարոզչամեքենան՝ հասարակություն-օրենքի ներկայացուցիչներ հարաբերություններում։

Միլիցիայի բարձրաստիճան պաշտոնյաների չարաշահումները նույնիսկ հասնում էին այն մակարդակի, երբ նրանք միջամտում էին իրենց ենթակաների անձնական կյանքին և փորձում որոշումներ կայացնել։ Այսպես՝ 6-րդ ռազմա-արդյունաբերական ռազայի ղեկավար, կապիտան Մնացականյանը իր ենթականերից մեկին պարտադրում է չեղարկել աղջկա նշանադրությունը՝ իրականակա պարագայում սպառնալով ազատել աշխատանքից²⁴։ Բնականաբար, նման փաստերի արձանագրումից զատ, կահարվում էին նաև առանձնակի ծանր հանցանքներ՝ մարդասպանություն, անչափահաս աղջիկների բռնաբարություն (որոնց

¹⁷ Նույն տեղում, էջ 85–87։

¹⁸ <https://www.youtube.com/watch?v=TFwPGKQ5x6Y>

¹⁹ Չնայած դեպքերի համատարած քողարկմանը և քաղաքացու մոտ իրավապահների նկատմամբ ձևավորված ակնածանքը կորցնելու վախին՝ ՀԽՍՀ ՆԳ մինիստր ԻՄ. Գրիգորյանը իր գեկուցումներում հաճախ էր անդրադառնում աշխատակիցների բարոյական կերպարին՝ առանձին օրինակներով փորձում կանխել նման դրսևորումները (մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 81, թ. 30–35, գ. 55, թ. 1–35)։ Նմանօրինակ փաստերին գալիս են լրացնելու ՀԽՍՀ ՆԳ մինիստրության իրափանգների հիման վրա կատարված հատուկ տեսչական ստուգումները (ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 46)։

²⁰ ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 7։

²¹ Նույն տեղում, թ. 8։

²² Նույն տեղում։

²³ Նույն տեղում, թ. 11։

²⁴ Նույն տեղում, գ. 55, թ. 9–10։

մեջ կային նաև հայրենադարձներ)²⁵, պետական ունեցվածքի թալան, և որոշ դեպքերում արժանանում մեղմ պատիժների:

Նման արտոնյալ դիրքից օգտվում էին նաև միլիցիայի ղեկավար անձանց կանայք, որոնք հասարակության մեջ կարծես թե առանձին արտոնյալ խավ ձևավորած լինեին: Նրանց առջև բաց էին բոլոր խանութների դռները, նրանք էին բոլոր անօրինական և որակյալ ապրանքների գնորդները: Դրա ցայտուն օրինակը Երևանի միլիցիայի 5-րդ բաժանմունքի վարիչի տեղակալ Դանիելյանի կնոջ գրողությունն էր խանութի աշխատակցին, որով նա պահանջում էր անմիջապես իրեն բերել ստացված նոր բաճկոնները²⁶: Որոշ դեպքերում միլիցիայի աշխատակիցների ընտանիքների անդամների արտոնյալ վիճակը հասնում էր այնպիսի մակարդակի, որ սկսում էին նույնիսկ ճնշումներ գործադրել վարչական շենքի բնակիչների վրա՝ ստիպելով շենք մտնել ետնամուտքով՝ իրենց անդորրը չխանգարելու համար²⁷: Այս և նմանօրինակ դեպքերը վկայում են, որ կանանցից շատերն իրենց վարքով ուստիկան ամուսիններից չէին տարբերվում:

Այսպիսով, ներկայացնելով ՀԽՍՀ միլիցիայի աշխատակիցների առօրյա կյանքին վերաբերվող մի շարք մանրամասներ, կարելի է փաստել, որ հետպատերազմյան տարիներին ձևավորված ամենաթողությունը չորջանցեց նաև իրավապահ մարմիններին: Պետությունն ուներ համակարգային վերաձևման կարիք: Նման թողոքության պայմաններում վերը ներկայացված իրավիճակը կարելի է համարել ժամանակաշրջանի համար առավել բնութագրական: Մյուս կողմից, նոր դրսևորումներ ստացած կա-

շառակերությունը, թալանը, պաշտոնական դիրքի չարաշահումներն ավելի խոր արմատներ գցեցին և որոշակի հետք թողեցին Խորհրդային Հայաստանի վերջին տարիների պետական ապարատի կազմակերպման վրա:

Гаяне Х. Казарян, Злоупотребления должностным положением в повседневной жизни сотрудниками милиции Армянской ССР в первые послевоенные годы – В статье представлены некоторые подробности повседневной жизни сотрудников милиции Армянской ССР в первые послевоенные годы, выявлены отрицательные явления в органах МВД: факты коррупции среди высокопоставленных чиновников, случаи злоупотребления должностным положением и т.д.

Факты указывают, что работники учреждений проявляли безответственное отношение к своим служебным обязанностям, что было непосредственно связано с отсутствием надлежащего контроля. Многочисленные случаи коррупции позволяют судить об укорененности этого порочного явления в структурах МВД.

Выявлены случаи злоупотребления должностным положением, когда некоторые сотрудники милиции пытались решать проблемы с позиции силы. Иногда – некоторые представители закона под воздействием алкоголя позволяли себе поступки очерняющие честь мундира. Подобные явления указывают, что сформировавшаяся в обществе некоторая вседозволенность не обошла и правоохранительные органы Советской Армении.

²⁵ Նույն տեղում, թ. 12–13:

²⁶ Նույն տեղում, գ. 56, թ. 8:

²⁷ Նույն տեղում, գ. 55, թ. 6:

Gayane Kh. Ghazaryan, The abuse of the official position in the everyday life of the militia employees of the Armenian SSR in the first post-war years – The article provides details about the daily life of the militia employees of the Armenian SSR during the first post-war years: revealed shortcomings in the system of the Ministry of Internal Affairs, corruption among high-ranking officials, cases of abuse of official position, etc.

Facts indicate that employees of institutions showed an irresponsible attitude towards their official duties, which was directly related to the lack of control. Cases of corruption significantly increased which allow us to judge over the vicious phenomena that were introduced into the system.

There were also a lot of cases related to abuse of official position when the leadership tried to solve problems from the position of power. Sometimes even certain representatives of law, under the influence of alcohol, allowed themselves acts derogating the honor of the system. Such phenomena indicate that the formed all-permissiveness did not bypass the law enforcement bodies.

Հայոց պարմության հարցեր, Երևան, 2018, թիվ 19, էջ 132–142:

ՀԱՄՈՒՄՈՒԹՅԱՆ

**ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ
(1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)**

Քանալի քաներ¹ Խորհրդային Հայաստան, առօրյա, խուլիգանություն, հարբեցողություն, քաղաքացի, հասարակական կարգ:

Խորհրդային տարիների առօրեականության առանձնահատկություններից մեկը, իրավամբ, կարելի է համարել խուլիգանությունը, որը բնակչության լայն խավերի շրջանում դրսևորվող հակահասարակական արարքների շարքում առավել տարածվածներից էր: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում խուլիգանությունը բնորոշվում է իբրև «Հասարակական կարգի և ընդհանուր կողմից ընդունված կենցաղավարության կանոնների խախտում, անհարգալից, անվայելույզ վերաբերմունք, վարքագիծ»¹: Իբրև այդպիսին՝ խուլիգանության խնդիրը մեր իրականությունում ուսումնասիրվել է միայն իբրև իրավական հարց, հակաօրինական արարք, որը պատժվում է քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով: Ուստի՝ եղած գիտական հրապարակումներն էլ իրավագիտական բնույթի են²: Այ-

¹ Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 617:

² Սարգսյան Գ.Ս., Խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, N 10, էջ 88–97, Հովսեփյան Ա.Գ., Դատախազական գործունեությունը և խուլիգանության դեմ պայքարի հիմնախնդիրները (պատմատեսական և քրեաիրավական վերլուծություն), Ե., 2005, Արշակյան Ի.Վ., Խուլիգանության հասկացությունը, դրա ծնող պատճառները և կանխարգելման հիմնախնդիրները, «Հայագիտական հանդես», 2009, N 3 (ներդիր), էջ 3–27, Ավետիսյան Ս., Խուլիգանական դրդումներով կատարված սպանությունների որակ-

նինչ, խուլիգանության դրսևորումները կարելի է դիտարկել նաև իբրև հասարակության սոցիալական շեղված (դեֆանտ) վարքի դրսևորում: Մասնավորապես Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան տարիներին տարածված հակահասարակական արարքները կարելի է համարել հայկական հասարակությունում ընդունված սոցիալական վարքականոնի խախտում: Այլ հարց է, թե այն ինչ ծավալներ էր ընդունել:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից և մեծահասակների հետ զրույցներից երևում է, որ ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ում հետպատերազմյան տարիներին հատկապես մանր խուլիգանական արարքներն ահագնացող ծավալներ էր ընդունել: Այդ դեպքերը հաճախ ողբերգական ավարտ էին ունենում³: Այս հանգամանքը ԽՍՀՄ ղեկավարությանը ստիպեց ուշադրություն սևեռել այդ երևույթին ու դրան նպաստող հանգամանքներին, ինչի արդյունքում 1966 թ. հուլիսի 26-ին ընդունվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ «խուլիգանության համար պատասխանատվությունն ուժեղացնելու մասին»:

Հրամանագրի ներածական մասում շեշտվում էր, որ հանրության կողմից անհանդուրժող վերաբերմունք է առկա խուլիգանական արարքների նկատմամբ, որոնք վիրավորում են քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը, հաճախ հան-

գեցնում ծանր հանցագործությունների: Այս առումով կարևոր խնդիր էր համարվում այնպիսի իրավիճակին հասնելը, երբ պետական մարմինների և քաղաքացիների ջանքերով կկանխարգելվեն խուլիգանական բոլոր դեպքերը: Իրավական ակտով համեմատաբար մեղմ էր վերաբերմունքը մանր խուլիգանությունների նկատմամբ, ինչը պատժվում էր դրամական տուգանքներով, 10-15 օր կալանքով կամ մեկ-երկու ամիս ուղղիչ աշխատանքներով: Մանր խուլիգանություններ էին համարվում հասարակական կարգն ու քաղաքացիների հանգիստը խանգարելը, հասարակական վայրերում զազրախոսությունը, քաղաքացիներին վիրավորական ձևով հետամտելը (հալածելը) և այլ նմանօրինակ գործողությունները: Առավել խիստ պատիժ էր սահմանվում կանխամտածված, հասարակական կարգի կոպիտ խախտումներ, չարամիտ խուլիգանություններ, պարբերաբար մանր խուլիգանական արարքներ կատարողների համար: Վերջինները կարող էին մեկից մինչև 5 տարի ժամանակով ազատազրկման դատապարտվել: Այդ գործողությունները հրազենի, դանակի կամ այլ սառը զենքի գործածությամբ կատարելու դեպքում ազատազրկման ժամկետ էր սահմանվում 3-7 տարին: Հարբած վիճակում հանցագործություն կատարելը ծանրացուցիչ հանգամանք էր դիտվում: Դրամական տուգանք էր սահմանվում հասարակական վայրերում խմած հայտնվելու դեպքում⁴:

Հենց նույն օրը՝ հուլիսի 26-ին, ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը որոշում ընդունեց «խուլիգանության համար պատասխանատվությունն ուժեղացնելու մասին» հրամանագիրը կիրառելու կարգի մասին⁵: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ

ման մի քանի հարցերի մասին, http://old.court.am/files/news/1273_am.pdf, Մնացականյան Ա.Մ., Խուլիգանության քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրները ՀՀ-ում, թեկնածուականատենախ., Ե., 2013, նույնի՝ Խուլիգանությունը հարակից հանցագործություններից սահմանազատելու առանձնահատկությունները, «Դատական իշխանություն», 2013, N 3, էջ 58-65 և այլն:

³ Козлов В.А., Массовые беспорядки в СССР при Хрущеве и Брежнев, М., 2010, <https://www.svoboda.org/a/24936223.html>, <https://www.lawmix.ru/comm/2225>, Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 30, ց. 33, գ. 1, թ. 19-21, 30-34, գ. 7, թ. 69-70, ֆ. 1318, ց. 1, գ. 76, թ. 2-3:

⁴ «ՄՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագրեր», Մոսկվա, 1966, N 30, էջ 582-586:

⁵ Նույն տեղում, էջ 586-588:

նույն հուլիսի 26-ին Գերագույն խորհրդի նախագահությունը հաստատեց նաև ազատագրված վայրերից ազատված անձանց նկատմամբ միլիցիայի մարմինների վարչական հսկողության կանոնադրությունը, որը տարածվելու էր նաև մինչև հրամանագրի հրապարակումն ազատագրված վայրերից ազատված այն անձանց վրա, որոնց դատվածությունը վերացված կամ մարված չէր: Ըստ այդմ՝ կանոնադրությամբ ավելի էր խստացվում վաղաժամկետ ազատված կամ քրեական անցյալ ունեցող քաղաքացիների նկատմամբ միլիցիայի հսկողությունը, ինչը հիմնավորվում էր վերջինների կողմից նոր հանցագործություններ կատարելը կանխելու և դաստիարակչական նկատառումներով⁶:

ԽՍՀՄ-ում խուլիգանական արարքների դեմ պայքարը կազմակերպված բնույթ ստացավ միայն Գերագույն խորհրդի նախագահության վերը նշված հրամանագրի հրապարակումից հետո: Հրամանագիրը և նրանից բխող միջոցառումները զգալիորեն նպաստեցին ինչպես ողջ միությունում, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ում խուլիգանության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը⁷:

Ընդգծենք, որ արձանագրված հանցավոր դեպքերի շարքում խուլիգանական արարքները նկատելի քանակ էին կազմում ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ շրջաններում: Այսպես՝ 1967 թ. Երևանի Մյասնիկյանի շրջանում կատարված 230 հանցագործության դեպքից խուլիգանություն էր եղել 85-ը (37%-ը), Լենինականում արձանագրված 422 հանցագործության դեպքից՝ 133-ը (32%-ը), իսկ Կիրովական քաղաքում եղել էր խուլիգանությ-

յան 60 դեպք⁸: Ի դեպ, վիճակագրական այս տվյալները ոչ բոլոր շրջաններին էր բնորոշ: Նույն 1967 թ. Սպիտակի շրջանում կատարված 68 հանցագործությունից խուլիգանություն էր եղել 5.4%-ը, Բասարաբեյարի շրջանում գրանցված 76 հանցագործության դեպքից՝ 2.6%-ը⁹: Ենթադրելի է, որ շրջաններում մանր հանցանքների, խուլիգանության դեպքերի կոծկումներ են եղել, ինչն անելը մեծ քաղաքներում այնքան էլ դյուրին չէր:

Այդուհանդերձ, չնայած պետության կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներին, իրավապահ մարմինների՝ խուլիգանության դեմ ծավալած պայքարին, գոյություն ունեցող օբյեկտիվ գործոնները նպաստում էին խուլիգանության տարածմանը: Խուլիգանական արարքների տարածվածության հիմնական պատճառներ կարելի է համարել՝ հասարակության հանդուրժող վերաբերմունքը, երիտասարդների՝ ալկոհոլի չարաշահմանը հակվածությունը, բնակչության կենցաղային անհարմարությունները, երիտասարդության դաստիարակության հարցում եղած բացերը և այլն:

Հասարակական տրամադրություններն ու տարածված պատկերացումները նպաստում էին խուլիգանական արարքների ծավալների ավելացմանը: Հայկական հասարակության, աշխատանքային կոլեկտիվների, նաև տուժողների հանդուրժող կամ անտարբեր վերաբերմունքը մեծ չափով պայմանավորված էր նախկինից եկող ավանդական մտածելակերպով, միջանձնային խնդիրները ոչ թե իրավական ճանապարհով, այլ հասարակական չգրված կանոններով լուծելու գործելաոճով: Այս մտածելակերպի արմատավորմանն էականորեն նպաստում էր հետպա-

⁶ Նույն տեղում, էջ 588–591:

⁷ Արշակյան Ի.Վ., նշվ. աշխ., էջ 5:

⁸ ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 1, 37, 177:

⁹ Նույն տեղում, թ. 64, 73:

տերազմյան շրջանում ողջ ԽՍՀՄ-ում տարածում գտած ոչ կանոնադրային կենցաղը, «գողական մտածելակերպը» և իբրև այս ամենի հետևանք՝ երիտասարդների՝ սեփական բնակավայրում, թաղամասում կամ բակում «սպիտակ ագռավ» համարվելուց խուսափելը: Քաղաքացիները ոչ միայն քայլեր չէին իրականացնում խուլիգանական հանցագործությունները կանխելու, դրանց դեմ պայքարելու նպատակով, այլև ականատեսները հաճախ հովանավորում էին հանցագործին, սուտ ցուցմունքներ տալիս, կամ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում սկզբնական ցուցմունքներից, թաքցնում դեպքերը¹⁰: Այս հատկանիշները հատուկ էին նաև միլիցիայի ծառայողներին, ովքեր նույնիսկ դատարաններում երբեմն սուտ ցուցմունքներ էին տալիս¹¹: Իսկ 1967 թ. Լենինական քաղաքին վերաբերող մի զեկուցագրում կարդում ենք, որ խուլիգանական ոտնձգությունների դեմ մղվող պայքարում առանձին քաղաքացիներ աչքի չեն ընկել, լավագույն դեպքում նրանք հանդես են եկել իբրև վկա¹²:

Իբրև վերը նշվածի հետևանք՝ խուլիգանության տարածմանը նպաստում էր նաև աշխատանքային կոլեկտիվների անտարբեքությունը, միլիցիայի որոշ աշխատակիցների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների կողմից ցուցաբերվող հովանավորչությունը, «անհոգի վերաբերմունքը»: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ հասարակական կարգը խանգարելու, մանր խուլիգանական արարքներ կատարելու, հարբեցողությամբ զբաղվելու դեպքում կոլեկտիվի անդամները ոչ միշտ էին հայտնում հիմնարկ-ձեռնարկության ղեկավա-

րությանը, հաճախ էլ կատարված հաղորդումներն անուշադրության էին մատնվում և չէին քննվում: Մեղավորները ոչ միայն անպատիժ էին մնում, այլև նույնիսկ հրապարակային պարսավանքի չէին արժանանում¹³: 1966–1967 թթ. Աբովյանի շրջանին վերաբերող մի փաստաթղթում ընդգծվում էր, որ հիմնարկ-ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ղեկավարները հասարակական կարգը խախտողների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ձևավորելուն ուղղված քայլեր, այդ թվում՝ ներգործության արդյունավետ միջոցներ (պարզևատրումներից, հանգստյան տների արտոնյալ ուղեգրերից զրկելը, բնակելի տարածություն ստանալու հերթը հետաձգելը և այլն) չէին իրականացնում¹⁴:

Ինչպես տեսնում ենք, հանրության շրջանում առավել ընդունված էր չգրված կանոններով առաջնորդվելը, քան թե գործող օրենսդրությանը հետևելը: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս մտածելակերպը, ոգելից խմիչքի չարաշահումը, հակաօրինական արարքներ կատարելուն հակվածությունը հատկապես բնորոշ էր երիտասարդներին (որոնց շրջանում կային կոմունիստական կուսակցության անդամներ ու կոմերիտականներ), ինչպես նաև դեռահասներին¹⁵: Այսինքն՝ պետության կողմից մի քանի տասնամյակ իրականացվող գաղափարաքարոզչական աշխատանքները սպասված արդյունքը չէր ունեցել:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Խորհրդային Հայաստանում խուլիգանական

¹⁰ Նույն տեղում, գ. 136, թ. 46, գ. 137, թ. 74:

¹¹ ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 7:

¹² ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 1:

¹³ Նույն տեղում, գ. 136, թ. 154:

¹⁴ Նույն տեղում, գ. 137, թ. 18:

¹⁵ Նույն տեղում, գ. 136, թ. 46–47, ՀԱԱ Կոտայքի մարզային մասնաճյուղ, ֆ. 1, ց. 4, գ. 65, թ. 5–6:

արարքներին նպաստող առաջնային հանգամանքներից էր ակոհոյի չարաշահումը: Առօրյա կյանքում խուլիգանական արարքների մշտական ուղեկիցը հարբեցողությունն էր: Որպես կանոն, մեծ թիվ էին կազմում ոգելից խմիչքի ազդեցությամբ կատարված խուլիգանական արարքները: Սա հանրապետության ողջ տարածքին բնորոշ երևույթ էր:

Շատ հաճախ քաղաքացիները հարբած վիճակում հակահասարակական արարքներ էին կատարում իրենց աշխատավայրերում կամ մարդաշատ վայրերում¹⁶: Այս պատճառով է, որ 1968 թ. հուլիսի 22-ին գումարված Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի նստաշրջանը շրջագործկոմին հրահանգեց. «Ակտիվ պայքար կազմակերպել հակահասարակական, պարագիտային կյանք վարող տարրերի դեմ, միջոցներ ձեռնարկել նրանց հարկադրաբար աշխատանքի ներգրավելու ուղղությամբ»¹⁷:

Առանձնապես խնդրահարույց հանգամանք էր դիտվում ոգելից խմիչքի ազատ և անսահմանափակ վաճառքը: Հանրապետության գրեթե բոլոր շրջաններին վերաբերող զեկուցագրերում հատուկ շեշտվում էր, որ խուլիգանական արարքների հեղինակների ճնշող մեծամասնությունը չարաշահել է ոգելից խմիչքը: Գորիսի դատախազի 1969 թ. հունվարի 3-ով թվագրվող զեկուցագրում նշվում էր, որ շրջանում 1968 թ. խուլիգանության մեջ մեղադրվողների 74%-ը հանցագործությունը կատարել է հարբած վիճակում: «Տաթևիեկչինի և Գորիսի քաղկոպի հասարակական սննդի օբյեկտներում առանց սահմանափակման հաճախորդներին բաց են թողնում ոգելից խմիչքներ, որը հանդիսանում է հասարակական կարգի խախտման հիմնական պատճա-

ռը»¹⁸, - նշում էր նա: Ակոհոյային խմիչքների վաճառքի հետ կապված նմանատիպ փաստերը բազմաթիվ են: Իրավապահ մարմինների զեկուցագրերից տպավորություն է ստեղծվում, թե որ հիմնարկ-ձեռնարկության մոտակայքում ոգելից խմիչքների անսահմանափակ վաճառքի կետեր կային, ապա այդ աշխատանքային կոլեկտիվներում անպակաս էին վեճերը, ակոհոյի ազդեցությամբ և սառը զենքի գործադրմամբ կատարվող խուլիգանական արարքները: Բանն այն է, որ երիտասարդների մեծամասնության շրջանում տարածված սովորություն էր գրպանում դնակ պահելը, հայիոյելը, ճաշի ընդմիջմանը ոգելից խմիչք օգտագործելը, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանությունները և այլն:

Երբեմն հասարակական կարգը խախտողների լկտիությունը չափ ու սահման չունեի: Այսպես՝ հանրապետության գյուղերից մեկի բնակիչ Հովհաննիսյանը 1967 թ. նոյեմբերի 11-ի գիշերը հարբած մոտենում է ամուսինը նոր կորցրած համագյուղացի Բաղդասարյանի բնակարանին և առաջարկում դուռը բացել: Բացասական պատասխան ստանալով՝ Հովհաննիսյանը սկսում է հայիոյել Բաղդասարյանին և դանակը ձեռքին հայտարարում, թե պետք է բռնաբարի նրան և սպանի: Տեսնելով, որ համագյուղացին ջարդում է դռան և լուսամուտի ապակիները, կինը երեխաներից մեկին պատուհանով ցած է իջեցնում՝ հարևաններին օգնության կանչելու համար: Ժամանաձ հարևանների կանայք Հովհաննիսյանին տեսնում են տաբատը իջեցրած և դանակը թափահարելով հայիոյանքներ տեղալիս: Միայն համագյուղացի տղամարդկանց գալուց հետո խուլիգանական արարք կատարո-

¹⁶ ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 16, թ. 44-46:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 136, թ. 35-36:

¹⁸ Նույն տեղում, թ. 155:

ղը փախուստի է դիմում: Ժողդատարանի որոշմամբ նա դատապարտվում է 6 տարվա ազատազրկման¹⁹: Այս օրինակը հնչեղության ստացած գործի մասին է: Նմանատիպ տասնյակ քրեական գործեր են պահվում ՀԱԱ-ի՝ ՀԽՍՀ դատախազության արխիվային ֆոնդում: Բազմաթիվ այլ դեպքերում գործերը դատական մարմիններին չէր հասնում. հանրային պատկերացումների համաձայն՝ իրավապահ մարմիններին դիմելը ոչ պատվաբեր արարք էր համարվում, ինչը, բնականաբար, նպաստում էր անպատժելիությանն ու հանցավոր արարքների ավելացմանը:

Խուլիգանության տարածմանը նպաստող հանգամանքների շարքում երրորդականներից չէր նաև բնակչության առօրյա կյանքում առկա կենցաղային անհարմարությունները: Կենցաղային հողի վրա հարևանների միջանձնային պարզաբանումները հաճախ վերածում էին խուլիգանական արարքների՝ մանավանդ միևնույն բնակարանում հարևանությամբ մեկից ավելի ընտանիքների բնակվելու դեպքում: Երևան քաղաքին վերաբերող 1968 թ. դեկտեմբերի 30-ով թվագրվող մի զեկուցագրում կարդում ենք. «Ընդհանուր հարմարություններից օգտվելու կամ այլ պատճառներից առաջացած վեճերը ծավալվում և տեղիք են տալիս խուլիգանության»²⁰: Սա ուշադրության արժանի հանգամանք է:

Այս ամենի կողքին, որքան էլ զարմանալի թվա, մայրաքաղաք Երևանի և հանրապետության մյուս քաղաքների թաղամասերի, փողոցների ոչ բավարար լուսավորությունը իրավապահ մարմինների զեկուցագրերում խուլիգանության դեպքերի ավելացմանը նպաստող գործոն չէր դիտվում:

Արխիվային փաստաթղթերի և հատկապես դատական գործերի ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ խուլիգանական արարքներ կատարողների մեծամասնությունը ծնվել էր 1930-ականներին, իսկ նրանց մանկությունն անցել էր Հայրենական պատերազմի տարիներին: Բնականաբար, այդ երիտասարդներից շատերի հայրերը կա՛մ ստալինյան բռնաճշմունքի զոհեր էին, կա՛մ էլ Կարմիր բանակ զորակոչվածներ (որոշների դեպքում՝ ռազմի դաշտից հետ չվերադարձածներ): Այն է՝ նրանք ծնողական սահմանափակ խնամք ստացած անձիք էին, որոնց դաստիարակության մեջ ընտանիքի և դպրոցի կողքին կարևոր մաս էր ունեցել նաև «փողոցը»՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

1960-ականների երկրորդ կեսին ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայկական ԽՍՀ մայրաքաղաք Երևանում և հանրապետության շրջաններում խուլիգանության դրսևորումների դեմ սուր պայքար ծավալվեց, ինչի արդյունքում խուլիգանության հանցակազմով մեղադրական գործերի ու դատավարությունների թիվն ավելացավ: Բանն այն է, որ հանցավորության ցածր ցուցանիշ ցույց տալու նպատակով, երբեմն էլ անձնական կամ խմբային շահերից ու շահագրգռություններից ելնելով իրավապահ համակարգի ներկայացուցիչները միշտ չէ, որ արձանագրում էին մանր խուլիգանությունները, իսկ ծանր հանցագործություններն էլ վերաորակավորում էին իբրև մանր խուլիգանություններ: Կենտրոնից հրահանգված խստացումների հետևանքով 1960-ականների երկրորդ կեսին Հայկական ԽՍՀ-ում խուլիգանական դեպքերի արձանագրումների թիվն ավելացավ, սակայն փաստացի իրական թվի նվազում տեղի ունեցավ (այդ թվում՝ չա-

¹⁹ Նույն տեղում, գ. 137, թ. 28–29:

²⁰ Նույն տեղում, գ. 136, թ. 207:

րամիտ խուլիգանության դեպքերի մասով)²¹: Ի դեպ, մանր խուլիգանության համար կալանավորված քաղաքացիները, որպես կանոն, պարտադիր ընդգրկվել են ֆիզիկական աշխատանքներում: Նրանք աշխատել են շինարարությունում, մաքրել փողոցները և այլն²²:

Այսպիսով՝ հետպատերազմյան առաջին տասնամյակներին Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյա կյանքում տարածված դրսևորումներից էր երիտասարդների շրջանում ակոհոլի օգտագործումը (երբեմն՝ չարաշահումը), դանակներով շրջելը, խմբային պարզաբանումները (ռազբորկաները): Իբրև այս ամենի հետևանք՝ նկատելի քանակ էին կազմում ոգելից խմիչք օգտագործած վիճակում և սառը զենքի գործածությամբ կատարված խուլիգանական արարքները: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այսպիսի արարքներ կատարողների մեծամասնությունը քրեական անցյալ, դատվածություն չունեցող սովորական քաղաքացիներ էին (բանվորներ, կոլտնտեսականներ, ինժեներներ և այլն):

Амо К. Сукиасян, Проявления хулиганства в повседневной жизни населения Советской Армении (вторая половина 1960-х годов) – Одной из особенностей повседневной жизни советских лет по праву можно считать хулиганство, которое было одним из наиболее распространенных антиобщественных действий среди широких слоев общества.

²¹ Նույն տեղում, թ. 78, ՀԱՀ Կոտայքի մարզային մասնաճյուղ, ֆ. 20, ց. 4, գ. 101, թ. 1-4:

²² ՀԱՀ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 8, 59, 66, 195:

Во второй половине 1960-х годов как по всему Советскому Союзу, так и в Армянской ССР началась широкая борьба с проявлениями хулиганства. Издание указа Президиума Верховного Совета СССР от 26 июля 1966 года «Об усилении ответственности за хулиганство» и вытекающие из него меры значительно способствовали повышению эффективности борьбы с хулиганством. Среди хулиганских преступлений заметное число составляли преступления, совершенные в нетрезвом состоянии и с применением холодного оружия. Большинство совершающих такие действия составляли молодые, не имеющие криминального прошлого и судимости лица-рабочие, колхозники, инженеры и др.

Hamo K. Sukiasyan, Manifestations of hooliganism in everyday life of the population of Soviet Armenia (second half of the 1960s) – One of the everyday life peculiarities of Soviet years can be righteously considered hooliganism which was the most widespread of anti-social actions manifested among the broad circles of the population.

In the second half of the 1960s, there was a sharp struggle against the hooliganism in both the entire Soviet Union and Yerevan the capital city of the Armenian SSR and in the regions of the republic. The publication of the Decree “On Strengthening responsibility for Hooliganism” by the Presidency of the USSR Supreme Soviet as of July 26, 1966 and the measures deriving from it significantly contributed to the increase of the efficiency of the fight against hooliganism in the whole union as well as in the Armenian SSR. The point is that in Soviet Armenia there was a considerable quantity of actions of hooliganism committed under the

influence of alcoholic drinks and with usage of cold weapons. The majority of those who committed such acts were youngsters with no criminal past (workers, collective farmers, engineers, etc.) who had not convicted before.

Հայոց պատմության հարցեր, Երևան, 2018, թիվ 19, էջ 143–156:

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱԴԵՍ ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1950-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ – 1960-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿՋԲԻՆ (ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության «սպիտակ էջերից» է սոցիալական վարքագծի դրսևորումների հիմնախնդիրը, որը քիչ է ուսումնասիրված: Նմանատիպ հետազոտությունները կարևոր են խորհրդային առօրեականությունը լավ պատկերացնելու և խորհրդային կյանքի մասին տարածված առասպելները, մոլորությունները ցրելու տեսանկյունից: Բացի այդ՝ սոցիալական շեղումներն առավել ամբողջական պատկերացում են տալիս հասարակության վիճակի մասին՝ որպես նրա «զարգացման մակարդակի և բարոյական առողջության ցուցիչներ»¹:

Հանցագործությունները, որպես «բացասական բովանդակությամբ»² սոցիալական շեղումներ, իրենց ուրույն տեղն են ունենում խորհրդային հասարակության սոցիալական կյանքի համապատկերում և իրենց առանձնահատկություններով դրանք հետաքրքիր են ոչ միայն քրեագիտական հետազոտությունների համար: 1950–1960-ական թվականներին Հայաստանում կա-

¹ Курицына Е.В., Преступность в советском обществе в 1953–1964 гг. (социально-криминологический аспект), <https://cyberleninka.ru/article/n/prestupnost-v-sovetskom-obschestve-v-1953-1964-gg-sotsialno-kriminologicheskiiy-aspekt> (дата обращения 17.04.2020).

² Նույն տեղում:

տարված հանցագործությունները հարուստ նյութ են պարունակում նաև խորհրդահայ մարդկանց կենցաղի որոշ առանձնահատկությունների մասին: Խոսքը վերաբերում է առանձնակի դաժանությամբ կատարված հանցանքներին, որոնք, համոզված ենք, տեղեկատվական ազատության և հասանելիության արդի պայմաններում անվիճելիորեն կստանային «աղմկահարույց» բնորոշումը: Սույն հոդվածում կփորձենք հասկանալ այս հանցանքները ծնող հիմնական պատճառները, որոնք կոդիտարկենք միմյանց հետ փոխգործակցող երկու տիրույթներում՝ պետական քաղաքականություն և կենցաղ: Հետազոտական նման մոտեցումը պայմանավորված է այն կանխավարկածով, որ Խորհրդային Հայաստանում ծանր հանցագործությունների պատճառները մեծ մասամբ առնչվում են հանցավորության դեմ պայքարում պետության բացթողումների և հանցագործությունների վրա կենցաղային մտածողության ազդեցությունների հետ:

Խորհրդային Հայաստանում ծանր հանցագործությունների թվական աճ նկատվում է հետպատերազմյան շրջանում, հիմնականում 1950-ականների երկրորդ կեսին: Պատերազմի տարիների համեմատաբար հանգիստ վիճակը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ այդ տարիներին ընդհանուր դժվարությունները համախմբել էին մարդկանց: ՀԽՍՀ ժողովրդական դատարանների նյութերը վկայում են, որ Խորհրդային Հայաստանում այս տարիներին ամենատարածված հանցատեսակը եղել է սոցիալիստական ունեցվածքի յուրացումը: Անձի դեմ ուղղված հանցագործությունները բավական քիչ են եղել³:

³ Մեր այս դիտարկումը հիմնված է Վանաձորի և Իջևանի քաղաքային արխիվներում պահվող ՀԽՍՀ ժողովրդական դատարանների մեղադրական նյութերի ուսումնասիրության վրա (ՀԱԱ, ԼՍՄ, ֆ. 9, ց. 3, նաև՝ Իջևանի քաղաքային ար-

Այս համոզմունքն ամրապնդվում է նաև բանավոր հարցազրույցների տվյալներով, որոնց մասնակիցները միաբերան վկայում են, որ պատերազմի տարիներին մարդիկ ավելի շատ հակված էին օգնել միմյանց, քան վնասել: Իհարկե, այս իրողությունից նույնպես եղել են բացառություններ, սակայն, եթե համեմատենք ջրեական իրավիճակը, օրինակ, Խորհրդային Ռուսաստանի հետ⁴, ապա Խորհրդային Հայաստանում այն առավել վերահսկելի էր⁵: Երկրորդ՝ ստալինյան ժամանակաշրջանում իրականացված քաղաքական բռնաճնշումների և, այսպես ասած, «ճամարային» առօրեականության ընդհանուր մթնոլորտը յուրօրինակ զսպող ազդեցություն են ունեցել Հայաստանում հանցավորության վիճակի վրա: «Շատ խիստ էր, Ստալինը կարգադրել էր, որ եթե ինչ-որ մեկի ձեռքը մի դանակ, անգամ քորոց էլ բռնեն, անհապաղ նրան նստեցնեն», - այսպես պատկերավոր է ներկայացնում պատերազմի տարիների ընդհանուր մթնոլորտը մեր ժողովրդակից Ռոզա Սիմոնյանը⁶:

նվ. ֆ. 8-56, ց. 1): Կարծում ենք, որ Խորհրդային Հայաստանի մնացած շրջաններում ևս պատկերը հիմնականում նույնն է:

⁴ Богданов С.В., «Теневая» грань советской повседневности первых послевоенных лет: власть, общество, уголовная преступность, <https://cyberleninka.ru/article/n/tenevaya-gran-sovetskoy-povsednevnosti-pervyh-poslevoennyh-let-vlast-obschestvo-u-sovetskoy-prstupnost> (дата обращения 17.04.2020) (Հեղինակն ուշագրավ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ է ներկայացնում, ըստ որոնց Ռուսաստանում պատերազմական տարիներին հանցավորության իսկական մարտահրաշխ է տեղի ունեցել պետության և հասարակության դեմ):

⁵ Նշենք, որ բազմաթիվ ռուս հեղինակների մոտ ԽՍՀՄ-ը ասոցացվում է հիմնականում Խորհրդային Ռուսաստանի հետ, և ԽՍՀՄ-ին վերաբերող փաստական աղբյուրները նրանք վերցնում են միայն համամիութենական նշանակության ռուսաստանյան արխիվային նյութերից: Սակայն երբեմն խորհրդային հանրապետությունների արխիվային տվյալները կարող են չհամապատասխանել նրանց բերած տվյալներին: Կոնկրետ այս պարագայում մենք հակված ենք ընդունել, որ պատերազմի տարիների վերոնշյալ հոդվածի հեղինակի վկայած հանցավորության աճը ԽՍՀՄ-ում ընդ շատ բնորոշ է Խորհրդային Ռուսաստանին, այլ ոչ թե Հայաստանին:

⁶ Հարցազրույց Ռոզա Սիմոնյանի հետ, ծնվ.՝ 1930 թ.: Ձայնագրվել է 01.03.2020 թ. Հեղինակի անձնական արխիվ:

Ստալինյան վարչակարգի «երկաթյա կառավարմամբ» և հասարակության մեջ առաջացած վախի մթնոլորտով պայմանավորված «խաղաղությունը» ժամանակավոր էր, և Ի. Ստալինի մահից հետո կարծես հասարակության մեջ կուտակված բացասական էներգիայի պարպում է տեղի ունենում: Այս տարիների հանցավորության կտրուկ աճն աննախադեպ էր ԽՍՀՄ պատմության մեջ, ինչը որոշ մասնագետներ բացատրել են առաջին հերթին Մեծ Հաղթանակի պատվին հայտարարված համաներմամբ⁷: Այսպես օրինակ, եթե մինչև 1950-ական թվականներին վերաբերող նյութերում մենք հանդիպում ենք բռնաբարությունների, դաժան սպանությունների և առավել վտանգավոր այլ հանցագործությունների եզակի դեպքեր, ապա 50-ից 60-ական թվականներին Խորհրդային Հայաստանում ծանր հանցանքների մասին բազմաթիվ վկայություններ կան: Պատահական չէ, որ եթե մինչ այդ ԽՍՀՄ իրավապահ քաղաքականության առաջնահերթություններում պետական հանցագործությունների դեմ պայքարն էր, ապա արդեն 1940-ականների վերջին պետությունը սկսեց լրջորեն զբաղվել անձի դեմ ուղղված ծանր հանցագործություններով: 1949 թ. հունվարի 4-ին ընդունվեց ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հրամանագիրը «Բռնաբարության համար քրեական պատասխանատվության խստացման մասին», որում վերանայվեցին այս հանցագործության համար նախկինում սահմանված մեղմ պատժաչափերը: Հետաքրքիր է, որ այս հրամանագրում ավելացրել էին բռնաբարություն արարքի որակավորմաներից ևս մեկը՝ անչափահասների բռնաբարությունը⁸: Սա, ըստ էության, փաստում է խորհրդային իրականության մեջ այս հանցագործության տարածված լինելու մասին, և ցավով պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանում ևս անչափահասների վրածմամբ սեռական և ֆիզիկական բռնությունները տարածված են եղել: 1954 թվականի ապրիլի 30-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով լրացվեց 1950 թ. հունվարին պետական դավաճանության և լրտեսության համար մահապատիժը վերականգնելու մասին ԽՍՀՄ ԳԽ-ի հրամանագիրը: 1954 թ. խոփոխությամբ մահապատիժը տարածվում էր նաև ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունների վրա⁹:

⁷ Сидорчик А., Обычное лето 1953-го. Кого на самом деле амнистировали Берия, Аргументы и факты АИФ.РУ, федеральный АИФ, 24.12.2013г. https://aif.ru/society/history/obychnoe_let_1953-go_kogo_na_samom_dele_amnistiroval_beriya

Այս միջոցառումները սպասված արդյունքը չսովեցին: Պատժառներից մեկն այն էր, որ առանձնապես ծանր հանցագործությունների մասին իշխանությունները չէին բարձրաձայնում: Սա արդյունք էր ստվեր գցել խորհրդային «ամենաանվտանգ և ապավինի» երկրի վարկանիշին: Այս տարիներին պետական քարոզչապետության «հակահեղափոխականության», «պետական դավաճանության», «դիվերսիաների» մասին ավելի շատ էր ահազանգում, քան իրական հանցագործությունների:

Խորհրդային պետության պայքարը հանցավորության դեմ արարվում էր մի տրամաբանության, ըստ որի առաջնային խնդիրը էին ստանում գաղափարախոսական առաջնահերթությունները: Հանցավորությունը դիտվում էր որպես դասա-

⁸ Мевлуд Демуралович Давитадзе, Елена Ивановна Калинина, История становления и развития законодательства России об ответственности за изнасилование, Вестник Московского университета МВД России, 2015, №1 (дата обращения). <https://cyberleninka.ru/article/n/istoriya-stanovleniya-i-razvitiya-zakonodatelstva-rossii-ob-otvetstvennosti-za-iznasilovaniya>

⁹ Ведомости Верховного Совета СССР, № 11 (805), 1954 г., с. 371.

կարգային հակասությունների արդյունք: Ինչպես նշում է Մարիաննա Մուրավյովան, հանցագործությունների մասին մարքսիստական տեսության խորհրդային մեկնաբանություն կար, որի համաձայն ենթադրվում էր, որ սոցիալիզմի հովանու ներքո դասակարգերի վերացման արդյունքում կվերանա նաև հանցավորությունը: Իսկ երբ, չնայած սպասվածին, հանցավորությունը չվերացավ, իշխանությունները հայտարարում էին, որ ԽՍՀՄ-ում ծանր հանցագործությունների թիվն ավելի փոքր է, քան կապիտալիստական արևմուտքում¹⁰:

Հանցավորության դեմ պայքարում գաղափարականացված մոտեցումները իրավապահ մարմինների պայքարը դարձնում էին ոչ համարժեք: Որոշ պաշտոնական փաստաթղթերում հանցավորության դեմ պայքարի հստակ մարտավարության և սկզբունքների փոխարեն շրջանառվում էին վերացական, հոչակագրային դրույթներ, որոնք ավելի շատ քարոզչական լոզունգներ էին հիշեցնում: Բերենք օրինակ. 1958 թ. Պետհրատի (Госиздат) և Լուսավորության մանկավարժական պետական հրատարակչության (Учпедиздат) աշխատակիցներից բաղկացած յոթ հոգանոց խումբը գինված հարձակում էր իրականացրել Մարտունու շրջանի Ալիշալու գյուղի կոլտնտեսության աշղեկի տան վրա, սպանել և թալանել էր տանտիրոջը: ՀԽՍՀ միլիցիայի աշխատակիցների հանրապետական խորհրդակցություններից մեկում ՀԽՍՀ ներքին գործերի նախարարն իր ելույթում դժգոհում է, որ այս դեպքը չի քննարկվել խմբի անդամների աշխատանքային կոլեկտիվներում, կոլեկտիվն իր քննադատական խոսքը

չի ասել: Ընդհանրացնելով այսօրինակ հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ իր մոտեցումները՝ նախարարը հանգում է այն եզրակացության, որ իրավապահ մարմինների աշխատանքում գլխավորն է՝ «հենվել արհեստակցական, կոմերիտական և այլ հասարակական կազմակերպությունների վրա», նրանց օգնությամբ բացահայտել և կանխարգելել երիտասարդ իրավախախտների հանցավոր մտադրությունները և օգնել նրանց, «որ իրենց ուժը, էներգիան և ստեղծագործական հատկություններն ուղղեն կոմունիզմի կառուցման վեհ գործին»¹¹:

Հասկանալի է, որ հասարակության իրավական գիտակցության նման գաղափարախոսական մեկնաբանությունները գործնականում չէին կարող նպաստել այդ գիտակցության բարձրացմանը և չէին կարող հասցեական ազդեցություն ունենալ հանցավորությունը ծնող պատճառների վրա:

Այն, ինչ ակնհայտ բացակայում է ծանր հանցագործություններին վերաբերող նյութերում, դա կանխարգելիչ միջոցառումների մասին վկայություններն են: Իրավապահ մարմիններն ու դատարանները ազդում էին միայն այս արարքների հետևանքի վրա: Արարքները ծնող սոցիալ-հոգեբանական բազմաթիվ պատճառների վրա պետությունը մեծ մասամբ անկարող էր լինում ներգործել: Սրա հետևանքով, օրինակ, 1950–60-ական թվականներին Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած խուլագանության դեպքերից շատերը վերաճել են ավելի ծանր ելքով հանցագործությունների¹²: Նշենք նաև, որ շատ դեպքերում հան-

¹⁰ Muravyeva M., Bytovukha: Family violence in Soviet Russia. https://www.researchgate.net/publication/263480063_Bytovukha_Family_Violence_in_Soviet_Russia (дата обращения 17.04.2020).

¹¹ ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 189, թ. 7:

¹² Խուլիգանության մասին ավելի մանրամասն տե՛ս Մուրիսյան Հ., Խուլիգանության դրսևորումները Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյա կյանքում (1960-ականների երկրորդ կես), Հայոց պատմության հարցեր, № 19, Ե., 2018, 143–156:

ցավորությունը ծնող պատճառների մեջ հստակ ուրվագծվում էին պետության քաղաքականության բացերը: Այսպես՝ հատկապես գյուղական շրջաններում տարածված ընտանեկան բռնությունների դեպքերը, որոնց մեծ մասն ունեցել են ողբերգական ավարտ, պատճառ են հանդիսացել պետության կողմից կանանց հիմնախնդիրների անտեսման: Խորհրդային իշխանություններն արդեն 1930-ականներին հրաժարվել էին կանանց էմանսիպացման քաղաքականությունից: 1936 թ. արգելվել էին աբորտները, իսկ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1944 թ. հուլիսի 8-ի հրամանագրով պետությունը միայն գրանցված ամուսնության դեպքում էր ճանաչում ամուսինների իրավունքները և պարտականությունները, չգրանցված ընտանիքները զրկվում էին պետական աջակցությունից¹³: Քանի որ ընտանիքի կերակրողը հիմնականում տղամարդիկ էին, կանայք հանուն երեխաների հրաժարվում էին ամուսնալուծվելու մտադրությունից և ստիպված լուռ հանդուրժում պարբերական բռնությունները, որոնք շատ դեպքերում վերաճում էին անդառնալի ողբերգության: Ըստ ՀԽՍՀ ժողովրդական դատարանի մեղադրական նյութերի, այս տարիներին կանանց սպանությունների հիմնական դեպքերում միլիցիայի և պետական այլ մարմինների միջամտությունը եղել է արդեն ուշացած: Պետության միակ գործառույթն այս դեպքերում մեղավորներին մահապատժի ենթարկելն էր, ինչի կանխարգելիչ ազդեցությունը բավական թույլ էր¹⁴:

¹³ Չաքարյան Լ., Հարությունյան Ա., Գենդեր և լրագրություն, Ե., 2010:

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Ժամհարյան Գ., Ընտանեկան բռնություններն ընդդեմ կանանց Խորհրդային Հայաստանում ըստ ՀԽՍՀ ժողովրդական դատարանի նյութերի (1960-ական թվականներ), Շիրակի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», 2009, պրակ Բ, № 2, էջ 210–219:

1950–1960-ական թվականներին Խորհրդային Հայաստանի քրեածին միջավայրի վրա մեծ էր հանրային մտածողության տարբեր ենթաշերտերի ազդեցությունը՝ քրեական (այսպես կոչված «գողական»), ավանդական-հայրիշխանական և կենցաղային: Սա հանցավորության դեմ պետության «անդյուրաշարժ», միակողմանի պայքարի հետևանք էր: Իրավապահ համակարգն առավել կենտրոնացած էր տնտեսական բնույթի հանցագործությունների վրա, իսկ հասարակության ցածր իրավագիտակցության պայմաններում մարդկանց վարքը կարգավորվում էր բարոյական և սովորույթային նորմերի գերակշռությամբ¹⁵: Այսպես, օրինակ՝ 1959 թ. Ախուրյանի շրջանի Այգաբաց գյուղում միջադեպ էր տեղի ունեցել կոլտնտեսականներ Ս.Մ.-ի և Կ.Խ.-ի միջև: Կ.Խ.-ին կասկածելով իր տանից 1500 ռուբլու գողության մեջ՝ Ս.Մ.-ն իրավապահ մարմիններին դիմելու փոխարեն պահանջել էր, որ Կ.Խ.-ն երդվի աղոթագրքի վրա: Այս պահանջը զայրացրել էր Կ.Խ.-ին, նա հրաժարվել էր դա անել, և նրանց միջև սրված հարաբերությունները ի վերջո հանգեցրել էին Կ.Խ.-ին կողմից Ս.Մ.-ի դաժան սպանությանը¹⁶:

Մյուս դեպքը տեղի է ունեցել 1956 թվականին: ԼԿԵՄ անդամ Ա.Զ.-ն, չհավատալով դատաբժշկական փորձագիտական եզրակացության տվյալներին առ այն, որ իր մայրը մահացել է ուղեղի արյունազեղումից, և տուրք տալով գյուղում տարածված քամբասանքներին, իբր իր սկեսրոջը սպանել է Ա.Զ.-ի եղբոր կիևը՝ Ն.Դ.-ն, վերջինիս մանկահասակ երեք երեխաների ներկայությամբ դաժանորեն սպանել է նրան¹⁷: Ստացվում է, որ այս

¹⁵ Սուքիասյան Հ., նշվ. աշխ., էջ 148:

¹⁶ Տե՛ս ՀԱՄ. ֆ. 30, ց. 33, գ. 4, թ. 16–17:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 9–10:

դեպքում հասարակությունն անուղղակի մեղսակցություն ունի կատարված հանցագործությանը, քանզի մարդասպանի մոտ բամբասանքների միջոցով հրահրել էր ատելություն և թշնամանք հարսի հանդեպ:

Հաջորդ նկարագրվող դեպքում նույնպես հասարակության անուղղակի մեղսակցությունն ակնհայտ է: Դեպքը տեղի է ունեցել Երևան քաղաքում, 1958 թվականին: Ամուսինները ներկա են եղել կնոջ մորաքրոջ աղջկա հարսանիքին և բարեկամների պահանջով կինը երգել է հարսի ծնողների պատմին: Ամուսինը հարևան սենյակում լսել է կնոջ երգը, հարբած և ակնհայտ խիստ ագրեսիվ վիճակում դուրս է եկել սենյակից, անտեսելով ներկաներին՝ կնոջ երգը կոպտորեն ընդհատել է և պահանջել, որ իր հետ գնա տուն: Ճանապարհին հաշվի չի առել կնոջ արդարացումներն այն մասին, որ **իրեն երգել ստիպել են իր բարեկամները**, և հայիոյելով ու ծեծելով կնոջը բերել է տուն: Այստեղ ծեծը շարունակելով՝ ի վերջո սպանել է հղի կնոջը: Այս գործում առկա է մի շատ կարևոր հանգամանք. կնոջ երգը ընդհատելուն և նրան հարսանիքի սրահից դուրս հանելուն հետևել են բոլոր հյուրերը, և ոչ ոք չի միջամտել կնոջը բացահայտ կերպով սպառնացող ամուսնուն զսպելու, վերահաս ողբերգությունը կանխելու նպատակով: Ամուսինների գնալուց հետո հարսանիքը շարունակվել է, և միայն երկու երիտասարդ կանայք են եկել ամուսինների բնակարան, փորձել են պաշտպանել զոհին, սակայն մեղադրյալը նրանց ծեծելով վնասել է տանիք¹⁸:

Հասարակության կեցվածքը, մարդկանց վերաբերմունքը և մտածելակերպը կենցաղային բնույթի հանցագործություններում

¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 13–16:

որոշիչ գործոններ էին և սա ապացուցող բազմաթիվ այլ օրինակներ արձանագրված են մեր կողմից ուսումնասիրված նյութերում: Ներկայացվող հաջորդ դեպքը տեղի է ունեցել Աշտարակի շրջանի Ավան գյուղում, 1957 թվականին: Գյուղի կոլտնտեսության նախկին նախագահի և նախագահության հավակնորդի միջև երկարամյա վեճի շուրջ իսկական շեքսպիրյան կրքեր են ծավալվում՝ գյուղը բաժանելով երկու մասի: Հերթական բախումներից մեկում կոլտնտեսության նախկին նախագահին **գյուղի գրեթե ողջ հասարակության առաջ** դանակահարում է իր հակառակորդներից մեկը: Մարդասպանը դա անում է զոհի մոր ներկայությամբ, հարվածներ հասցնելով նաև մորը, և չի դադարում խփել նույնիսկ այն բանից հետո, երբ մայրը խնդրում է վերջ տալ, որովհետև որդին արդեն մահացել է¹⁹:

Մարդկային աներևակայելի դաժանության այս պատմություններին հաճախ դժվար է հավատալ, մանավանդ, երբ մեղադրական նյութերից պարզվում է, որ մեղադրյալներից շատերը եղել են կոմերիտմիության կամ կոմունիստական կուսակցության անդամներ, և մեծ մասը նախկինում դատված չեն եղել:

Հատկապես տարակուսանք է առաջացնում կանանց և երեխաների նկատմամբ ցուցաբերվող առանձնակի դաժանությունը հայ հասարակության մեջ, որտեղ ավանդաբար ընտանիքի նկատմամբ յուրօրինակ պաշտամունք գոյություն ունի: Այս դեպքերին ծանոթանալիս ակնհայտ է դառնում, որ տղամարդկանց դաժանությունն ուղղակի հետադեմ հայրիշխանական մտածողության արգասիք է, որի դրսևորումներից մեկը՝ խանդը, արխիվային նյութերում որպես ընտանեկան բռնությունների պատճառ

¹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 22–23:

ավելի հաճախ է հանդիպում, քան խոսկիզանական դրդումները կամ հարբեցողությունը: Ընդորում՝ կանանց սպանությունների մեծ մասը տեղի են ունեցել կամ երեխաների աչքի առաջ, կամ էլ ընտանիքի տղամարդը սպանել է նաև իր երեխաներին²⁰:

Հանցավորության աճին նպաստում էին նաև հասարակության մեջ ընդունված թյուր պատկերացումները բարոյականության, լավի կամ վատի մասին: Ասվածի վառ ասպացույցն, օրինակ, այն է, որ հայ կանայք միլիցիա չէին դիմում, երբ ենթարկվում էին բռնության: Մեր գրուցակից կանայք բոլորը միաբերան վկայեցին, որ կանանց բողոքելը միլիցիայում հասարակության կողմից չէր ընդունվում: Դա ամոթ էր համարվում, կանայք երբեք այդ քայլին չէին գնում²¹: Ավելին՝ կանանցից մեկը նույնիսկ հպարտանում էր իր կյանքի մի դրվագով: Աշխատելով հասարակական սննդի սպասարկման օբյեկտներից մեկում՝ այնտեղ ականատես է լինում մի երիտասարդի սպանության: Երբ քննչական մարմինները հարցաքննում են իրեն, նա չի բացահայտում մարդասպանի ով լինելը: Եվ կինը պատմում է, որ իրեն դրանից հետո բոլորը հարգում էին, որովհետև «չծախեց» ոչ ոքի: Այս դրվագը համարում ենք հայ հասարակության մեջ այսօր էլ արմատացած մտածելակերպի արտահայտություն, որի առանցքն այսպես կոչված «գողական» բարքերին տուրք տալն ու սեփական վարքագիծն այդ բարքերին այս կամ այն չափով հարմարեցնելն է: Նույն

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 8, թ. 81–86, գ. 17, թ. 17–21, տե՛ս նաև՝ Ժամհարյան Գ., նշվ. աշխ., էջ 210–219:

²¹ Հարցազրույց Ռոզա Միմոնյանի հետ, ծնվ. 1930 թ.: Ձայնագրվել է 01.03.2020 թ.: Հեղինակի անձնական արխիվ: Հարցազրույց Սեդա Ղազարյանի հետ, ծնվ. 1934 թ.: Ձայնագրվել է 05.03.2020 թ.: Հարցազրույց Ռիմա Հակոբյանի հետ, ծնվ. 1934 թ.: Ձայնագրվել է 05.03.2020 թ.: Հարցազրույց Ջեմմա Գևորգյանի հետ, ծնվ. 1936 թ.: Ձայնագրվել է 05.03.2020 թ.: Հարցազրույց Այսա Դավթյանի հետ, ծնվ. 1935 թ.: Ձայնագրվել է 11.03.2020 թ.:

մտածողության մասին վկայող նյութերից մեկը վերաբերում է 1961 թ. Երևան քաղաքում կատարված մի սպանության: Մեղադրյալ Խ.Հ.-ն հայիոյում և ապտակում է քաղաքացի Հ.Օ.-ին միայն նրա համար, որ վերջինս «մտերմիկ փոխհարաբերությունների մեջ է միլիցիայի աշխատողների հետ և իր սեփական մեքենայով ման է տալիս նրանց»: Տուժողի եղբայր Ա.Օ.-ն միջամտում է՝ եղբորը պաշտպանելու համար, սակայն սպանվում է մեղադրյալ Խ.Հ.-ի կողմից²²:

Այսպիսով՝ 1950–1960-ական թվականներին խորհրդային Հայաստանում նկատվում է հանցավորության աճ, ընդորում՝ նախկին տարիների համեմատ մեծանում է առանձնակի դաժանությամբ կատարված ծանր հանցագործությունների թիվը: Այս հանցագործությունների դեմ պետության պայքարն սպասված արդյունքը չէր տալիս, քանի որ խորհրդային իշխանությունները հանցավորության դեմ պայքարում չէին կարողանում ձերբազատվել իրենց գաղափարախոսական նախապաշարմունքներից, այն դեպքում, երբ ծանր հանցագործությունները թեմադրված էին այլ, մեծ մասամբ կենցաղային բնույթ ունեցող մտածելակերպով: Արդյունքում՝ իրավապահ մարմինների մոտ առցակայում էին մարդկանց սոցիալ-հոգեբանական վարքագծի ընդունների վրա ազդելու գործուն մեխանիզմները: Հատկապես խոստովական շրջաններում հասարակության ցածր իրավագիտակցությունը, ավանդական-հայրիշխանական, նաև քրեական մտածողությունը անհնար էին դարձնում ծանր հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ համակարգի և հասարակության համագործակցությունը:

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 6, թ. 73–77:

ГАГИК ЖАМГАРЯН

**ОСОБО ОПАСНЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ В СОВЕТСКОЙ
АРМЕНИИ КОНЦА 1950-ЫХ НАЧАЛА 60-ЫХ ГОДОВ
(АНАЛИЗ НЕКОТОРЫХ СОЦИАЛЬНО-
ПСИХОЛОГИЧЕСКИХ И ПРАВОВЫХ АСПЕКТОВ)**

Резюме

В статье предпринята попытка анализа некоторых социально-правовых аспектов особо опасных преступлений, совершенных в Советской Армении в 1950–60-ых годах. Основываясь на архивных документах, юридической литературе, а также на некоторых материалах устной истории, автор представляет основные принципы государственной политики в борьбе с преступностью. Особое место отведено распространённым среди населения формам бытовых представлений о морали («воровские понятия», патриархальное мышление и т.д.), и на их препятствующую роль в сотрудничестве между обществом и государством в борьбе с преступностью.

GAGIK ZHAMHARYAN

**MAJOR CRIMES IN SOVIET ARMENIA
IN THE LATE 50S – EARLY 60S
(ANALYSIS OF SOME PSYCHO-SOCIAL AND LEGAL ASPECTS)**

Summary

The article attempts to analyse certain social and legal aspects of major crimes, committed in Soviet Armenia in the 1950s and

1960s. Based on archival documents, legal literature, as well as on some material of oral history, the author presents basic principles of public policy in combating crime. A special place is given to the forms of everyday ideas about morality common among the population (“thieving concepts”, patriarchal thinking, etc.), and to their hindering role in cooperation between society and the state in combating crime.

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ
ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՀԽՍՀ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ
(1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

Հոգվածն անդրադառնում է 1960-ական թվականների խորհրդահայ իրականության դեռևս չուսումնասիրված կողմերից մեկին՝ կանանց նկատմամբ իրագործված ընտանեկան բռնություններին: ՀԽՍՀ ժողովրդական դատարանի մեղադրական նյութերի միջոցով փորձ է արվում բացահայտել այս երևույթների հիմնական առանձնահատկությունները և պատճառները:

Բանալի բառեր՝ կանանց իրավունքներ, ընտանեկան բռնություններ, ավանդական մորաժողություն, խանդ, առօրեականություն, հայրիշխանական կենցաղ:

Նախաբան: Ընտանեկան բռնությունների հիմնախնդիրը եղել և մնում է ընտանեկան հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների ուշադրության կենտրոնում: Հայ պատմագիտության մեջ այս խնդիրը նախկինում արժարժված չի եղել, սակայն Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության նկատմամբ ներկայումս աճող հետաքրքրության համատեքստում այս հիմնախնդրի հետազոտության կարևորությունն անժխտելի է: Ընտանեկան բռնությունների պրակտիկան, դատելով փաստական նյութից, տարածված էր 1960-ական թվականների Հայաստանում: Բնական է, որ սրա մասին լուր էին իշխանությունները, լուր էր ժամանակի մամուլը, այս հիմնախնդիրը

լուրջության էր մատնված նաև պետական-կուսակցական մարմինների տարաբնույթ հաշվետվություններում և զեկուցագրերում: Լավագույն դեպքում ընտանեկան բռնությունները դիտարկվում էին քրեական հանցանքների համապատկերում՝ անտեսելով սրանք ծնող առանձնահատուկ սոցիալ-հոգեբանական պատճառները: Այդ պատճառների ուսումնասիրությանը նվիրված է ներկայացվող հոդվածը, որում փորձել ենք ընտանեկան բռնությունները դիտարկել որպես 1960-ականների խորհրդահայ իրականության սոցիալական ֆենոմեն: Որպես հետազոտական նյութ են ծառայել հիմնականում Խորհրդային Հայաստանի Ժողովրդական դատարանի մեղադրական նյութերը, որոնցում ուշագրավ մանրամասներ կան բռնությունների դրդապատճառների և դրանց վերաբերող հանրային ընկալումների վերաբերյալ: Անդրադարձել ենք նաև ընտանիքին վերաբերող հարցերում խորհրդային իշխանությունների որդեգրած քաղաքականությանը և այդ քաղաքականության՝ ընտանեկան բռնությունների կանխարգելման վրա ունեցած ազդեցություններին:

1950-60-ական թթ. ընտանեկան հարաբերություններում տարածված են եղել սոցիալ-հոգեբանական վարքագծի, մտածելակերպի և պատկերացումների ընդհանուր մոդելներ: Նշված ժամանակա-շրջանում ընտանեկան բռնությունների դեպքերը մեծ մասամբ եղել են խանդի դրսևորումներ: Ընդ որում՝ խանդը ոչ միայն բռնության գործադրման հոգեբանական հզոր շարժառիթ էր, այլև հանդիսանում էր յուրօրինակ մտածողության, ընտանեկան հարաբերություններում հայրիշխանական ընկալումների արտահայտություն: Օրինակ՝ 1966 թ. Կամոյի շրջանի Գեղարքունիք գյուղում ամուսինը դանակի տասը հարված էր հասցրել կնոջը՝ սպանելով նաև իր նորածին երեխային՝ կասկածներ

ունենալով, որ այդ երեխան իրենը չէ: Իրավապահ մարմիններին իր տված ցուցմունքներում նա ասել էր, որ, եթե կնոջ հավատարմությանն ինքը կասկածել է, ուրեմն նրա սպանության համար մեղավոր չէ [4, թ. 19]: Փաստորեն՝ հանցագործի համար խանդը ոչ թե իր արարքի հանցավորությունը մեղմացնող, այլ բացառող հանգամանք էր, և նա իրեն լիովին անմեղ էր համարում՝ ելնելով կնոջ բարոյականության մասին իր ավանդապաշտական պատկերացումներից: Մյուս դեպքը տեղի է ունեցել 1969 թ.: Ամուսիններն ապրել են Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղում՝ ամուսնու եղբոր տանը: Որոշ ժամանակ անց ամուսինը կնոջը կասկածել է եղբոր հետ ինտիմ կապ ունենալու մեջ, տարել է նրան Երևան և առանձնակի դաժանությամբ սպանել Հրազդանի կիրճի մերձակա տարածքում՝ դիակը նետելով ջրանցքի մեջ [5, թ. 66–69]: Հետաքրքրականն այն է, որ սպանությունից հետո նա գնացել է իր հարազատների մոտ և իր մյուս եղբայրներին պատմել կատարած հանցանքի մասին: Եղբայրներից մեկը նույնիսկ օգնել է նրան հանցագործության հետքերը կոծկելու հարցում: Այս գործը բավական հետաքրքիր է այն իմաստով, որ հանցագործի կողմից ագրեսիվ վերաբերմունքը դրսևորվել է բացառապես կնոջ հանդեպ, իսկ եղբոր նկատմամբ, որի հետ կապի մեջ նա կասկածել էր կնոջը, ըստ էության, հանցավոր դիտավորություն չի եղել: Այստեղ, փաստորեն, հայրիշխանական ավանդույթն արգելում էր եղբոր վրա ձեռք բարձրացնել, սակայն չէր խանգարում սպանել «անբարոյական կնոջը»: Կնոջը սպանելուց հետո հարազատների պաշտպանությանն էր դիմել նաև Կամոյի շրջանի Լանջաղբյուր գյուղի բնակիչներից մեկը, այս դեպքում, սակայն, նրան չէին օգնել ոչ քույրը և ոչ էլ հայրը: Վերջինս նրան նույնիսկ ասել էր, որ մարդասպանին իր տանը չի ընդունի, և որ որդին

պետք է անհապաղ ներկայանա միլիցիայի աշխատակիցներին և խոստովանի իր արարքը, ինչը և որդին արել էր [2, թ. 83–88]:

Կրասնոսելսկի շրջանի Վերին Ճամբարակ գյուղի բնակիչներից մեկը 1964 թ. սպանել էր իր նախկին կնոջը և երեխաներին: Դեռևս 1955 թ.-ից նրանց ընտանիքում ամուսնու անհիմն խանդի հողի վրա ծագած վեճերն ի վերջո հանգեցնում են իր դաժանությամբ մարդկային երևակայության մեջ չտեղավորվող հրեշավոր հանցագործության: Մի քանի անգամ կնոջից բաժանվելուց և Ռուսաստանում թափառաշրջիկ կյանք վարելուց հետո ամուսինը վերադառնում է հայրենի գյուղ, որտեղ տեղավորվում է աշխատանքի: Սպանության օրն՝ ամուսինը, աշխատանքից տուն գալով, հետը կոնյակ է բերում և խմում մինչև գիշերվա ժամը 3–4-ը: Երբ կինը խնդրում է նրան անջատել ռադիոընդունիչը, որպեսզի երեխաները չարթնանան, նա պատասխանում է, որ դա արդեն իմաստ չունի, որովհետև ինքը շուտով բոլորին էլ սպանելու է: Իր հրեշավոր դիտավորությունը նա շուտով իրագործում է՝ որսորդական հրացանով սկզբում կրակելով կնոջ վրա, որից հետո իր վեցամյա և չորսամյա տղաների վրա (հայրը կասկածում էր, որ այս տղաներն իրենը չեն, կինը նրանց ունեցել է այլ տղամարդուց): Երեքին էլ սպանելուց հետո նա հանձնվում է իրավապահ մարմիններին: Սեփական արարքի հանդեպ հոգեբանական նույն վերաբերմունքը, այսինքն՝ զղջման լիակատար բացակայությունը և սեփական խանդն իր հանցանքն արդարացնող հանգամանք ընդունելն առկա է նաև այս դեպքում: Երբ ոճրագործի՝ դեռևս վիրավոր կնոջը (կինը ստացած հարվածներից մահանում է հիվանդանոցում) պատգարակով դուրս են բե-

¹ Ելնելով եթիկական նկատառումներից՝ հոդվածի մեջ նկարագրված դեպքերին առնչվող որոշ տվյալներ՝ դեպքի օրը և դեպքին առնչված մարդկանց անունները, չենք հրապարակում:

րում սենյակից, տղամարդը նույնիսկ օգնում է բացել պատգարակին խանգարող դռան փեղկը՝ անելով հետևյալ արտահայտությունը. «Ափսոս այդ շունը չսատկեց» [3, թ. 83–84]:

Առհասարակ խանդի թիրախում հիմնականում հայտնվում էին կանայք, և զոհերն էլ կանայք էին, և նմանատիպ հանցագործությունների գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ մեծ մասամբ այս կանայք ամուսնական դավաճանության մեջ մեղադրվում էին անհիմն: Ընտանեկան կոնֆլիկտներին հիմնականում միջամտում էին հարազատները՝ փորձելով հարթել դրանք: Նկատվում է նաև կոնֆլիկտները չհանրայնացնելու, ընտանիքի ներսում թաքցնելու միտում, ինչը բացատրվում է ավանդական մտածողությամբ պարտադրված՝ այսպես կոչված «խայտառակությունից» խուսափելու՝ հարազատների մտայնությամբ: Մեր կողմից ուսումնասիրված բոլոր դեպքերում զոհերի անմեղությունը հաստատվել է հարազատների, բարեկամների և այդ ընտանիքները ճանաչող մարդկանց վկայություններով: Կարելի է եզրակացնել, որ, չնայած որոշ բացառությունների, կանայք ընդհանուր առմամբ հավատարիմ էին ամուսնաընտանեկան ավանդական արժեքներին: Սրան հակառակ՝ կենցաղային հանցագործությունների համապատկերում առավել ընդգծված է տղամարդկանց ցածր սոցիալական և բարոյական պատասխանատվությունը: Ասվածի համար օրինակ կարող է ծառայել դեպքը, որ տեղի է ունեցել 1966 թ. Երևանում: Ամուսինները գրանցել են իրենց ապահարզանը, և հաջորդ օրվա երեկոյան ամուսինը իր սիրուհու հետ այցելել է իր բնակարան, որտեղ բնակվելիս է եղել նաև իր նախկին կինը: Կնոջ և սիրուհու միջև ծագել է վեճ այն բանից հետո, երբ կինը հանդիմանել է ամուսնու սիրուհուն հետևյալ արտահայտությամբ. «Երեկ ենք մենք զագսի միջոցով ամուսնալուծ-

վել, և դեռ հնարավոր է՝ միանանք: Ինչու՞ եք եկել և քայքայում եք ուրիշի ընտանիքը»: Վեճին միջամտել է ամուսինը և հարվածներ հասցրել նախկին կնոջը, նրա մորը և ընկերուհուն՝ սպանելով բոլորին [4, թ. 22]:

Տղամարդկանց շրջանում ավելի հաճախ էր դրսևորվում անպատասխանատու վերաբերմունք դեպի ընտանիքը, ինչը շատ հաճախ արտահայտվում էր նաև ֆիզիկական հաշվեհարդարով ու սպանությամբ: Օրինակ՝ 1963 թ. Մարտունու շրջանի Մարտունի ավանում ամուսինը այն բանից հետո, երբ կինը փորձել է թույլ չտալ նրան մեկնել Վրաստան, հարվածել է կնոջ գլխին՝ հասցնելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական լուրջ վնասվածք: Անօգնական թողնելով կնոջը՝ մեկնել է Վրաստան և անգամ, երբ իր հարազատները հեռագրել են նրան կնոջ մահամերձ վիճակի մասին, նա չի վերադարձել: Այնտեղ հանգիստ խղճով ամուսնացել է երկրորդ անգամ և վերադառնալուց հետո, առաջին կնոջից ունեցած երեխաների նկատմամբ տածելով մեծ ատելություն, ի վերջո իր երկրորդ կնոջ հետ միասին սպանել է նաև նրանց [4, թ. 1–9]: Մյուս դեպքը տեղի է ունեցել Կիրովականի շրջանի Քուլագերան գյուղում: Չնայած պատկառելի տարիքին՝ ամուսինն ինտիմ հարաբերությունների մեջ է եղել բազմաթիվ այլ կանանց հետ և օրինական կնոջ բազմաթիվ հանդիմանություններից հետո որոշել է մեկընդմիջտ ազատվել նրանից: Իր այս մտադրությունը նա իրագործել է 1958 թ.՝ կնոջ դաժան սպանությամբ: Նախ կնոջը ցած է նետել պատշգամբից, հետո սկսել է խեղդել, իսկ հետո, տեսնելով, որ վերջինս չի մահացել, ուրագի հարվածներով տանջամահ է արել նրան [1, թ. 1]:

Հետազոտված նյութերը ցույց են տալիս, որ բռնության ենթարկված կանայք իրենց և երեխաներին պաշտպանելու հնա-

րավորություն չեն ունեցել: Խոսքը գնում է հատկապես նրանց սոցիալական և իրավական պաշտպանության մասին: Մեղադրական նյութերը, որոնցում արձանագրված են նշված հանցանքները, ցույց են տալիս, որ տեղական իշխանությունների կողմից այս հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ գործուն քայլեր չեն եղել: Մենք չենք հանդիպում որևէ դեպքի, երբ կինը դիմեր միլիցիա և բողոքեր ամուսնու դեմ, չենք տեսնում տեղական իշխանության ներկայացուցիչների կանխարգելիչ աշխատանք նման խնդիրներ ունեցող ընտանիքների հետ, չենք տեսնում դաստիարակչական արդյունավետ ներգործություն հասոցիալական վարքագիծ դրսևորող տղամարդկանց վրա: Նման վարքագիծը քննադատվում էր միայն ընդհանուր բնույթի հոշակագրային, քարոզչական հրապարակումներում և հայտարարություններում: Ներկայացված բոլոր դեպքերում կնոջ նկատմամբ ատելությունն ունենում էր կասկածներից մինչև սպանության հանգեցնող մոլեգին ատելության նույն զարգացումը: Պետք է հատուկ նշել, որ այս հանցանքների առանձնակի դաժանությունը պայմանավորված չէ հանցագործների հոգեկան խնդիրներով կամ սադիստական հակումներով: Մեղադրական բոլոր եզրակացություններում առկա է դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունն այս տղամարդկանց հոգեկան սթափ վիճակի և սեփական արարքների ծանրությունը գիտակցելու մասին: Սպանությունները կատարվել են մեծ մասամբ ալկոհոլի ազդեցության տակ, սակայն, դատելով արարքների հանգամանքներից, ալկոհոլը նրանք օգտագործել են համարձակություն ձեռք բերելու համար, իսկ ոճիորը հղացել են սթափ վիճակում: Սպանությունները եղել են խանդի ազդեցությամբ կամ էլ անցանկալի կնոջից ազատվելու մտադրությունից ծնված հանցագործություն-

ներ: Այս հանգամանքը մեզ տալիս է հնարավորություն՝ եզրակացնելու, որ կանանց նկատմամբ ատելություն ծնող պատճառներն ավելի խորքային էին և պայմանավորված էին ամուսնալուծման հարցերում ավանդական մոտեցումներով [7]: Տղամարդկանց դեսպոտիզմն այս դեպքում կարելի է համարել հասարակության մեջ առկա հայրիշխանական ավանդույթի արձագանք², և խանդի տեսարանները, բռնությունները եղել են այս ընտանիքների ամուսնական կյանքի մշտական ուղեկիցները: Հատկապես գյուղական հասարակություններում կանանց հանդեպ վերաբերմունքը ձևավորվում էր նրանց սոցիալական կարգավիճակի, ընտանիքում նրանց իրավագուրկ, ծայնագուրկ և կենցաղային պարտականություններով կաշկանդված լինելու ավանդական պատկերացումների հիման վրա: Նման իրավիճակը սահմանափակում էր կնոջ իրավասությունները մինչև կենցաղային պարտականությունների մակարդակ, և, բնականաբար, դարձնում խոցելի տղամարդու կողմից հաճախ արտահայտվող անառիթ ագրեսիայի հանդեպ: Պետությունը ներգործում էր միայն հետևանքի վրա՝ դատելով հանցագործներին և մեծ մասամբ նշանակելով պատժի առավելագույն չափեր, սակայն հանցանքները ծնող պատճառների վրա, փաստորեն, ազդեցություն չէր ունենում: Սա ուներ իր պատճառները, որոնք հիմնականում պայմանավորված էին կանանց հիմնախնդիրների առնչությամբ

² Ընտանեկան հոգեբան Իվան Գերոնիմուսն իր հոդվածում, անդրադառնալով ինչպես միջինդասիական, այնպես էլ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում Ռուսաստանում ընտանեկան բռնություններին, սրանց պատճառների դասակարգման մեջ առանցքային կարևորություն է տալիս հայրիշխանական մշակույթին: Մեր կողմից հետազոտված նյութերն ընդհանուր առմամբ թույլ են տալիս նման հետազոտական կանխավարկածը ընդունելի համարել նաև Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած նմանատիպ դեպքերի հետազոտության պարագայում:

խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությամբ: Դիտարկենք այդ քաղաքականության որոշ կողմեր:

Այսպես՝ եթե 1920-ական թվականներին բուլշևիկները, խանդավառված հին բուրժուական հասարակության վերացման և նոր՝ սոցիալիստական արդարացի հասարակության ստեղծման գաղափարով, հանդես են գալիս այսպես կոչված «պետական ֆեմինիզմի» դիրքերից, որը ենթադրում էր կանանց իրավահավասարություն և «բուրժուական ստրկացնող կենցաղից» նրանց ազատագրում, ապա 1930-ականներին այս մոտեցումները վերանայվեցին: Խորհրդային իշխանություններն աստիճանաբար հրաժարվեցին «պետական ֆեմինիզմից», որովհետև կանանց հասարակական ակտիվության և, այսպես կոչված, «կենցաղի հեղափոխության»³ վերաբերյալ հռչակված սկզբունքները հակադրվում էին 1930-ականներին պետության համար առաջացած մարտահրավերներին: 1930-ական թվերին կանանց հասարակական ակտիվությունն սկսեց բացասաբար անդրադառնալ ծնելիության վրա, իսկ երկրին, հաշվի առնելով միջազգային լարված իրադրությունը, անհրաժեշտ էին զինվորներ: Ստալինյան սահմանադրությամբ արդեն 1936 թվականին արգելվեցին արժույթները, պետությունն սկսեց ավելի կարևորել ընտանեկան փոխադարձ պատասխանատվությամբ հարաբերությունների դերը, ազատ ամուսնական հարաբերություններն այլևս չէին խրախուսվում: 1944 թ. հուլիսի 8-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով պետությունը միայն գրանցված ամուսնության դեպքում

³ «Կենցաղի հեղափոխության» սկզբունքը ենթադրում էր սպասարկման ոլորտի զարգացման միջոցով ազատել կնոջը տնային աշխատանքներից: Մնունդը պետք է մատուցվեր ճաշարաններում, լվացքը պետք է արվեր լվացքատներում, իսկ երեխաների կրթությամբ և դաստիարակությամբ պետք է զբաղվեին մուր-մանկապարտեզները և դպրոցները:

էր ճանաչում ամուսինների իրավունքները և պարտականությունները, չգրանցված ընտանիքները զրկվում էին պետական աջակցությունից: Հետագայում ընդունված այլ հրամանագրերով խիստ դժվարացվեց ամուսնալուծության գործընթացը, ամուսնալուծությունը չէր խրախուսվում պետության կողմից, դա համարվում էր խորհրդային քաղաքացու բարոյական անկայունության խորհրդանիշ [6]:

Դժվար չէ նկատել, որ այս փոփոխությունները կանանց շատ հարցերում դարձնում էին խոցելի: Նախ՝ կենցաղային պարտականություններով կաշկանդված լինելը և աշխատելու քիչ հնարավորությունը խորացնում էր նրանց տնտեսական կախվածությունը տղամարդուց, երեխաների նորմալ դաստիարակությունը, ըստ էության, հնարավոր էր միայն ընտանիքում, և սա ապահովելու, ինչպես նաև ապրուստի միջոցներից չզրկվելու համար նրանք խուսափում էին ամուսնալուծությունից, ինչը, ի դեպ, նաև հասարակական պարսավանք հարուցող երևույթ էր: Բնական է, որ ընտանիքում ծնված կոնֆլիկտներն այս պարագայում կամ հարթվում էին ի հաշիվ կանանց ինքնազոհաբերությունների, կամ էլ հանգեցնում էին նրանց նկատմամբ բռնության: Եթե սրան ավելացնենք նաև ընտանեկան հարաբերություններում առկա հայրիշխանական, ավանդական պատկերացումները, որոնք բնորոշվում էին ընտանեկան հարաբերություններում տղամարդկանց թելադրման և ուղղորդման բացառիկ մենաշնորհով, ապա պարզ է դառնում, որ Խորհրդային Հայաստանում 1960-ական թվականներին կանանց իրավունքների պաշտպանության և նրանց հասարակական դերի բարձրացման հայեցակարգերը չէին գործում:

Վերջում ավելացնենք նաև, որ սույն հոդվածով, բնականաբար, չի սպառվում ընտանեկան բռնությունների հիմնախնդիրը, ինչը բազմակողմանի և խորքային հետազա վերլուծությունների կարիք ունի՝ հաշվի առնելով նաև նրա հետազոտության ցածր մակարդակը Հայաստանում: Ուստի թեմայի հետազա ուսումնասիրությունների համար կարևորում ենք նաև առավել բազմակողմանի աղբյուրագիտական բազայի օգտագործումը, ինչպես նաև հիմնախնդրի դիտարկումը սովորության իրավունքի դիրքերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 3:
2. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 7:
3. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 8:
4. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 13:
5. ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 16:
6. Զաքարյան Լ., Հարությունյան Ա. Գենդեր և լրագրություն, Եր., «Ասողիկ», 2010:
7. Геронимус И. Корни домашнего насилия.// Интернет издание, «Отечественные записки». N 2(53). 2013. <http://www.strana-oz.ru/2013/2/korni-domashnego-nasiliya>, дата обращения 08.05.2019

ГАГИК ЖАМГАРЯН

СЕМЕЙНОЕ НАСИЛИЕ ПО ОТНОШЕНИЮ К ЖЕНЩИНЕ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ ПО МАТЕРИАЛАМ НАРОДНОГО СУДА АССР (1960-Е ГОДЫ)

Резюме

Ключевые слова: права женщин, семейное насилие, традиционное мышление, ревность, повседневность, патриархальный быт.

В статье рассматривается одна из еще не изученных проблем советско-армянской реальности 1960-ых годов: семейное насилие против женщин. По обвинительным материалам народного суда АССР делается попытка выявления основных специфик и причин этих явлений.

GAGIK ZHAMHARYAN

FAMILY VIOLENCE AGAINST WOMEN IN THE SOVIET ARMENIA BY MATERIALS OF FOLK COURT (1960S)

Summary

Keywords: women's rights, family violence, conventional thinking, jealousy, everyday life, patriarchal mode.

The article considers one of the yet unexplored issues of 1960s Soviet-Armenian reality: the family violence against women. By indictment materials of Armenian SSR Folk Court the article seeks to reveal main specificities and reasons of phenomena.

*Շիրակի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր»
(նվիրված Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարանի հիմնադրման 85-ամյակին),
Գյումրի, 2019, Պրակ Բ, N 2, էջ 210–219:*

«НЕСУНЫ» В СОВЕТСКОЙ АРМЕНИИ 1960-ЫХ ГОДОВ. АНАЛИЗ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ ПО УСТНЫМ ИСТОЧНИКАМ

Аннотация

В статье анализируется историческая память о мелких хищениях государственного имущества, которые были распространённым феноменом социальной жизни Советской Армении в 1960-ых годах. В исследовании рассматриваются способы мелких хищений, их причины, а также некоторые особенности борьбы государства с этими экономическими преступлениями. Особый акцент делается на материалах устной истории: на результатах исследовательских интервью, которые являются основными источниками данного исследования. Основываясь на личных воспоминаниях респондентов, автор пытается выявить некоторые особенности общественного восприятия этих явлений, в контексте повседневных практик выживания.

Ключевые слова: *мелкие хищения, коррупция, советское общество, социальный феномен, устная история, историческая память.*

Среди многообразных источников истории советской повседневности 1960-ых годов особое место занимают материалы «устной истории» в форме различных воспоминаний и расска-

зов, с помощью которых выявляются особенности индивидуальных и коллективных повседневных поведенческих практик обычных граждан, живших в ту сложную и полную противоречий эпоху. Во время проводимых нами интервью у представителей старшего поколения, воспоминания о советском прошлом, о жизни в великой стране и о его падении пробуждают смешанные чувства гордости и разочарования. Истории о советских временах украшены фрагментами былой индустриальной, культурной и экономической мощи Советской Армении, которые и по сей день подпитывают ностальгию людей, проживших лучшие годы своей жизни в Стране Советов. Советское прошлое для них является счастливым временем достойной жизни и работы, которое сменилось всеобщей разрухой, бедностью и упадком нравов постсоветского времени. Общеизвестный факт, что люди старшего поколения с трудом адаптируются, а некоторые из них и вовсе отвергают образ жизни, навязанный им новыми реалиями. Прежде всего, обусловлено это тем, что советское общество отличалось своей идеологизированностью. Коммунистической идеологией определялись стремления, жизненные приоритеты, моральные идеалы и ценности советского человека, и вне зависимости от того, принимал он их, или нет, этими идеологическими установками формировался образ мышления большинства. Немаловажно и то, что в сознании людей поистине внушительные достижения Армении в советскую эпоху укрепили веру в убеждение, что они живут в самой прекрасной стране и строят самое справедливое общество. Неким обобщённым эталоном хорошей жизни советской эпохи для них является всеобщая социальная обеспеченность и гарантированный прожиточный минимум, которые иск-

лючали социальную поляризацию и классовые различия, присущие постсоветскому обществу. Однако, как было выше упомянуто, советское прошлое восторженно оценивается в сравнении с нынешними реалиями. Если же во время интервью респонденты фокусируются исключительно на «советских» воспоминаниях, без сравнений, то помимо свидетельств о стабильности и всеобщего благоденствия, выявляются также и отрицательные черты советского образа жизни. Одним из таких «подводных рифов» советской эпохи является практика мелких хищений и спекуляций государственного имущества. В Советской России мелких расхитителей социалистической собственности называли «несунами»¹. В Армении определённого слова, характеризующего данное явление, не было. Но в данной статье мы будем его использовать, потому что как во всем СССР, так и в Советской Армении, это явление было широко распространённым социальным феноменом. Изученные нами архивные материалы, а так же свидетельства респондентов интервью подтверждают огромные масштабы мелких хищений в повседневной жизни 1960-ых годов. Житель армянского города Кировакан (ныне Ванадзор) Егия Гиносян рассказывает, что в те годы даже честные люди, жившие на одной зарплате, которые утром приходили на работу, усердно выполняли госплан, а вечером уставшие, но с чистой совестью возвращались домой, даже они хотя бы раз в своей жизни пользовались материальными благами, доставшимся им окольными путями: если не своровали сами, то купили либо у

¹ Смольяк О., Советские несуну, «Отечественные записки» 2012, №1, портал Журнальный зал, <http://magazines.russ.ru/oz/2012/1/s40.html> (дата обращения 22.06.2019).

«несуна», либо у перекупщика². Жительница города Ванадзор, Донара Тадевосян, в связи с этим вспоминает, как на кироваканском заводе «Автогенмаш», где сама проработала долгие годы, сотрудницы завода часто купали сваренное женское белье из Кироваканской трикотажной фабрики от самих работниц фабрики³. А житель села Дарбас, Норик Алоян, рассказывает, как эти работницы умудрялись красть трикотажные изделия: «Они надевали их, из фабрики выносили прямо на себе. В народе шутили, что работницы фабрики на работу приходят худые, а уходят растолстевшими»⁴.

Практика такого рода хищений была повсеместна и, в целом, не воспринималась как воровство. Люди часто употребляли выражения, объясняющие бытовое понимание данного явления: «имеющий дело с мёдом, обязательно смочит палец», «тот, кто ворует у государства, не вор», «государство от этого не обеднеет», «капля в море» и так далее. Судя по изученным материалам, в сознании людей такого рода деятельность не вызывала моральных дилемм, и если они воздерживались от хищений, то только от страха быть пойманным.

В 1961 г. в Армянской ССР был принят новый уголовный кодекс, предусмотривший более строгие наказания за расхитительство социалистического имущества. Тем самым на законодательном уровне государством защищался принцип приоритет-

² Беседа № 1. Участвовали: Егия Гиносян, 1939 г. р.; его жена Зварт Донапетян, 1946 г. р. Записано 13.04.2019. Личный архив автора.

³ Беседа № 2. Участвовала: Донара Тадевосян, 1936 г. р. Записано 15.04.2019. Личный архив автора.

⁴ Беседа № 4. Участвовал: Норик Алоян, 1941 г. р. Записано 28.04.2019. Личный архив автора.

ности социалистической собственности над частной собственностью граждан.⁵ Однако на деле борьба с хищениями в СССР не отличалась особой принципиальностью, профессионализмом и продуктивностью.⁶ Неэффективность борьбы с хищениями имела ряд причин. Во-первых, среди населения была некая лояльность к деятельности «несунов». В условиях дефицита они, по сути, негласным образом прислуживали потребительским нуждам граждан, поставляя товары, которых всегда остро не хватало. Зварт Донапетян вспоминает забавный случай, который произошёл в магазине, откуда все жители их квартала «из-под прилавка» покупали масло у одной продавщицы. Кое-кто из покупателей, заметив, как продавщица рукой придавливает рычаг весов, резко хватает её руку и говорит: «Это тоже заверни в пакет»⁷. Но такого рода «разоблачения» были редкостью и серьёзных последствий не имели. Наоборот, этих людей благодарили, с ними сохраняли постоянную связь. Им прощали и обвес, и завышение цен на товар. Как правильно отмечает историк Ольга Эдельман: «В значительной мере вокруг них формировалась знаменитая советская система блата».⁸ В рассказах респондентов можно словить лестные тона о своих полезных знакомых. Дона-

⁵ Бышевский Ю.В., Ответственность за кражу по уголовным кодексам советского периода, Научный вестник Омской академии МВД России № 4 (55), 2014), стр.65, <https://cyberleninka.ru/article/v/otvetstvennost-za-krazhu-po-ugolovnym-kodeksam-sovetskogo-perioda> (дата обращения 22.06.2019).

⁶ Более подробно об этом: Эдельман О., Советские люди на рабочем месте, «Отечественные записки» 2003, №3, портал Журнальный зал, http://magazines.russ.ru/oz/2003/3/2003_3_40.html (дата обращения 23.06.2019).

⁷ Беседа № 1. Участвовали: Егия Гиносян, 1939 г. р.; его жена Зварт Донапетян, 1946 г. р. Записано 13.04.2019. Личный архив автора.

⁸ Эдельман О., Советские люди на рабочем месте, «Отечественные записки» 2003, № 3, портал Журнальный зал, http://magazines.russ.ru/oz/2003/3/2003_3_40.html (дата обращения 23.06.2019).

ра Тадевосян, например, вспоминает случаи из своей жизни, когда она сумела, благодаря своим знакомствам, приобрести дефицитные товары. Предметом особой гордости для неё был миксер немецкого производства, который прослужил ей очень долго. Миксер она купила у одного заведующего складом. За миксер, естественно, переплатила, по ее словам-дала «магарыч». Ещё вспоминала, как на заводе «Автогенмаш» «несуны»-рабочие крали металлические кастрюли, из которых потом изготавливались шампуровы. «У меня этих шампуров было порядка сто»,- вспоминает Тадевосян,- «я их раздавала своим близким и знакомым. Они были очень довольны, от этого мне самой было приятно». Тадевосян утверждает, что в этих отношениях очень важным, можно сказать определяющим фактором выступал характер межличностных отношений, и что при теплых, дружеских взаимоотношениях с нужными людьми иногда можно было обойтись и без «магарыча».⁹

«Люди помогали друг другу, без этого было не обойтись»,- говорит Норик Алоян. «В 60–70-ых годах стройматериалы законным путем достать практически было нереально, вот и каждый человек искал пути для решения проблемы. Мы не считали это серьезным проступком». Он вспоминает, как в конце 60-ых началось строительство Кироваканского завода по производству химического волокна. Материалов со стройки выносили так много, что расположенном вблизи селе Дарбас начался настоящий строительный бум. Алоян утверждает, что практически все дома в селе построены на материалы, вывозимые из стройплощадок

⁹ Беседа № 2. Участвовала: Донара Тадевосян, 1936 г. р. Записано 15.04.2019. Личный архив автора.

крупных предприятий. С особой благодарностью Алоян вспоминал управляющего строительного треста, с помощью которого он смог достать нужные стройматериалы для постройки собственного дома.¹⁰

Естественно, что в условиях всеобщего процветания неформальных экономических отношений, когда «нужные связи» были необходимым условием добычи дефицитных товаров, о сотрудничестве населения с правоохранительными органами по разоблачению расхитителей говорить не приходится. В своём докладе от 1958 года комитету государственного контроля города Ереван, о проверках работы народных судов Лениканского района, народный судья жаловался на низкую раскрываемость дел о государственных хищениях в Лениканском (ныне Гюмри) текстильном и мясокомбинатах. Объяснял он это тем, что свидетели по этим делам или наотрез отказываются давать показания, или отказываются от своих показаний в стадии предварительного расследования¹¹. Ещё одной причиной неэффективности борьбы с хищениями были изъяны организации производства в советских предприятиях. Например, тот же комитет государственного контроля города Ереван в 1967 году выявил огромные недочёты в работе администрации Ереванского экспериментального электротехнического завода по учёту материальных ценностей. Вот небольшая выдержка из доклада комитета: «Материалы склада №2 разбросаны по всей территории завода: и во дворе, и в цехах, рассеяны повсюду под открытым небом. На них даже навеса

нет, чтобы укрыть товары от дождей и снега. Разбросанность этих материалов по всей территории завода создаёт благоприятные условия для их расточительного использования, так как они не выпускаются на основании законных документов. Как правило, эти документы оформляют потом, не имея представления о поступлении, расходе и об остатке товаров.

Таким образом, важная и ответственная задача учёта и отчётности в предприятии выполняется крайне неудовлетворительно, что создаёт благоприятные условия для злоупотреблений некоторых сотрудников завода»¹².

В уголовных материалах народных судов часто встречаются свидетельства, как сотрудники пользовались организационными недостатками предприятий. Например, главный бухгалтер колхоза Куйбышев Степанаванского района поддельные доверенности на имя колхозников штамповал печатью кассы, которая была оставлена без присмотра в открытом ящике стола. По этим доверенностям он в течение двух лет (1962–1964 гг.) обкрадывал колхозную кассу, в целом украв из неё 377 рублей. А потом, чтобы замаять следы своих хищений, создал путаницу в бухгалтерских журналах.¹³ А ночной сторож Степанаванской фабрики по производству ковров, пользуясь доверием заведующего складом, систематически занимался кражей волокна. В деле отмечается, что дверь от склада не имела отдельных ключей, его можно было открыть любым ключом от других дверей здания.¹⁴ Ещё одним наглядным случаем можно считать дело жителя села Киро-

¹⁰ Беседа № 4. Участвовал: Норик Алоян, 1941 г. р. Записано 28.04.2019. Личный архив автора.

¹¹ НАА, ф. 46, оп. 18, д. 124, л. 9–10.

¹² НАА, ф. 43, оп. 2, д. 9, л. 11.

¹³ НАА, ЛОО, ф. 9, оп. 2, д. 6, л. 18–20.

¹⁴ НАА, ЛОО, ф. 9, оп. 3, д. 5, л. 23–25.

во Степанаванского района. С 1961 по 1962 год он являлся заведующим складом сельского кооператива, а после ликвидации кооператива в 1967 году устроился экспедитором в областном кооперативе. Воспользовавшись тем, что при ликвидации сельского кооператива не проводилась инвентаризация материальных ценностей, в отчётах он утаил точные данные о недостачах в доверенном ему складе. К 1969 году за счёт махинаций общая сумма присвоенных им денег составила 2458 рубля. На этом он не остановился и перешёл на более крупные хищения, в том же 1969 году из доверенного ему 63 тонн угля украв около 20 тонн.¹⁵ Приговоры, которые были вынесены по данным нарушениям, наводят на мысль, что в делах о хищениях социалистической собственности судебные органы руководствовались субъективными соображениями. Так, бухгалтер колхоза за хищение 377 рублей получил три года заключения в исправительной колонии общего режима. Суд отклонил ходатайство руководства колхоза о прекращении уголовного дела и передачи бухгалтера на воспитание в коллективе, так как он «совершил явный подлог и не возместил ущерб». Сторож фабрики за хищение на сумму 179 рублей получил два года общего режима, а экспедитор областного кооператива, который присвоил 2458 рублей государственных денег, да ещё и 20 тонн угля, отделался одним годом исправительных работ. В обвинительном заключении мягкость его наказания объясняется тем, что он возместил большую часть нанесённого ущерба. Однако, в этом деле есть еще один нюанс. В деле фигурируют руководители областного кооператива, с раз-

решения которых он 3 тонны угля продал начальнику железнодорожной станции, деньги получил наличными и значительную часть этих денег тоже присвоил. Из материалов дела, к сожалению, не возможно определить какое именно обстоятельство стало решающим для смягчения наказания: возмещение ущерба, или влиятельные друзья экспедитора. Не исключено, что одновременно сработали оба обстоятельства, однако мы склонны считать, что решающим фактором выступило желание администрации кооператива пресечь излишнюю огласку их деятельности. В этом контексте нужно рассматривать и ходатайство администрации колхоза. Советские предприятия пытались выгораживать «несунов» не только из гуманных побуждений. Огромное количество вовлеченных сотрудников, а так же недочеты в организаторской работе, которые могли тоже всплывать в процессе расследований фактов хищений, создавали реальную угрозу дискредитации всего предприятия. По этому руководство старалось избежать сотрудничества с правоохранительными органами. А к «несунам» применялись методы воздействия воспитательного характера: товарищеские суды, выговоры с занесением, разные взыскания, лишения премий, исключения из партии. Житель города Ванадзор Эдик Карапетян вспоминает, что в Ленинакане в 60-ых годах в одном из предприятий для провинившихся рабочих даже существовало что-то похожее на гауптвахту.¹⁶ Однако существенного воздействия на проблему мелких хищений эти методы не произвели. Респонденты даже вспоминают, что руководители предприятий довольно часто сами поощряли мелкие хи-

¹⁵ НАА, ЛОО, ф. 9, оп. 3, д. 5, с. 36–38.

¹⁶ Беседа № 5. Участвовал: Эдик Карапетян, 1946 г. р., его жена Агавни Манян, 1953 г.р. Записано 25.04.2019. Личный архив автора.

щения. Как отмечает Донара Тадевосян, иногда стоило просто попросить, они всегда шли на встречу, разрешали брать что нужно.¹⁷ В своей статье Ольга Смольяк эту практику называет «мотивационным ресурсом заводской администрации в вопросе регулирования взаимоотношений с работником».¹⁸

В приведённых материалах поражает тот факт, что люди, по сути идущие на откровенную кражу и разного рода махинации, были обычными советскими гражданами, которые искренне возмутились бы, если бы их называли преступниками. Самим большим парадоксом было то, что возмущение их было бы оправданным. Преступниками они действительно не являлись, однако своеобразный уклад советской жизни вынуждал обладать особыми качествами и применять их в повседневной жизни: ловкость, изворотливость, находчивость и так далее. У одних эти качества присутствовали изначально, у других они формировались в процессе трудовой деятельности. Как бы там не было, но умение ориентироваться в нюансах производственных отношений и в юридических, организационных пробелах работы предприятий, а так же определённые навыки по налаживанию полезных знакомств и связей, во многом характеризуют повседневные поведенческие практики советской эпохи. Вокруг этих практик иногда разворачивались страсти, достойные сюжетам приключенческих фильмов. Рассказ Норика Алояна по этому поводу, чем то напоминает один из таких фильмов. Герой рассказа его одно-

¹⁷ Беседа № 2. Участвовала: Донара Тадевосян, 1936 г. р. Записано 15.04.2019. Личный архив автора.

¹⁸ Смольяк О., Советские несуну, «Отечественные записки» 2012, № 1, портал Журнальный зал, <http://magazines.russ.ru/oz/2012/1/s40.html> (дата обращения 22.06.2019).

сельчанин, которому удалось из строительного склада украсть цемент в крупных размерах и уйти от преследования весьма «изохрённым» способом. На трассе его грузовик остановил работник милиции, подсел к нему и потребовал поехать с ним в ближайший милицейский участок для оформления факта кражи госимущества. Шофёр сумел провести груз по известной ему дороге, где по близости была река. Когда проезжали через реку, он незаметно для сидячего рядом милиционера приподнял кузов грузовика, и прямо находу разгрузил цемент в реку.¹⁹

Самое популярное объяснение массовости мелких хищений государственного имущества, это дефицит. Однако тут важно понимать, что такое объяснение, закреплённое лишь «сухими» цифрами статистических данных, взятых из официальных источников, сужает понимание причин, мотивирующих людей на кражу государственного имущества, сведя его к банальному недостатку потребительских товаров. На самом деле пренебрежительное отношение к государственной собственности было обусловлено более глубокими социальными противоречиями и различиями. Наличие социальных различий государством отрицалось. Пропагандой то и дело распространялся миф о том, что в социалистическом обществе каждый человек имеет возможность на социально обеспеченную жизнь. На деле же «закрытых дверей» для обычного человека было много. На них респонденты указывают очень часто в своих воспоминаниях. Чтобы их открыть, нужны были огромные финансовые средства, или хорошие связи. Зарплаты хватало в основном на пропитание, а для получе-

¹⁹ Беседа № 4. Участвовал: Норик Алоян, 1941 г. р. Записано 28.04.2019. Личный архив автора.

ния приличного лечения, отдыха, образования и других социальных услуг нужно было поднапрячься. Егиа Гиносян, например, с уверенностью отрицал наличие бесплатного лечения в СССР. Он утверждал, что никакой хирург без «магарыча» даже не подошел бы к операционному столу. Вспоминая очереди на машину, он утверждал, что до обычного человека они так и не доходили. По этому поводу он даже вспомнил практику, которая часто применялась у них на фабрике по заготовке клея. Чтобы избежать лишних проблем с органами контроля, вместо себя члены администрации фабрики в очереди записывали рабочих, и когда очередь наступала, рабочие передовали машину им. Естественно, за это рабочие получали определенные льготы и привилегии.²⁰

Примечательно то, что самими востребованными 60-ых, по свидетельствам респондентов, были буфетчик, заведующий складом, продавец, и так далее: то есть, работы, подразумевавшие определенную материальную ответственность, соответственно и доступ к материальным ценностям. Самыми престижными были профессии доктора, юриста, экономиста. Однако, как утверждают респонденты, дети обычных рабочих на эти профессии очень редко претендовали, потому что все знали, что в вузах эти места уже распределены. Конечно же, эталоном карьерного роста были руководительские должности, начиная с должностей в заводских администрациях, заканчивая партийными должностями разных рангов. Характерным моментом в оценках важности трудовой, профессиональной деятельности у респондентов было то, что у них перспективы побочных доходов были в

²⁰ Беседа № 1. Участвовали: Егиа Гиносян, 1939 г. р.; его жена Зварт Донапетян, 1946 г. р. Записано 13.04.2019. Личный архив автора.

приоритете над творческой или профессиональной самореализацией. То есть, в условиях всеобщего недостатка в сознании людей наличие побочных доходов или возможности распределения материальных и социальных благ ассоциировались с неким статусом, влиянием и социальным престижем, который был объектом стремлений большинства. Этот статус не был прописан в идеологических догматах, не соответствовал пропагандистскому идеалу «честного пролетария» – безкорыстного стахановца, труженика и борца за победу социалистических идеалов, однако в сознании людей он был решающим критерием в оценке успешности человека. В классической комедии Л. Гайдая «Бриллиантовая рука», образным проявлением этих настроений можно считать ставшим крылатым выражение «чтобы ты жил на одну зарплату», что в сознании большинства в обобщенном смысле означало мерилom неудавшейся жизни.²¹ Атмосфера ценностных оценок значимости побочных доходов в сознании советских людей показана в замечательной армянской драме «Механика счастья». Хотя и фильм был снят в 1982 году, но характерно описывает жизнь конца 60-ых, начала 70-ых годов. В сцене, где героиню Сону выдают замуж за простого инженера-изобретателя Рубена, есть замечательный фрагмент, где дядя Соны, самый старший в роду, самый влиятельный человек, слово которого закон, начинает знакомство с женихом распросами о его зарплате и спрашивает: «а побочных доходов у тебя нет?», чем оскорбляет честного и порядочного инженера.²²

²¹ «Бриллиантовая рука» (реж. Леонид Гайдай, 1968 г.).

²² «Механика счастья» (реж. Нерсес Оганесян, Гор Саакян).

В контексте вышесказанного «несуны» символизируют упомянутое стремление обычных людей, хоть как то обеспечить себя побочными доходами.

В заключении отметим, что во всей иерархии теневых экономических и социальных отношений в СССР, мелкие хищения являются лишь маленькой, незначительной их частью. Сравнивая мир расхитителей социалистической собственности с дарвиновской схемой эволюции организмов, О. Эдельман «несунов» относит к одноклеточным организмам, на уровне с инфузорией-туфелькой. Она отмечает, что были еще и многоклеточные, «одна других хитрее». Имеются ввиду цеховики, партийные чиновники, администрации разных предприятий и так далее.²³ Однако мелкие хищения социалистической собственности, на наш взгляд, являются самой характерной стороной советской коррупции, самой его представительской стороной, так как более наглядно выявляют особенности психологического восприятия, которым посягательства на социалистическую собственность в сознании людей дифференцировались от обычных, даже самых тяжких преступлений. Характер общественного понимания данного социального феномена относит его под определение «повседневных стратегий выживания», спровоцированных сложными социально-экономическими условиями 1960-ых годов.

²³ Эдельман О., Советские люди на рабочем месте, «Отечественные записки» 2003, № 3, портал Журнальный зал, http://magazines.russ.ru/oz/2003/3/2003_3_40.html (дата обращения 23.06.2019).

«ԹՈՅՆՈՂՆԵՐԸ» 1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲԱՆԱՎՈՐ ԱՂՔՈՒՐՆԵՐԻ

Ամփոփում

Հոդվածում վերլուծվում է 1960-ականներին Խորհրդային Հայաստանի սոցիալական կյանքի տարածված ֆենոմեններից մեկը՝ պետական ունեցվածքի մանր յուրացումները: Քննարկվում են դրանց պատճառները, եղանակները, ինչպես նաև պետության պայքարի որոշ առանձնահատկություններ: Հատուկ ուշադրություն է հատկացվում բանավոր պատմության նյութերին՝ հետազոտական հարցազրույցների արդյունքներին, որոնք սույն ուսումնասիրության համար ծառայել են որպես հիմնական սկզբնաղբյուրներ: Հիմնվելով հարցազրույցների մասնակիցների անձնական հիշողությունների վրա՝ հեղինակը փորձում է բացահայտել այս երևույթների հանրային ընկալման որոշ առանձնահատկություններ՝ առօրյա գոյապահպանման մարտավարությունների համատեքստում:

GAGIK ZHAMHARYAN

«PILFERERS» IN SOVIET ARMENIA 1960S. HISTORICAL MEMORY ANALYSIS BY ORAL SOURCES

Summary

Key words: *small embezzlement, corruption, soviet society, social phenomenon, oral history, historical memory*

The article analyzes the historical memory of small embezzlement of state property which was a common phenomenon of social life of Soviet Armenia in the 1960s. The study examines the methods of small embezzlement, their causes, as well as some features of the state's combat against these economic crimes. Special emphasis is placed on the materials of oral history that is the results of research interviews which are the main sources of this study. Based on personal memories of the respondents, the author has tried to reveal some features of the public perception of those phenomena in the context of everyday survival practices.

*«Norwegian Journal of development of the International Science»,
№ 34/2019, pp. 10–14.*

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՄԱՆՈՐԸ ԵՎ ԱՅՆ ՏՈՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային և, ընդհանրապես, տոների առօրյային անդրադարձ կատարող ժամանակակից ուսումնասիրողներն առաջին հերթին անդրադառնում են տոների հետազոտման մեթոդական կողմերին: Նրանց մեծամասնությունը հիմնականում ընդգծում է այն հանգամանքը, թե արդյո՞ք պետք է տոնը համարել կենցաղի կամ առօրյայի մաս և թե ո՞րն է դրանց հատման սահմանը: Այս մտքերը լավագույնս ամբողջացնում է ռուս հետազոտող Դ. Ջևերտը: Նա առաջ է քաշում հետևյալ հայեցակարգը. «Տոնը մարդուն հարկավոր է իրականությունը հաղթահարելու համար, քանի որ նա ստիպված է հաշտվել առօրյայում սահմանված գործողություններն իրականացնելու անհրաժեշտության հետ»¹: Ստիպողականությունը, իր հերթին, ենթադրում է հաշտեցում, հետևաբար՝ տոները միավորում են հասարակությանը:

Դ. Ջևերտը, քննարկելով գերմանացի փիլիսոփաներ Յան Ասմանի և Մաքս Վեբերի հայեցակարգերը, հանգում է այն եզրակացության, որ քարացվածությունը երկու իմաստ ունի. մի կողմից այն հանդիսանում է մարդու գործողությունների իմաստագրկման պատճառ, մյուս կողմից՝ անհրաժեշտ է, որպեսզի մշակութային տարրերը կամ երևույթները ներթափանցեն հասարակության իմացական կանոնների մեջ²: Վերջինիս իմաստային

¹ Зеверт Д., Современные подходы к пониманию праздничной культуры в Советском Союзе, <https://cyberleninka.ru/article/n/sovremennye-podhody-k-ponima-niuy-prazdnichnoy-kultury-v-sovetskom-soyuze/viewer>, с. 103.

² Նույն տեղում, էջ 104–105:

ընկալման վրա է հիմնվում խորհրդային տոների ուսումնասիրությունը:

Բուլճիկներն իշխանության եկան ժամանակի և արժեքների մասին նոր պատկերացումներով, հետևաբար տոները դարձան մեծ գաղափարական զենք, ինչը նրանց հնարավորություն ընձեռեց ներխուժել խորհրդային քաղաքացու առօրյա: Այդ մասին խորհրդային պատմաբան և ազգագրագետ Լ. Տուլցևան գրում է. «Մարդկանց ապրելակերպի և աշխարհայացքի փոփոխությունը սերտորեն կապված է նոր տոների և ավանդույթների անհրաժեշտության հետ, որը համահունչ կլինի հասարակական նոր կառուցվածքին, մարդկանց մեջ ձևավորվող նոր հարաբերություններին, հաշտ կլինի կոլեկտիվիզմի, հումանիզմի և ինտերնացիոնալիզմի սկզբունքների հետ՝ պահպանելով կոմունիստական բարոյական նորմերը»³:

Խորհրդային տոների առօրյան ներկայացնելուց առաջ նպատակահարմար է այն բաժանել փուլերի՝

1. Մինչպատերազմյան փուլ, երբ խորհրդային տոները նոր էին մտնում մարդկանց առօրյա: Դա այն ընթացքն էր, երբ մարդիկ փորձում էին ընկալել կոմունիստական սկզբունքները, աշխարհայացքն ու ապրելակերպը,

2. Հետպատերազմյան շրջան, երբ կոմունիստական գաղափարախոսությունը խորը արմատներ էր գցել երկրում, և տոները դարձել էին խորհրդային քաղաքացու առօրյայի անբաժանելի մաս:

Փուլաբաժանման այս համատեքստում մենք անդրադառնալու ենք Ամանորին, որը բուլճիկները վերցրեցին նախորդ՝ բուլ-

³ Тульцева Л., Современные праздники и обряды народов СССР, Москва, 1985, с. 3.

ժուական հասարակարգից և հարմարեցրեցին իրենց գաղափարախոսությանը՝ տալով նոր իմաստ և բովանդակություն:

1918 թ. մայիսին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հետո կառավարությունը, հիմնվելով հայ ժողովրդի ավանդությանը-կրոնական անցյալի վրա, ստեղծեց պետական տոնական համակարգ, որտեղ ներառվեց նաև Նոր տարի-Ամանորը: Ցանկում ներառված էին Քրիստոսի ծնունդը, Մկրտությունը, Տյառնընդառաջը, Վարդանանց տոնը, Բարեկենդանը, Զատիկը, Լուսավորչի մուտքն ի վիրապ, Համբարձման և Թարգմանչաց տոները⁴: Նշվում էին նաև այնպիսի տոներ, որոնք կապ ունեին պետական-քաղաքական խոշոր իրադարձությունների հետ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի բացման օրը (օգոստոսի 1), Հայաստանի Հանրապետության անկախության օրը (մայիսի 28), ինչպես նաև աշխատավորների (մայիսի 1) և Ռուսական հեղափոխության օրերը (փետրվարի 27, նոր տոմարով՝ մարտի 12)⁵:

Հանրապետությունում տոները ոչ միայն ոչ աշխատանքային էին համարվում, այլև, երբեմն, հատկապես զատկական տոների ժամանակ, աշխատավորներին տրվում էր մեկամսյա նպաստ⁶: Դա վկայում է ոչ միայն այն մասին, որ ժողովրդի մեջ խոր արմատներ գցած կրոնական տոները շարունակվում էին նույն ոգևորությամբ և շուքով տոնվել, այլ թե ինչպիսի մեծ նշանակություն էին տալիս Հայ առաքելական եկեղեցուն Հայաստանի իշխանությունները: Իրավիճակը փոխվեց Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո:

⁴ ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 14, թ. 6:

⁵ Նույն տեղում:

⁶ Մկրտչյան Ս., Հայաստանի առաջին հանրապետության տոնական համակարգը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, № 3, էջ 160:

Դեռևս 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Նոր տարին կապելով Սուրբ ծննդյան և քրիստոնեական գաղափարախոսության հետ, Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն արգելեցին այն նշել: Թեև տոնը փաստացի արգելված էր, սակայն դա ամրագրված չէր որևէ դեկրետով⁷: Խորհրդային Հայաստանում, սակայն, այն մտավ պետական տոնացույց⁸: Հայաստանի հեղկոմի 1921 թ. հունվարի 18-ի դեկրետով Նոր տարին ոչ աշխատանքային ամրագրվեց այնպիսի տոների հետ, ինչպիսիք էին Ինքնակալության անկման օրը (մարտի 12), Փարիզի կոմունայի օրը (մարտի 19), Ինտերնացիոնալի և Հայաստանում կոմունիստական շարժման առաջին օրը (մայիսի 1), պրոլետարական հեղափոխության օրը (նոյեմբերի 7) և Հայաստանում սոցիալիստական հեղափոխության օրը: Փաստորեն, կրոնական տարրեր պարունակող տոներից պահպանվեց միայն Նոր տարին, որը ժողովրդի սիրելի տոներից էր: Սակայն աշխատակիցները իրավունք չունեին այն վերածել զվարճանքի: «Մաճկալ» թերթի 1928 թ. հունվարմեկյան համարում հրատարակված «Նոր տարի» հոդվածում կարդում ենք. «Սովորաբար բոլոր կուլտուրական երկրներում և քրիստոնեություն դավանող ժողովուրդների մեջ նոր տարին սկսում են հաշվել հունվարի 1-ից: Այդ օրը համարում են մեծ տոն: Ինչպես մյուս մեծ տոները, այնպես էլ հունվարի 1-ը կատարում են աղմկալի տոնակատարությամբ,

⁷ Այն ամրագրվեց միայն ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ 1929 թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ: Համաձայն որոշման, հունվարի 1-ը՝ մյուս կրոնական տոների հետ դադարեց համարվել ոչ աշխատանքային: Постановление СНК СССР от 24.09.1929 о рабочем времени и времени отдыха в предприятиях и учреждениях, переходящих на непрерывную производственную неделю. <http://pravo.lievonevsky.org/baza/soviet/sssrb625.htm> (дата обращения 15.02.2020).

⁸ ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1 (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, 1921, էջ 69–71:

իրար շնորհավորելով, անմիտ ու դատարկ ուրախություններով, շատակերությամբ ու հարբեցողությամբ...»⁹:

Չնայած մերժողական քաղաքականությանը՝ կենցաղում շարունակում էին պահպանվել տոնի ավանդական տարրերը¹⁰: Սակայն ավելորդ ոգևորությունն ու ուրախությունն իշխանությունները համարում էին անցյալի մնացուկ: Բացի այդ, նրանք վախենում էին չկառավարվող զանգվածից, ուստի արգելում էին ակրիոլի օգտագործումը: Հետևաբար՝ մարդկանց մնում էր միայն իրենց տրված հանգստի օրն անցկացնել ակումբներում՝ գաղափարախոսական դասախոսություններ լսելով:

Այդ իրավիճակը շարունակվեց մինչև 1935 թ. նոյեմբերի 17-ը, երբ ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ի. Ստալինը Ստալինովականների համամիութենական առաջին ժողովի ժամանակ արտասանեց իր հայտնի նախադասությունը՝ «Жить стало лучше, товарищи. Жить стало веселее»¹¹: 1935 թ. դեկտեմբերի 28-ին հետևեց «Պրավդա» թերթում ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար, ԿԿ կազմբյուրոյի անդամ Պ. Պոստիշևի հրատարակած «Եկեք նոր տարում լավ տոնաձառ կազմակերպենք երեխաների համար» հոդվածը¹², որը 1936 թ. արտատպվեց «Խորհրդային Հայաստան» թերթում¹³: Հոդվածում Պոստիշևը գրում է. «Մինչև հեղափոխական շրջանում բուրժուազիան և բուրժուազիայի չինովնիկները նոր տարվան միշտ տոնաձառ էին սարքում երեխանե-

⁹ «Մաճկալ», 1 հունվարի, 1928, № 1:

¹⁰ Մանրամասն տե՛ս Մկրտչյան Ս., Նոր տարի-Ամանոր տոնի դրսևորումները խորհրդային շրջանում (1920–1950-ական թթ.), «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածու, Կ. ԺԱ, Երևան, 2016, էջ 210:

¹¹ http://istmat.info/files/uploads/54698/rech_tovarishcha_stalina_na_pervom_vsesoyuznom_soveshchanii_stahanovcev.pdf (дата обращения 19.11.2019).

¹² «Правда», 28 декабря, 1935, № 357.

¹³ «Խորհրդային Հայաստան», 1 հունվարի, 1936, № 1:

րի համար: Բանվորների երեխաները պատուհանից միշտ նախանձով էին դիտում երփներանգ գույներով փայլփլող տոնածառը և նրա շուրջն ուրախացող հարուստ երեխաներին: Ինչու՞ մեզ մոտ դպրոցը, մանկատները, մսուրները, մանկական ակումբները, պիոներական պալատները զրկում են խորհրդային երկրի աշխատավորների երեխաներին այդ հրաշալի բավականությունից...»: Սա մեծ իրարանցում առաջացրեց միութենական հանրապետություններում: Փաստորեն, եղևնին, որը շուրջ երկու տասնամյակ արգելված էր և դիտվում էր որպես քրիստոնեության խորհրդանիշ, մտնում էր խորհրդային իրականություն¹⁴:

Նշված հրապարակումից անմիջապես հետո «խորհրդային Հայաստան» թերթում հայտնվում են հոդվածներ, որտեղ պատկերված էր, թե ինչպես էր երկիրը պատրաստվում այդ մեծ իրադարձությանը՝ տոնական ցնծությամբ և խնդությամբ: Հատկապես մեծ էր ոգևորությունը մանկապարտեզներում և դպրոցներում: Թերթում հրապարակված մի նկարում ցույց էր տրվում, թե ինչպիսի ջերմեռանդությամբ էին մանկապարտեզներում աշխատակիցները պատրաստվում նոր տարվա առթիվ կազմակերպելիք հանդեսին՝ երեխաներին մանդարին, չամիչ, կոնֆետ, մարմելադ, թխվածք և մրգեր բաժանելու համար¹⁵: Սկսեցին փողոցներում և շուկաներում վաճառել եղևնիներ, դպրոցներում, մանկապարտեզներում տեղադրվում էին գեղեցիկ զարդարված եղևնիներ: 1937 թ. եղևնի դրվեց նաև Երևանի քաղաքային

խորհրդի դահլիճում, որը հետագայում ավանդույթի վերածվեց: Այն զարդարված էր կարմիր ժապավեններով, գեղեցիկ խաղալիքներով և գույնզգույն փոքրիկ էլեկտրական լամպերով¹⁶: Հենց նույն թվականին Մոսկվայում լույս տեսավ մի փոքրիկ գրքույկ՝ բաղկացած մի քանի հոդվածներից¹⁷: Դա կարծես մեթոդական ձեռնարկ էր, որտեղ բացատրվում էր ոչ միայն եղևնի դնելու նշանակությունը, այլև ցուցումներ էր տրվում, թե ինչպես զարդարել այն, ինչպես անցկացնել եղևնու շուրջ կազմակերպվելիք միջոցառումները: Նույնիսկ դրանց անկացման տևողությունն էր նշվում՝ դպրոցականների համար 1-2 ժամ, մանկահասակների՝ մոտ 1 ժամ: Վերացվում էին «բուրժուական» վերջին մնացորդները՝ մոմերը և հրեշտականման խաղալիքները: Դրանց փոխարինելու էին գալիս էլեկտրական լամպերը և տնային պայմաններում պատրաստված ու արտադրության հանվող նոր խաղալիքները՝ օդաչուներ, ինքնաթիռներ, պարաշյուտիստներ, թմբուկներ և այլն¹⁸: Բայց դա չէր նշանակում, որ խորհրդային բոլոր տոնածառները նման էին միմյանց: Չնայած ընդունված համընդհանուր սկզբունքներին և միատարրությանը, անհնար էր 2 միմյանց նման տոնածառ լինել: Յուրաքանչյուր ընտանիք ուներ իր «սեփական» տոնածառը և կարող էր այն զարդարել՝ ոչ թե քաղաքական ընդունված նախասիրությունների, այլ սեփական ընտանեկան ավանդույթների և ճաշակի թելադրանքով: Մյուս կողմից՝ մարդկանց տնտեսական պայմաններն այնքան բարվոք չէին, որ կարողանային իրենց թույլ տալ գնել տարբեր տեսակի, գույնի և ձևի խաղալիքներ: Տներում եղևնիները հիմնականում զարդար-

¹⁴ Սուրբ Ծննդյան գաղափարաբանությամբ եղևնին ռուսական իրականություն է մուտք գործել Գերմանիայից՝ դեռևս 18-րդ դարում: Իսկ հայ իրականություն այն մտավ 19-րդ դարի վերջերին՝ չնայած այն հանգամանքին, որ հայոց մեծ ծառի պաշտամունքն ուներ խորը արմատներ (մանրամասն տե՛ս Մկրտչյան Ս., Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, տոներ, հավատալիքներ (ավանդույթ և իրականություն), Ե., 2010, էջ 18-19):

¹⁵ «խորհրդային Հայաստան», 31 դեկտեմբերի, 1935, № 301:

¹⁶ «խորհրդային Հայաստան», 1 հունվարի, 1937, № 1:

¹⁷ Елка, сборник статей и материалов, Москва, 1937, <https://www.prlib.ru/item/332196> (дата обращения 18.04.2020).

¹⁸ Նույն տեղում:

վում էին երեխաների և մեծահասակների ձեռքով պատրաստված խաղալիքներով, մրգերով ու քաղցրավենիքներով¹⁹։ Իսկ Հայաստանի որոշ շրջաններում նույնիսկ ընկույզով ու կաղինով²⁰։

Եղևնու հետ աստիճանաբար տոնական առօրյա մտավ Ձմեռ պապը՝ իր ուղեկցող թռչնուհու՝ Ձյունանուշի հետ մեկտեղ²¹։ Այս կերպարին նույնպես տրվեց գաղափարական բովանդակություն։ Սկզբունքն այն էր, որ Նոր տարվան Ձմեռ պապը մտնում էր Խորհրդային Միության բոլոր տները և երջանկություն էր պարգևում մանուկներին։ Սա խորհրդանշում էր սոցիալական արդարության սկզբունքը, որը գոյություն չունեի «անիծված բուրժուական հասարակարգում»²²։ Ծնողների պարտականությունն էր՝ այնպես անել, որ բոլոր երեխաներն անխտիր հավատան Ձմեռ պապի գոյությանը։ Դա հետագայում քարոզվեց ֆիլմերի և մուլտֆիլմերի միջոցով։

Պետության առաջնորդ Ի. Ստալինը շատ լավ հասկանում էր տոնի կարևորությունը սերունդների դաստիարակման գործում։ Հետևաբար՝ բոլոր ուժերը ներդրվեց երեխաների ենթագիտակցության մեջ սերմանելու գաղափարական սկզբունքներ և ամենակարևորը այն, որ անգնահատելի է առաջնորդի դերը իրենց երջանիկ կյանքի և անհոգ մանկության կայացման գործում։ Դա

¹⁹ Сальникова А., История елочной игрушки, или как наряжали советскую елку, М., 2011, с. 97.

²⁰ «Խորհրդային Հայաստան», 1 հունվարի, 1937, № 1:

²¹ Արևելահայ իրականության մեջ տարածված էր հյուսիսից եկած Ձմեռ պապի կերպարը։ Ռուս իրականության մեջ Ձմեռ պապը հայտնի էր որպես «Дед мороз»՝ հյուսիսի սառցե տիրակալ, որը ուներ գեղանի թռչնուհի՝ Ձյունանուշիկ։ Ըստ ավանդության, ժամանակի ընթացքում նա պատժողի կերպարից վերածվում է բարեգործի (մանրամասն տե՛ս Մկրտչյան Ս., նշվ. աշխ., էջ 18–21):

²² Легенды СССР – Советские праздники. <https://www.youtube.com/watch?v=0G5nWNMXeJI> (дата обращения 17.03.2020).

են վկայում տոնածառի մոտ շուրջպար բռնող երեխաների շուրթերից հնչող երգի տողերը.

«Հազար-հազար դահլիճում

Պար են բռնել ու ասում.

Կեցցե Ստալինը մեծ,

Որ երջանիկ կյանք տվեց»²³:

Եթե մինչպատերազմյան շրջանում տոնը ընկալվում էր հիմնականում երեխաներին ուրախություն և ժպիտ պարգևելու օր, ապա հետպատերազմյան տարիներին Նոր տարին վերածվեց ավանդական տոնակատարության՝ համաժողովրդական տոնի։ Սրա հիմնական պատճառն այն էր, որ խորհրդային պետական տոնական օրացույցում Նոր տարին միակ տոնն էր, որն ընդգծված գաղափարական ուղղվածություն չունեի։ «Ինչ Ստալին, ինչ Լենին, հավաքվում էին, կենացներ էին ասում՝ երջանկության, սիրո, հայրենիքի մասին, մեկ-մեկ էլ մերոնք (ծնողները) նենց էին տաքանում, որ սկսում էին հայրենասիրական երգեր երգել», - պատմում է Վազգեն Թորոսյանը²⁴։ Բացի այդ, կրոնական բոլոր տոներն արգելված էին և մարդիկ փորձում էին ավանդական ողջ ճաշացանկը մեկտեղել Ամանորի սեղանին։ Կար նաև տոնի ընկալման հետաքրքիր հոգեբանություն. «կուշտ փորով հաց ուտելու» հոգեբանությունը, որը փաստում են զրուցակիցները²⁵:

1950-ական թվականներից յուրաքանչյուր Նոր տարվան հայությունը և ամբողջ Խորհրդային Միությունը սպասում էր անհամբեր։ Ամանորի դիմավորման առաջին պայմանն էր ճոխ սե-

²³ «Խորհրդային Հայաստան», 1 հունվարի, 1937, № 1:

²⁴ Հարցազրույց Վազգեն Թորոսյանի հետ, 18.09.2019, հեղինակի անձնական արխիվ:

²⁵ Հարցազրույց Ա.Ա.-ի հետ, 18.09.2019, հեղինակի անձնական արխիվ:

ղանն ու առատ խմիչքը: Սննդամթերքի սակավ մատակարարման պայմաններում առատ սեղան ապահովելը շատ դժվար էր: Շաբաթներ, նույնիսկ ամիսներ առաջ մարդիկ փողոցից փողոց, խանութից խանութ էին գնում, որպեսզի Նոր տարվա սեղանը ուտելիքով ու խմիչքով լինի առատ: Ժամանակակիցները պատմում են, որ «երբեմն մթերային խանութների դիմաց այնքան հերթեր էին գոյանում, որ անհնար էր լինում նույն օրը նախընտրած ապրանքի ձեռքբերումը»²⁶: Դժվար էր գտնել անգամ ամենատարրական ըմպելիքը՝ լիմոնադը: Երևանում ծնված Սեդա Մեսրոպյանը պատմում է. «Նոր տարվա համար լիմոնադ առնելը պատմություն էր: Էդպիսի նույնիսկ արտահայտություն կար, չէ՞, ասում էին «նոր տարվա լիմոնադ ես դառել, չես երևում», այսինքն հազվադեպ ես երևում»²⁷:

Առատ սեղանին ու խմիչքներին ավելանում էր միմյանց տուն գնալու և շնորհավորելու սովորույթը, որը հայկական կենցաղում միշտ է գոյություն ունեցել: Սակայն խորհրդային տարիներին այն հավելվեց նոր երանգներով, որոնք դարձան կենսակերպ: Խոսքն առավել քան վերաբերվում է Նոր տարվա վերադասի՝ «շեֆի տուն նվերներով գնալու» սովորությանը, որոնք տեղացիներն ընկալում էին որպես հարգանքի նշան, իսկ 1940-ական թվականներին Հայաստան վերադարձած հայրենադարձները՝ «կեղծավորություն և ստորաքարշություն»²⁸:

²⁶ Հարցազրույց Գրիշա Հովսեփյանի հետ, 18.06.2019, հեղինակի անձնական արխիվ:

²⁷ Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում (նյութերի ժողովածու), Ե., 2019, էջ 291:

²⁸ **Քաղաքյան Մ.**, Նամակներ սովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Ե., 1996, էջ 151:

Արարատի շրջանի Ճանապարհային շինարարության տեղամասի աշխղեկ Խաչիկ Ղազարյանը պատմում է. «Նոր տարվա պարտադիր պետք է գնայինք մեր ընկեր Բադալյանենց տուն (Ճանապարհային շինարարության տեղամասի պետ): Կարևոր չէ, թե ինչ կտանեինք (այսինքն նվեր, կամ քաղցրավենիք), կարևորը գնայինք: Եթե չգնայինք ասելիք էր լինում»²⁹: Սա բնորոշում էր խորհրդային համակարգում ձևավորված աշխատանքային և դասային հարաբերությունները, որը չէր համապատասխանում քարոզվող հավասարության սկզբունքներին:

Ապրանքների «դեֆիցիտի» պայմաններում «ճոխ սեղան դնելու» առումով բնորոշող են վերը նշված տեղամասի բանվոր Համլետ Մարտիրոսյանի հուշերը. «Նոր տարվա գնայինք մեկի տուն ու գարեջուր լինե՞ր՝ չեխական, դա արդեն ասելիք էր»³⁰: Դա հատկապես բնորոշ էր Կոմունիստական կուսակցության վերնախավին, որոնց համար նույնիսկ կազմակերպում էին «փակ խանութներ»³¹: Հայրենադարձներից մեկը հիշում է, թե ինչպիսի ապրանքների տեսականիներ էին թաքցվում Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքի նկուղային հարկում (ներկայիս Ազգային ժողովի շենքը). «Կանչվել էի հարցաքննության ...: Իջնելուց մի հարկ ավել իջա, հայտնվեցի նկուղային հարկում: Ոնց որ ներկայիս սուպերմարկետներից լինե՞ր, ամեն ինչ կար: Դա միայն պարտիականների համար էր»³²:

²⁹ Հարցազրույց Խաչիկ Ղազարյանի հետ, 28.02.2020, հեղինակի անձնական արխիվ:

³⁰ Հարցազրույց Համլետ Մարտիրոսյանի հետ, 28.02.2020, հեղինակի անձնական արխիվ:

³¹ **Քաղաքյան Մ.**, նշվ. աշխ., էջ 151–152:

³² Վերջին երազանք կամ GAME OVER, փաստավավերագրական ֆիլմ (Տ. Պասկեյանի անձնական արխիվ):

Գյուղական միջավայրում մի փոքր այլ էր: Օրինակ՝ Շատինի (Վայոց Ձորի մարզ) գյուղխորհրդի նախկին նախագահ Թելման Հակոբյանը պատմում է. «Նոր տարվան յուրաքանչյուր սովխոզի ղեկավար պարտավոր էր սննդամթերքով ապահովել գյուղին: Մեր սովխոզում հարկադիր մորթ էր կատարվում: Մոտ 30 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ էր մորթվում՝ բանվորներին մսով ապահովելու համար, շատ ցածր գներով՝ 1 կգ. միսը արժեք 60 կոպեկ: Այն պարագայում, երբ նորմալ պայմաններում մսի 1 կգ. 2 ռուբլի էր: Բոլորը գոհ էին մնում:»³³: Սուլակ գյուղում (Կոտայքի մարզ) ծնված Լիդա Սիմոյանի կարծիքով, կարևորը գյուղում ունեցած հարգանքն էր, այլ ոչ թե դրված սեղանը³⁴: Սա ցույց է տալիս, որ երբեմն «ես չմնալու» ցանկությունը, մղվում էր ետին պլան: Սակայն, շատ դեպքերում, հատկապես հետպատերազմյան առաջին տարիներին, տոնի նշելը պայմանավորված էր խորհրդային Հայաստանի բնակավայրերի տնտեսական զարգացման մակարդակով, երբեմն էլ՝ նույնիսկ բնակլիմայական պայմաններով: Օրինակ, գյումրեցիները ամանորյա սեղանին կարող էին դնել ընդամենը քաղցրեղեն, չիր, չամիչ, այն պարագայում, երբ Կապանի բնակիչները կարող էին մի ամբողջ այծ իջեցնել թոնիր³⁵: Սիսիանի Տոլորս գյուղի բնակիչները սահմա-

³³ Հարցազրույց Թելման Հակոբյանի հետ, 19.06.2020, հեղինակի անձնական արխիվ:

³⁴ Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում (նյութերի ժողովածու), էջ 35:

³⁵ Նույն տեղում, էջ 240–242:

նափակվել են միայն ընդեղենով³⁶՝ ի տարբերություն Արարատի շրջանի գյուղերի, որտեղ անպակաս էր միսը³⁷:

Չնայած այս ամենին՝ Մոսկվան աստիճանաբար փորձում էր տոնական սեղանին ավելացնել այնպիսի ուտեստներ, որոնք միութենական նշանակություն ձեռք կբերեին և կդառնային յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու սեղանի անբաժան մասը: Դրա վառ օրինակը «Օլիվիե» աղցանն էր՝ հայտնի որպես «մայրաքաղաքային», որը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց «համընդհանուր հավասարություն և եղբայրություն» բնորոշող ուտեստի համբավ: Աղցանը հատկապես մեծ տարածում գտավ 1975 թ. նկարահանված «Ճակատագրի հեգնանք կամ բաղնիքի անուշ» ֆիլմի ցուցադրությունից հետո, որտեղ այն Ամանորի գիշերը պատրաստում է ֆիլմի հերոսուհին³⁸: Ի դեպ, մեծ էր նաև հեռուստատեսության նշանակությունը տոնին խորհրդային բովանդակություն տալու գործում, որտեղ առյուծի բաժինը պատկանում է նկարահանված ֆիլմերին: 1970 թվականից այդ ամենն ամբողջացվեց հեռուստատեսային ամանորյա ուղերձներով, որն ավանդության դարձրեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնևը³⁹:

Ահա սրանք էին «խորհրդային Նոր տարին» բնորոշող ընդհանուր և մասնավոր երևույթները: Այն ուներ նաև այլ յուրահատկություններ ևս, որոնք այլ անդրադարձի նյութ են:

³⁶ Հարցազրույց Ժենյա Հովսեփյանի հետ, 19.05.2020, հեղինակի անձնական արխիվ:

³⁷ Հարցազրույց Խաչիկ Ղազարյանի հետ, 20.02.2020, հեղինակի անձնական արխիվ:

³⁸ Ирония судьбы, или с легким паром (комедия, реж. Эльдар Рязанов, 1976 г.), <https://www.youtube.com/watch?v=IVpmZnRIMKs> (дата обращения 17.10.2019).

³⁹ 31.12.1970. Новогоднее обращение Л.И. Брежнева, <https://www.youtube.com/watch?v=AJcZenQHIZo> (дата обращения 22.06.2019).

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք կատարել մի քանի եզրահանգում.

1. Տոները խորհրդային շրջանում նույնանում էին առօրյա կյանքի և կենցաղի հետ,

2. Մինչպատերազմական շրջանում Ամանորը հիմնականում ընկալվում էր երեխաներին ուրախություն և ժպիտ պարգևելու օր,

3. Հետպատերազմյան շրջանն իր հետ բերեց Ամանորը յորովի՝ ընկալելու սովորույթներ, որոնք պահպանվել են նաև տոնի ժամանակակակից ընկալումներում:

ГАЯНЕ КАЗАРЯН

СОВЕТСКИЙ НОВЫЙ ГОД И ОСОБЕННОСТИ ЕГО ПРАЗДНОВАНИЯ В АРМЕНИИ

Резюме

После Октябрьской революции 1917 г. большевики пришли к власти с новыми идеями о ценностях, которые позволили бы сформировать нового человека. Начали использовать различные идеологические инструменты, наиболее эффективным из которых были праздники.

Советские праздники являются неотъемлемой частью истории повседневной жизни, поэтому их изучение дает широкую картину образа жизни людей.

В данной статье из праздников представлен Новый Год, который большевики позаимствовали у прежнего строя и приспособили к собственной идеологии, придав ему новый смысл и содержание.

GAYANE GHAZARYAN

THE SOVIET NEW YEAR AND THE PECULIARITIES OF ITS CELEBRATION IN ARMENIA

Summary

After the 1917 October Revolution the Bolsheviks came to power with new ideas about values that would allow to form a new personality. They began to use various ideological tools, the most effective of which were the holidays.

Soviet holidays are an integral part of the history of everyday life, therefore, their study gives a broad picture of people's way of living.

This article presents the New Year from the holidays, which the Bolsheviks borrowed from the previous system and adapted to their own ideology, giving it a new meaning and content.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՐՅԱ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության բաղկացուցիչ մաս են համարվում խորհրդային տոները, որոնց ուսումնասիրությունն առավել քան կարևոր է: Այն թույլ է տալիս լայն պատկերացում կազմել մարդկանց կյանքի և կենցաղի մասին: Սակայն տոները առավել կարևորվում են հոգեբանական տեսանկյունից, քանի որ նրանց միջոցով խորհրդային քաղաքացին կարողանում էր հասկանալ իրեն կամա թե ակամա մատուցված նոր սոցիալիստական մտածելակերպը: Խորհրդային ամբողջատիրական համակարգում տոներին տրվում էր առաջնային և կարևորագույն տեղ: Դրանք կազմում էին իրականացվող գաղափարական աշխատանքի հիմնական մասը և սոցիալիստական նոր կենցաղի ձևավորման կարևորագույն գործոններ էին: Փորձենք հասկանալ, թե ինչպես էր այդ աշխատանքն իրականացվում:

Պատմաբան Ի. Գոլոմշտոկը, նկարագրելով խորհրդային պետությունը, այն նմանեցնում էր մի մեծ մեքենայի, որի յուրաքանչյուր մաս կատարում էր իրեն վերապահված գործառույթը¹: Տոնը, որպես սոցիոմշակութային իրողություն, համարվում էր այդ մեծ մեքենայի բաղկացուցիչ, որը ստեղծելով յուրօրինակ զգացական դաշտ՝ կարողանում էր ազդեցություն թողնել մեծ

պետության հազարավոր քաղաքացիների վրա: Պետական տոները տարբեր ձևերով (հավաքներ, ելույթներ, երթեր, ցույցեր) նշելը ինքնանպատակ չէր: Դրանք գործիքներ էին, որոնց միջոցով քաղաքացուն տրվում էր «նոր և ճիշտ աշխարհընկալում»: Քաղաքացին պետք է գիտակցեր, որ ինքն այլևս հանդիսանում է մի մեծ կոլեկտիվի անդամ: Ուստի այս համատեքստում չկային առաջնային և երկրորդային տոներ. յուրաքանչյուրը ծառայում էր որոշակի նպատակների համար: Խորհրդային համակարգը գիտեր, թե ինչ է նշանակում հավասարակշռության պահպանում:

Փորձենք հասկանալ, թե ինչպես էր աշխատում այդ մեխանիզմը և ինչ ազդեցություն էր այն թողնում մարդկանց վրա՝ տոներն առանձնացնելով ըստ կարևորության՝ մարդկանց «սիրելի տոն» կարգավիճակի սկզբունքով²:

Մայիսի 1, տոն, որը կապվում է աշխատավորների իրավունքների պաշտպանության և իրավահավասար սկզբունքներով աշխատանքի կազմակերպման հետ: Մինչեղափոխական Ռուսաստանում այն առաջին անգամ նշվել է 1890 թ. և կրում էր «Աշխատավորների միջազգային համերաշխության օր» անվանումը: Դրան հետևել են Պետերբուրգում աշխատավորների՝ անօրինական կազմակերպված մայիսմեկյան շքերթները (մայովկաները), որոնք, արդեն 1897 թ. կրում էին քաղաքական բնույթ³:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մայիսի 1-ը սկսեց տոնվել պետական մակարդակով: Աստիճանաբար այն

² Նման ձևակերպման համար հիմք է հանդիսացել մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Հարցմանը մասնակցել են << տարբեր քաղաքներում և գյուղերում բնակվող տարբեր տարիքի անձիք: https://docs.google.com/forms/d/1zMV2N6mCO_noRBuhqDe1tXhIfLYuOrQIXVZHabLN7zc/edit#responses, հեղինակի անձնական արխիվ:

³ 1 մայ: история праздника, https://blog.irr.ru/view/1_maya_istoriya_prazdnika (дата обращения 22.03.2020).

¹ Голомшток И., Тоталитарное искусство, М., 1994, <https://studfile.net/preview/4584698/> (дата обращения 17.04.2020).

ծեռք բերեց նոր իմաստ: Եթե նախկինում տոնը հակադրվում էր աշխատանքին, ապա այժմ հենց ինքը աշխատանքն էր համարվում տոն: Եթե նախկինում աշխատավոր զանգվածները ստիպված էին աշխատել հարուստ կապիտալիստների ճնշման տակ, ապա այժմ մարդկանց համար «աշխատելը տոն էր»: Պաշտոնական քարոզչության կողմից առաջ մղվեց մարդը, որը համարվում էր երկրի մեծագույն արժեքը: Ուստի խնդիր դրվեց տոները կազմակերպել այնպես, որպեսզի անձը զգա իր աշխատանքի կարևորությունը և իր ներդրումը խորհրդային մեծ երկրի կառուցման գործում:

Մայիսմեկյան տոնակատարության և, ընդհանրապես, խորհրդային տոների կազմակերպման կարևորագույն մաս էին կազմում լոզունգները: Դրանք կարծես յուրահատուկ կապ էին ստեղծում կուսակցության տեսաբանների, կուսակցական-քաղաքական գործիչների, կուսակցության շարքային անդամների և քաղաքացիների միջև:

1918 թ. ապրիլի 26-ին Համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Յա. Սվերդլովի ստորագրությամբ բոլոր նահանգային, գավառային և գյուղական պատգամավորների խորհուրդներին առաջարկվեց մայիսմեկյան շքերթներին դուրս գալ հետևյալ լոզունգներով. «Կեցցե՛ խորհրդային իշխանությունը՝ բանվորների և գյուղացիների դիկտատուրան բուրժուազիայի նկատմամբ», «Ընդդեմ իմպերիալիզմի, հանուն խաղաղության և բոլոր աշխատավոր ժողովուրդների եղբայրական միության», «Զենքը ձեռքին խորհրդային հանրապետության պաշտպանությունը բոլոր աշխատավորների և գյուղացիների

սրբազան պարտքն է», «Ով չի աշխատի՝ նա չի ուտի» և այլն⁴: Այս լոզունգներից ակնհայտ երևում է, որ խորհրդային իշխանությունը փորձում էր ոչ միայն ամրապնդել դիրքերը, այլև քաղաքացիների գիտակցության մեջ մտցնել կուսակցության որդեգրած քաղաքականության դրույթները: Նման գործելակերպը շարունակվեց նաև հետագայում⁵:

Մայիսմեկյան շքերթները աստիճանաբար վերածվեցին մեծ տոնի, որոնք ուղեկցվում էին քաղաքից դուրս կազմակերպվող ուրախ խնջույքներով, հետագայում արդեն այգիներում՝ զբոսանքներով, ուրախ պարերով, երգերով և այլն: Սակայն կատարվող աշխատանքների մեծ մասը ուղղված էր աճող սերնդի դաստիարակմանը: Տոնը երեխային պետք է տար «երջանիկ ապագա» տեսնելու զգացողություն: Այսինքն՝ երեխաները, դպրոցականները, ուսանողները պետք է զգային, որ իրենք ապրում են պայծառ ապագա ունեցող պետությունում: Այդ առումով մեծ դերակատարություն ունեին կազմակերպված գեղեցիկ եր-

⁴ Декреты Советской власти. Том II. 17 марта – 10 июля 1918 г., М., 1959, с. 174.

⁵ 1920–1930-ական թվականներին մայիսմեկյան լոզունգները մեծամասամբ կարևորում էին կուսակցության որդեգրած քաղաքականությունը և իրականացրած քայլերը ժողովրդի սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի կազմակերպման գործում: Օրինակ՝ 1931 թ. ԽՍՀՄ ժողովուրդները ցույցերի դուրս եկան հետևյալ լոզունգներով. «Հանուն ինդուստրացման բոլշևիկյան տեմպի», «Հանուն կուլակույթյունը որպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացնելու», «Հանուն սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման», «Բոլշևիկներ պե՛տք է տիրապետեն տեխնիկային» և այլն: 1937 թ.՝ «Կեցցե՛ ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը, հաղթանակած սոցիալիզմի և իսկական դեմոկրատիզմի Սահմանադրությունը», «Ամրացնե՛ք ԽՍՀՄ բանվոր դասակարգի դիկտատուրան, մեր ամբողջ հասարակության հանդեպ բանվոր դասակարգի պետական ղեկավարությունը» (1 մայիսի: Պատմական տեղեկանք, Երևան, 1937, էջ 83, 113): Հետպատերազմյան լոզունգները հիմնականում խոսում էին ֆաշիզմի դեմ Հայրենական պատերազմում տարած հաղթանակի և այդ գործում պետության առաջնորդ Ի. Ստալինի անուրանալի ավանդի մասին (Демонстрация 1 мая 1946 года, <https://www.youtube.com/watch?v=PYbL G3l1bEk&t=58s>, военный парад 1 мая, <https://www.youtube.com/watch?v=VcrKM7Y TRQ8&t=5s>) (дата обращения 17.03.2020).

թերը՝ փուչիկներով⁶, դրոշակներով, ծաղիկներով և այլն: Ստեղծված տեսողական գրավչությունն ազդում էր երեխաների հոգեբանության վրա: Մեր գրուցակից Լարիսա Մալխասյանը (ծնվ.՝ 1955 թ.) երանությամբ էր հիշում իր մանկության մայիսմեկյան շքերթները. «Էնքան սիրուն էին ամեն ինչ կազմակերպում, ես նստում էի պապայիս ուսերին ու գնում էինք պառադ: Ես փուչիկներ էի բռնում ու որ տեսնում էի պապայիս ուսերի վրայից էդ մեծ շքերթը, ուրախությանս չափ չէր լինում»⁷: Այն, որ մայիսի 1-ը երեխաների ամենասիրելի տոնն է եղել, փաստվում է նաև տպագրված հուշերում⁸:

Երեխաների համար, սակայն, առավել մեծ ուրախություն էր այդ օրը պաղպաղակ ուտելն ու կարուսել նստելը: Հովհաննես Շահբազյանը (ծնվ.՝ 1954 թ.) նշում է. «Ես հիշում եմ, ասենք, կոմունիստների ժամանակ, որ մենք շատ անհամբեր սպասում էինք մայիսի 1-ին: Մայիսի 1-ին, ասենք, դե փողեր էինք էկանոմիա անում, ծնողներից պահում էինք, որ հեսա գալիս ա մայիսի 1-ը, որ գումար ըլնի ձեռներս: Գնում էինք Հոկտեմբերյան, ընդեղ միջոցառումներ էր ըլնում, պառադ էր, ասենք, կարուսել էր, պաղպաղակ, բան, ման»⁹: Սա ոչ միայն փաստում է վերը ասվածը, այլև հաստատում, որ երեխաները զգում էին տոնական և ոչ տոնական օրերի տարբերությունը, որով համակարգը կարողանում էր հավասարակշռություն պահպանել:

⁶ Փուչիկներն ամբողջովին տոնական կենցաղ մտան ավելի ուշ՝ 1970–1980-ական թվականներին:

⁷ Հարցազրույց Լարիսա Մալխասյանի հետ, 19.10.2019 թ., հեղինակի անձնական արխիվ:

⁸ Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում (նյութերի ժողովածու). Ե., 2019, էջ 80–81, 102, 480:

⁹ Նույն տեղում, էջ 402:

Երեխաներին մեծագույն հաճույք էր պատճառում նաև տոնի ժամանակ նոր հագուստ ունենալու հանգամանքը: Մեր գրուցակից Համլետ Հարությունյանը (ծնվ.՝ 1948 թ.) պատմում է. «Մենք էդ օրը պարտադիր պետք է նոր հագուստ ունենայինք: Մենք գյուղում էինք ապրում: Նոր հագուստը մայիսի 1-ին գեղեցիկ հագնում էինք ու գալիս քաղաք՝ զբոսանքի: Հաջորդ օրը հարազատների հետ գնում էին մայովկայի»¹⁰: Նազիկ Միրզոյանը նույնպես նշում է պարտադիր նոր հագուստ ու նոր կոշիկ ունենալու և երևանյան զբոսանքի հանգամանքը¹¹: Սակայն այստեղ կարևոր էր ոչ միայն նոր հագուստ ձեռք բերելը, այլ քաղաք զբոսանքի գնալը, որը սոցիալ-տնտեսական սուղ պայմաններում ապրող գյուղացու համար բավական դժվար էր: Ուստի երեխաների ու, ինչու չէ, նաև նրանց ծնողների համար մայիսի 1-ը լավագույն օրն էր քաղաք գնալու և տնտեսած գումարով ժամանակ անցկացնելու համար:

Երթերը տալիս էին նաև պաշտպանվածության և հպարտության զգացում: Մեր գրուցակից Ժենյա Հովսեփյանը (ծնվ.՝ 1937 թ.), երբ խոսքը գնում էր մայիսմեկյան շքերթների մասին, մեջքը ուղղելով պատմում էր. «Նենց ձիգ ու հպարտ էինք քայլում, երբ հայտարարում էին, որ հրապարակով մենք պետք է անցնեինք»¹²: Նայելով գրուցակցի դեմքին՝ կարելի էր հասկանալ, որ այդ հիշողություններն անցյալի ամենավառ ու հպարտություն բերող հուշերն էին՝ իր պատմությունների ֆոնին: Հետաքրքիր է նաև, որ որոշները կարևորում են իրենց մանկության

¹⁰ Հարցազրույց Համլետ Հարությունյանի հետ, 19.10.2019 թ., հեղինակի անձնական արխիվ:

¹¹ Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում, էջ 80:

¹² Հարցազրույց Ժենյա Հովսեփյանի հետ, 04.05.2020 թ., հեղինակի անձնական արխիվ:

դրվագները՝ «դե մենք գոնե մայիսի 1 ենք ունեցել, դուք ինչ ե՞ք տեսել», «դե հիմա ինչ կա, էն ժամանակ էր ամեն ինչ, ուրախ գնում էինք պառադ» և նմանատիպ այլ արտահայտություններով: Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ շքերթներն իսկապես իրենց հետքը թողնում էին երեխաների հոգեբանության վրա:

Տոնին պատրաստվելը երեխաների մեջ ամրապնդում էր նաև կարգապահության զգացում, որը խորհրդային դաստիարակության կարևորագույն խնդիրներից էր: Նրանք շքերթին նախապատրաստվում էին մեծ պատասխանատվությամբ: Դա վերաբերվում էր հատկապես դպրոցներին, որտեղ այդ պատասխանատու աշխատանքն իր վրա էր վերցնում դասարանի ջոկատային խորհրդի նախագահը՝ դպրոցի ավագ ջոկատավարի հետ միասին: Խորհրդի նախագահը պետք է պարտադիր գերազանցիկ լիներ: Ուստի այդ պատասխանատու գործին անցնելը ենթադրում էր նաև մրցակցություն, որն էլ իր հերթին կբարձրացներ կրթության որակը:

Սակայն, ամեն ինչ միանշանակ չէր:

Ստալինյան վարչակարգը՝ իր բռնություններով և երկաթյա կանոններով ստեղծել էր վախի և ատելության մթնոլորտ: Թեև ատելությունը բացահայտ չէր, սակայն երբեմն այն իր արտահայտությունն էր գտնում ընտանեկան նեղ միջավայրում՝ վարչակազմի կատարած աշխատանքի և առաջին հերթին տոների նկատմամբ դժգոհություն հայտնելով: Դրանք, որպես կանոն, լինում էին բռնագաղթի ենթարկված և բռնություններին զոհ գնացած ընտանիքները: Ահա, թե ինչ է պատմում Սեդա Մեսրոպյանը (ծնվ.՝ 1952 թ.). «Դե մայիսի 1-ը նշվում էր, ու նույնիսկ լուսանկարներ ունենք՝ նոր ժապավեններով, նոր գուլպաներով,

բոկոտիկները հագած, նոր զգեստներով, որ մամաս առնում էր կտոր ու կարել էր տալիս իմ ու Անահիտի՝ մեծ քրոջս համար: Էդպես հագնում էինք սիրուն, կանգնում նկարվում էինք... Դպրոցական տարիքում հիշում եմ, որ մեզ, էդպես ասած, քշել են շքերթի՝ պարտադիր, գնացել ենք: Բայց առանձնապես էնտուզիազմ չի եղել էդ տոների նկատմամբ մեր ընտանիքում: Դե, ինչպես ասեցի, պապաս միշտ ասում էր, թե սիստեմն է մեղավոր, այնպես որ ինքը էդ սիստեմի հակառակորդներից էր, հնարավորինս հեռու էր մնում էդ բաներից»¹³: Ակնհայտ է, որ նրանց տանը ատելություն է եղել դեպի համակարգը: Պատմողը ևս դա համարում էր բնական, քանի որ նրա պապը դարձել էր հազարավոր անմեղ զոհերից մեկը: Ուստի շատ դեպքերում տոնին մասնակցություն ցուցաբերելը դառնում էր ձևական ու զուտ արարողակարգային:

Այն, որ տոնն ուներ նաև զուտ արարողակարգային կողմ, դա հասարակական գիտակցության մեջ ավելի ամրապնդվեց հետստալինյան ժամանակաշրջանում, մասնավորապես 1960–1970-ական թվականներին, երբ հարաբերական ազատության պայմաններում տեղի ունեցավ պետական և հասարակական կառուցվածքի այլ դեֆորմացում: Արդյունքում, այն գաղափարական առաջնահերթությունները, որ ի սկզբանե տոնը պարունակում էր, ի չիք դարձան: Շատ դեպքերում, ընդամենը մի քանի թուղթ լրացնելով՝ քաղաքացին կարող էր խուսափել տոնին չմասնակցելու պատասխանատվությունից: Սակայն այստեղ աշխատում էր մեկ այլ գործոն. իշխանությունները կաշում էին մարդկանց գրպանին՝ զրկելով նրանց աշխատավարձից կամ

¹³ Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում, էջ 280:

թոշակից՝ դրանով պահպանելով հավասարակշռությունը և ծածկելով այն լճացումը, որի առջև կանգնել էր համակարգը:

Մայիսի 9-ը մարդկանց սիրելի տոնի կարգավիճակ էր ձեռք բերել մեկ պարզ պատճառով. ոչ մի տոն այնքան չէր կարևորում մարդկային գործոնը պետության և երկրի ճակատագրի մեջ, որքան Հաղթանակի օրը: Մարդիկ անցել էին պատերազմի բարդ ու դժվարին ուղին: Չկար մի տուն, որն ուղղակի կամ անուղղակի կրած չլիներ նրա ծանրությունը: Ուստի հաղթական տոնի նշումը զոհված որդի կամ հայր ունեցող ընտանիքներում մեկ անգամ ևս հպարտանալու և «հերոսի ընտանիք» կոչվելու, իսկ զինվորի համար՝ մեկ անգամ ևս իր հերոսական մարտական ուղին և հանուն մեծ հայրենիքի կատարած քաջագործությունը հիշելու առիթ էր:

Հետաքրքիր էր տոնի նկատմամբ խորհրդային իշխանությունների դիրքորոշումը: Նրանք Հաղթանակի տոնը սկսեցին օգտագործել որպես փոխզսպման և դժվարին իրավիճակներից դուրս գալու միջոց: Այսպես՝ 1945 թ. հաղթական մայիսից հետո տոնը նշվել է ևս երկու տարի՝ 1946 և 1947 թթ.: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1947 թ. դեկտեմբերի 23-ի հրամանով տոնական օրացույցում տեղի ունեցավ փոփոխություն, համաձայն որի Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը, դարձավ աշխատանքային, իսկ հունվարի մեկը՝ Ամանորը, ոչ աշխատանքային¹⁴: Իհարկե, կան բազմաթիվ տեսակետներ, թե ինչու ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Ի. Ստալինը դիմեց նման քայլի: Սակայն գերիշխող է այն տեսակետը, որ Գերագույն հրամանատարը վախենում էր

վետերանների ըմբոստությունից: Նրանք անցել էին անասելի տառապանքների միջով և իրավունք ունեին ավելի լավ կյանքի ու ապագայի: Դա հատկապես վերաբերվում էր պատերազմից վիրավոր վերադարձածներին, որոնց մոտ ավելի զորեղ էր բարոյական և նյութական փոխհատուցում ստանալու ցանկությունը: Երբեմն դա հանգեցնում էր դժգոհությունների¹⁵: Բացի այդ, նրանք անցել էին եվրոպական բազմաթիվ երկրներով, տեսել էին «այլ ժողովրդավարություն, այլ ազատություն», որն անհամատեղելի էր իրենց երկրի «ազատության» հետ¹⁶: Ուստի նման քայլով Ի. Ստալինը փորձում էր զսպել նրանց հնարավոր դժգոհությունները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1965 թ. ապրիլի 26-ի հրամանով իրավիճակը փոխվեց. մայիսի 9-ը կրկին դարձավ ոչ աշխատանքային¹⁷: Դա պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և քաղաքական այն իրավիճակով, որում հայտնվել էր խորհրդային Միությունը:

ԽՄԿԿ Կենտկոմի նոր քարտուղար Լ. Բրեժնևի ղեկավարման տարիներին երկրի տնտեսական վիճակը վատթարացավ: Սկսվեցին այսպես կոչված «լճացման տարիները», ուստի անհրաժեշտ էր չկորցնել «ապագայի երկիր» լինելու կոչումը և բնակչությանը հիշեցնել ֆաշիզմը հաղթանակած երկրի մասին: Այս

¹⁵ Почему Сталин отменил празднование Дня Победы, <https://rg.ru/2019/05/07/rodina-pochemu-stalin-otmenil-prazdnovanie-dnia-pobedy.html> (մուտք՝ 09.05.2020).

¹⁶ Ժամանակակից ռուս պատմաբաններից ոմանք ժխտում են այս տեսակետները՝ տոնի չնչիլը բացատրելով երկիրը արագ քայլերով վերականգնելու Ի. Ստալինի մեծ ցանկությամբ, Сталин отменил праздник 9 Мая спустя три года после Победы. Чего и кого он боялся?, <https://lenta.ru/articles/2020/05/08/vd/> (дата обращения 09.05.2020).

¹⁷ Указ Президиума Верховного Совета СССР от 26 апреля 1965 года «Об объявлении 9 мая нерабочим днём», <http://base.garant.ru/6341190/> (дата обращения 18.05.2020).

¹⁴ Указ Президиума Верховного Совета СССР от 23 декабря 1947 года «Об объявлении 1 января нерабочим днём». https://ru.wikisource.org/wiki/%D0%A1%D1%82%D1%80%D0%B0%D0%BD%D0%B8%D1%86%D0%B0:Sbornik_zakonov_1938-1956.djvu/409 (дата обращения 19.05.2020).

ամենին գալիս է հաստատելու այն պնդումը, որ զանգվածային տոները ընթանում էին համակարգի ներսում տեղի ունեցող զարգացումների հետ զուգահեռաբար և թույլ էին տալիս իշխանություններին իրենց ձեռքում պահել հասարակության զարկերակը¹⁸:

Սկսվեցին կազմակերպվել տոնական շքերթներ, շրջաններում և գյուղերում վետերանների մեծարման երեկոներ, որոնց ընթացքում հանձնվում էին նաև հուշանվերներ¹⁹: Ավելի շատ սկսեցին նկարահանվել այս կամ այն հերոսական դրվագը ներկայացնող և հայրենասիրական ոգի ներշնչող ֆիլմեր²⁰: Ավանդության ղարձալ երեխաների կողմից վետերաններին տրվող ծաղիկները, որը յուրահատուկ շնորհակալական ժեստ էր նոր սերնդի կողմից հայրենիքի պաշտպաններին: Դպրոցներում սկսեցին կազմակերպվել հանդիպումներ, որտեղ վետերանները ներկայացնում էին իրենց անցած մարտական ուղին և թե ինչպես են երկիրը փրկել մեծագույն չարիքից՝ ֆաշիզմից: Կազմակերպվում էին նաև օլիմպիադաներ, միջոցառումներ, մրցույթներ: Նպատակը մեկն էր. նոր սերնդին փոխանցել հայրենասիրական այն ոգին, որն օգնեց հաղթանակել պատերազմում: Ուստի՝ որքան էլ առաջ քաշվեր մեկ ընդհանուր, միասնական հայրենիքի՝ Խորհրդային Միության համար պայքարի գաղափարը, այնուամենայնիվ, այդ դասերը նոր սերնդին տվեցին հայրենասիրության այն չափաբաժինը, որը, կարծում ենք, հետագայում օգնեց նրանց Արցախյան պատերազմի տարիներին:

¹⁸ Литвинова М., Массовые праздники и зрелища как манифестация власти, <https://cyberleninka.ru/article/n/massovye-prazdniki-i-zrelischa-kak-manifestatsiya-vlasti/viewer>, (մուտքը՝ 18.05.2020).

¹⁹ ՀԱԱ, ֆ. 912, ց. 1, գ. 49, թ. 2-3:

²⁰ Արխիվային փաստաթղթերից երևում է, որ մեծ շուքով տոնվել է հատկապես հաղթական տոնի 30-ամյակը, ՀԱԱ, ֆ. 912, ց. 1, գ. 19, 27:

Տպավորիչ էր հատկապես Երևանի Լենինի անվան հրապարակում (ներկայիս Հանրապետության հրապարակը) կազմակերպվող զորահանդեսը, որին մասնակցում էին բազմաթիվ պետական այրեր, Հայրենական պատերազմի վետերաններ, Գերագույն խորհրդի պատգամավորներ, գիտության և արվեստի գործիչներ: Զորահանդեսն ուղեկցվում էր ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ պետական հիմներով և հրավառությամբ: Զորքերի շարասյանը հետևում էր մարտական հզոր տեխնիկայի ցուցադրումը՝ զրահամեքենաներ, կատյուշաներ, գվարդիական ականանետներ և այլն²¹:

Ժամանակակիցների հուշերում²² հատկապես տպավորվել են Երևանի Հաղթանակի զբոսայգու²³ հուշահամալիրում կազմակերպվող հաղթական շքերթները, որոնք անցնում էին մեծ խանդավառությամբ: Միջոցառումները սկսվում էին մայիսի 9-ի վաղ առավոտյան: Մի խումբ պիոներներ պատվո պահակ էին կանգնում Անհայտ զինվորի հուշարձանի մոտ՝ տալով հավատարմության երդում: Այնուհետև Ֆ. Շոպենի, Լ.Վ. Բեթհովենի, Վ.Ա. Մոցարտի (ավելի ուշ արդեն «День победы» երգի) երաժրշտության հնչյունների ներքո Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ներկայացուցիչները ծաղկեպսակներ էին դնում Անհայտ զինվորի գերեզմանին՝ հարգելով զոհված մարտիկների հիշատակը: Պսակներ էին դրվում նաև ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի, Երևանի քաղաքային

²¹ «Սովետական Հայաստան», 1965, N 109:

²² Մեր կողմից կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ մարդկանց հիշողություններում մայիսի 9-ը առանձնապես ասոցացվում է «Հաղթանակ» զբոսայգում կազմակերպված շքերթների հետ:

²³ 1930-ական թվականներին Երևանում հիմնադրված քաղաքային զբոսայգին Հայրենական պատերազմից հետո վերանվանվեց Հաղթանակի զբոսայգի:

խորհրդի գործկոմի, մայրաքաղաքի կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների, արդյունաբերական ձեռնարկությունների, ուսումնական, գիտական և այլ հաստատությունների կողմից: Իրենց հարգանքի տուրքն էին մատուցում նաև աշխատավորներն ու նրանց հետևող բազմաթիվ քաղաքացիներ²⁴: Օրն ավարտվում էր զբոսանքներով²⁵, խնջույքներով: Ընդ որում, զբոսայգու տարածքում տեսողական գրավչություն էր ստեղծում նաև ցուցադրվող ռազմական տեխնիկան: Ցուցանմուշների մեջ մինչ այսօր ներառված է նաև S-34 տանկը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է խորհրդային բանակի տանկերից մեկը²⁶:

Մոսկվայում և Խորհրդային հանրապետություններում «Սառը պատերազմի» դժվարին փուլում նման զորահանդեսների և շքերթների կազմակերպումը առավել քան անհրաժեշտություն էր, քանի որ ԽՍՀՄ զինված ուժերի անխախտ հզորությունն ի ցույց էր ոչ միայն խորհրդային հասարակությանը, այլև ողջ աշխարհին, որով ԽՍՀՄ-ը փորձում էր հաստատել իր կարևորությունը երկբևեռ աշխարհում:

Մարտի 8-ը՝ կանանց միջազգային օրը, երբեմն համարվում է նաև «մայիսմեկյան տոնի կանացի տարբերակ»²⁷: Տոնի ծագու-

²⁴ «Մովետական Հայաստան», 1971, N 277:

²⁵ Ընդ որում, մայիսի 9-ը միակ օրն էր, որ կինոթատրոններում հնդկական ֆիլմեր չէին ցուցադրվում (հարցազրույց Երվանդ Մարգարյանի հետ, 29.06.2020, հեղինակի անձնական արխիվ): Դա փաստվում է նաև «Երեկոյան Երևան» թերթում Երևանի քաղաքային խորհրդի կինոֆիկացիայի վարչության ներկայացրած ֆիլմացանկով («Երեկոյան Երևան», 1967, N 106):

²⁶ ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական թանգարանի պաշտոնական կայք. <https://mayrhayastan.am/> (այցելությունը՝ 18.03.2019).

²⁷ Козлова Н., Международный женский день 8 марта как инструмент формирования советской политической культуры, <https://cyberleninka.ru/article/n/mezh-dunarodnyy-zhenskiy-den-8-marta-kak-instrument-formirovaniya-sovetskoy-politicheskoy-kultury/viewer> (дата обращения 19.05.2020).

մը կապվում է գերմանացի հեղափոխական Կլարա Ցետկինի անվան հետ, որը 1910 թ. սոցիալիստ կանանց միջազգային կոնֆերանսին առաջարկեց մարտի 8-ը նշել որպես աշխատավոր կանանց միջազգային օր:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այն մտավ տոնական օրացույց: Ինչպես և խորհրդային ցանկացած տոն, մարտի 8-ը ևս ուներ իր գաղափարական հիմքերը: Այս դեպքում կոմունիզմի կառուցման առաջնագիծ էր մղվում խորհրդային կինը, որն ուներ տղամարդկանց հետ հավասար իրավունքներ: Խնդիր էր դրվում սոցիալիստական աշխատանքի մեջ ներգրավել աշխատողական, խելացի, կրթված կանանց, ովքեր դուրս էին եկել «բուրժուական ստրկությունից»: «Խորհրդային Միության մեջ կինը իրավահավասար քաղաքացի է. իրավական, քաղաքական, տնտեսական ոչ մի սահմանափակում գոյություն չունի նրա համար... Այդ իրավունքը կնոջը տվել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, մեր հասարակական սիստեմը», - կարդում ենք «Խորհրդային Հայաստան» թերթում²⁸: Այդ ամենը արտահայտվում էր նաև 1920–1930-ական թվականներին կազմված մարտիության պաստառների վրա²⁹: Թերթերի էջերում հայտնվում էին բազմաթիվ կանանց օրինակներ, ովքեր դուրս էին եկել «խոհանոցային ստրկությունից», կրթություն էին ստացել և լծվել «կոմունիզմի կառուցման վեհ գործին»: Նրանցից շատերը պատգամավորներ էին, ովքեր իրենց անձնական փորձով և գիտելիքներով փորձում էին օգնել մյուս կանանց: Սկսվեցին կոլտնտեսություններում կազմակերպվել կոլտնտեսուհիների հա-

²⁸ «Խորհրդային Հայաստան», 1937, N 54:

²⁹ <http://tehne.com/event/arhivsyachina/obraz-zhenshchiny-v-sovetskih-plakatah-1920-40-h-godov> (дата обращения 19.05.2020).

վաքներ, ովքեր պատմում էին իրենց տխուր անցյալը և կիսվում իրենց ապագայի մասին մտահոգություններով: Աղջիկներն իրենց վստահ էին զգում նաև անձնական ընտրության և ամուսնության հարցում: Ահա թե ինչ էր պատմում կոլտնտեսուհի Հռիփսիմեն 1936 թ. հարվածային կոլտնտեսականների համամիութենական առաջին համագումարում. «Երկու տարի առաջ փեսացուներից ոչ մեկը իմ բակ ոտք չէր դնում, օժիտագուրկ էի: Հիմա 500 աշխօր ունեմ և ինքս եմ փեսացու ընտրելու»³⁰:

Ուստի դա էր պատճառը, որ սկզբնական շրջանում մարտի 8-ը ընկալվում էր աշխատավոր և կոաակցական կանանց տոն:

Հետպատերազմյան շրջանում մարտի 8-ը դարձավ դարբին, շինարար, տիեզերագնաց, վետերան, գրող, պատգամավոր կանանց տոնը: Կինը հայտնվեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Ժամանակաշրջանը ոչ ամբողջությամբ, սակայն ետ մղեց կնոջ և տղամարդու հավասարության խնդիրները, քանի որ պատերազմական պայմաններում կանայք կամա թե ակամա աշխատում էին տղամարդկանց հետ հավասար: Գրող Դ. Դանցովան պատմում է. «մարտի 8-ը ընկալվում էր ոչ թե տոն, որը ստեղծել էր Կ. Ցետկինը կամ Ռ. Լյուքսեմբուրգը, այլ դա պահ էր, երբ քեզ ասում են, որ դու հրաշալի ես»³¹: Սկսվում էր գնահատվել կնոջ կանացիությունը և գեղեցկությունը, կանայք սպասված ուշադրության էին արժանանում: Կազմակերպվում էին տոնական խնջույքներ, ընտանեկան հավաքներ: Որդիներն իրենց մայրերին, ամուսիններն իրենց կանանց նվիրում էին բացիկներ, ծաղիկներ, օձանելիք: Այդ օրը շատ դեպքերում նույնիսկ

ամուսինները կատարում էին «կանացի պարտականություններ»՝ սուրճ էին եփում, ուտելիք պատրաստում՝ դրանով շնորհավորելով և ուրախացնելով իրենց կանանց: Նույնիսկ հայկական ավանդապաշտ ընտանիքներում, որտեղ գերիշխում էր հայրիշխանական մտածողությունը³², մարտի 8-ը «փոքրիկ կենցաղային հեղափոխություն» մտցրեց:

Մարտի 8-ի հետ մեկտեղ սկսվեց նշվել **փետրվարի 23-ը**, որը 1923 թվականից պաշտոնապես համարվել է Կարմիր բանակի օր³³, իսկ 1949 թվականից դարձել է Խորհրդային բանակի և ռազմածովային ուժերի տոն:

1970-ական թվականներին տոնի նկատմամբ հասարակության վերաբերմունքը փոխվում է. տոնը դառնում է բոլոր տղամարդկանց օրը: Շնորհավորում էին բոլորին՝ անկախ նրանից, ծառայել են խորհրդային բանակում, թե՛ ոչ: Ուստի աստիճանաբար ձևավորվեց այդ օրերին փոխադարձ նվերներ տալու ավանդույթը: Նույնիսկ Խորհրդային Միության փլուզումից հետո, հետխորհրդային գրեթե բոլոր պետություններում այն երկար ժամանակ համարվում էր «տղաների տոն» և շատ դժվարությամբ դուրս մղվեց տոնական կենցաղից:

Նոյեմբերի 7-ը՝ Խորհրդային Միության կարմիր օրացույցի ամենակարևոր տոնը, ուներ ամբողջապես գաղափարական բովանդակություն: Մարդիկ դուրս էին գալիս երթերի հեղափոխության առաջնորդ Վ. Լենինի պաստառներով, «Կեցցե Խորհրդ-

³² Մանրամասն տե՛ս սույն ժողովածուում Գ. Ժամարյանի՝ «Առանձնապես ծանր հանցագործությունները Խորհրդային Հայաստանում 1950-ականների վերջ – 1960-ականների սկիզբ (Սոցիալ-հոգեբանական և իրավական որոշ հանգամանքների վերլուծություն)» հոդվածը:

³³ Постановления и распоряжения Всесоюзного центрального исполнительного комитета X созыва и его Президиума / РСФСР, М., 1923, Сборник N 1, с. 5. <http://elibrary.ru/nodes/50829-sb-1-yanvar-1923-g-1923-g-1923#mode/inspect/page/7/zoom/4>

³⁰ «Կոլխոզային գյուղ», 1936, N 13:

³¹ Легенды СССР – Советские праздники, <https://www.youtube.com/watch?v=0G5nWNMXejI> (дата обращения 20.05.2020).

դային Միությունը», «Կե՛ցցե կոմունիզմը», «Կե՛ցցե հեղափոխությունը» լուծունգներով: Այն ցուցադրում էր հաղթանակած երկրի ուժն ու կարողությունը: Այն նաև կուսակցական մարմինների համար յուրօրինակ հաշվետվություն էր՝ իրենց աշխատանքում առաջընթաց գրանցելու առումով: Այդ է պատճառը, որ տոնին պատրաստվում էին ամենայն մանրամասնությանը և բժախընդրությամբ: 1947 թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 30-ամյա հոբելյանի անցակցման համար ստեղծված հանձնաժողովի հանձնարարականներից³⁴ կարելի է պատկերացնել կատարվելիք աշխատանքի ողջ լրջությունը: Ըստ այդ հանձնարարականների, Խորհրդային Հայաստանի բոլոր քաղաքներում և շրջաններում պետք է կազմվեին հեղափոխությանը նվիրված զեկուցումներ և դասախոսություններ, որտեղ պետք է աշխատավորներին ցույց տրվեր հեղափոխության ձեռքբերումները, որոնք ապահովում էին պետությանը աննկարագրելի զարգացում, մշակութային զարթոնք, ազատ և երջանիկ կյանք: Բացի այդ, զեկուցումներում պետք է խոսվեր Լենինյան և Ստալինյան ազգային քաղաքականության մասին, որը հաջողությամբ իրականացվում էր Խորհրդային Հայաստանում³⁵: Գյուղերը պարտավորվում էին ներկայացնել տոնի անցակցման պլաններ, որը ներառվում էր շրջանային զեկուցումների մեջ և միայն հաստատվելուց հետո ստանում համապատասխան ֆինանսավորում³⁶:

Տոնը պետք է ուղեկցվեր նաև արտադրական հաջողություններով: Երկրի արտադրական ձեռնարկություններում երիտասարդները փորձում էին «պատվով կատարել» իրենց աշխատանքը և «արժանավայել» դիմավորել հեղափոխության հաղթական օրը: Դպրոցներում պետք է կազմակերպվեին միջոցառումներ՝ ՎԼԵՆԻՆԻՆ, հեղափոխությանը գովերգող բանաստեղծություններով և երգերով: Ուստի գուցե տոնի չափազանց զառափարական բովանդակությունն է պատճառը, որ հասարակության մոտ տոնի նկատմամբ բացասական վերաբերմունք է ձևավորվել:

Նոյեմբերի 29-ը Խորհրդային Հայաստանի տոնական օրացույցում առանձնակի տոն էր, քանի որ այդ օրը նվում էր Հայաստանի Խորհրդայնացման տարեդարձը: Սակայն պետք է արձանագրել, որ ժամանակակիցների մոտ տոնի նշան մանրամասները այդքան էլ չի տպավորվել³⁷:

Դեռևս 1920 թ., հիմք ընդունելով դեկտեմբերի 2-ին Երևանում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև կնքված համաձայնագիրը, Հայիեղումին ժամանակավոր փոխարինող զինվորական հրամանատարությունը Խորհրդայնացման տարեդարձի օր է հռչակել դեկտեմբերի 2-ը: Սակայն, ինչպես պարզել է պատմաբան Կ. Խաչատրյանը, «անցյալի հետ բոլոր կապերը պատռելու» նպատակով, 1921 թ. նոյեմբերի 19-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահությունը որոշում է «դեկտեմբերի 2-ը կողիֆիկացիոն կարգով փոխել և իբրև Խորհրդային իշխանության ազդարարման օր հայտարարել նոյեմբերի 29-ը»³⁸:

Հայաստանի Խորհրդայնացման առաջին տարեդարձի նշումը և այդ առիթով Երևանում կազմակերպված Պրահանդեսը կրում էր ակնհայտ հակադաշնակցական բնույթ: Պրահանդեսը

Հայաստանի Խորհրդայնացման առաջին տարեդարձի նշումը և այդ առիթով Երևանում կազմակերպված Պրահանդեսը կրում էր ակնհայտ հակադաշնակցական բնույթ: Պրահանդեսը

³⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 49, գ. 91, թ. 1-3:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, թ. 14-15, 69:

³⁷ Խոսքը առավելապես վերաբերվում է 1950-60-ական թվականներին ծնված անձանց:

³⁸ Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1919-1922 թթ., Ե., 2007, էջ 43-44:

սին «մաուզերները օդի մեջ ճոճացնող» և «բանտարկված մաուզերիստ դաշնակցականների» ցուցադրումը խոսում էր «դաշնականների լծից աշխատավոր զանգվածների ազատագրման» մասին: Տոնախմբությունը նման ոգով էր կազմակերպված նաև գավառներում³⁹: Դաշնակցականներին ծաղրով էին ներկայացնում նաև խորհրդային թերթերի էջերում: Օրինակ՝ 1927 թ. նոյեմբերի 29-ին «Խորհրդային Հայաստան» թերթում տպված համարում պատկերված է երկաթյա ձող, որի վրա ամրացված «29-ը» իր շղթայով խեղդամահ է անում դաշնակցական պետական գործչին, հոգևորականին և զինվորականին⁴⁰: Նման ծաղրանկարների կարելի է հանդիպել հատկապես «Խորհրդային Հայաստան» թերթի 1920–1930-ական թվականներին տպված համարներում:

Հակադաշնակցական քարոզչությանը զուգահեռ մշակվում էր նաև Խորհրդային Հայաստանում կոմունիզմի կառուցման հայեցակարգ, որը հիմնված էր գաղափարական համընդհանուր դրույթների վրա և որոնք «անհերքելի ճշմարտություններ էին»: Դրանք էին.

Հայրենիք՝ «Չկա որբի և ողբի հայրենիք»՝ «Կեցցե մուրճի և մանգաղի շենշող հայրենիքը»:

Նպատակ՝ «ազատել Հայաստանի բանվորներին և գյուղացիներին տնտեսական և կուլտուրական հետամնացության ճիւղերից: Հարթել ուղիները, որոնք տանում են դեպի կազմակերպված հասարակական սոցիալիստական տնտեսություն, որը մի բջիջը կկազմի Համաշխարհային կոմունիստական տնտեսության...»:

³⁹ ՀՄԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն, Ե., 1922, N 8 (1 հունվարի), էջ 4–5:

⁴⁰ «Խորհրդային Հայաստան», 1927, N 272:

Հակառակորդներ՝ մեր հակառակորդները համայն աշխատավորության դասակարգի թշնամիներն են և առաջին հերթին միջազգային ֆաշիզմի անկոչ սպասավոր դաշնակցական ֆաշիստները: Կորչի միջազգային ֆաշիզմը և նրա զորագունդ հայկական ֆաշիզմը, ողջույն այն մոլորվածներին, ովքեր թողնելով դաշնակցությունը, անկեղծ սրտով մոտենում են բանվորագյուղացիական իշխանությանը:

Ուժը՝ ուժեղ է, նվաճող և համառ ստեղծագործող Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որովհետև նրա երակներում միջազգային հարյուր միլիոն պրոլետարիատի արյունն է խաղում...»⁴¹:

Աստիճանաբար խորհրդային մամուլում հայտնվում էին այնպիսի հոդվածներ, որտեղ «Վերածնված հայրենիքի» համար շնորհակալություն էին հայտնում ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինին: Ազատ Վշտունին, Նաիրի Զարյանը ինչպես նաև այլ գրողներ իրենց բանաստեղծություններում գովերգում էին «մեծ առաջնորդին»՝ նրան բնորոշելով «ժողովուրդներին ազատություն տվող հանճար»⁴²:

Խորհրդահայ տոնը կարևորվում էր նաև հանդիսավոր նիստերով: Մայրաքաղաքում նիստերը հիմնականում տեղի էին ունենում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի և «Դինամո» սպորտային ընկերության (ներկայումս Վ. Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտ) դահլիճներում, որտեղ Վ. Ի. Լենինի մեծադիր դիմանկարի շուրջ հավաքված Հայկական ԽՍՀ և Երևանի քաղաքային խորհրդի պատգամավորները, հյուրերի ներկայությամբ և

⁴¹ «Խորհրդային Հայաստան», 1923, N 267:

⁴² «Խորհրդային Հայաստան», 1935, N 275:

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարի գլխավորությամբ նշում էին «հայ ժողովրդի ազգային տոնը»⁴³: Պատգամավորները հանդես էին գալիս զեկուցումներով, որտեղ արձանագրում էին Խորհրդային Հայաստանի տարբեր բնագավառներում ձեռք բերած հաջողությունները: Շնորհավորական ուղերձներ էին ստացվում «եղբայրական հանրապետություններից»: Ձեռնարկություններում և գիտական հաստատություններում տեղի էին ունենում հանդիսավոր հավաքներ և ժողովներ, որտեղ մեկ անգամ ևս փաստվում էր «ռուսական ձեռքի կարևորությունը»: Այս առումով բնութագրական է 1968 թ. նոյեմբերի 26-ին Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական նստաշրջանը՝ նվիրված Հայաստանը Ռուսաստանի հետ միացման 140-ամյակին⁴⁴:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրերով գիտության և արվեստի բնագավառում ունեցած մեծ ներդրման համար գործիչներին տրվում էր պատվավոր կոչումներ: Մայրաքաղաքն ընդունում էր տոնական տեսք. թատրոններում տրվում էին ներկայացումներ, կինոթատրոններում ցուցադրվում օրվա խորհրդին համահունչ ֆիլմեր:

Հիշատակության արժանի է հատկապես Հայաստանի խորհրդայնացման 50-ամյա տարեդարձը: 1970 թ. հանրապետություն այցելեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը: Միութենական հանրապետությունների պատվիրակների ներկայությամբ Բրեժնևը Հայկական ԽՍՀ դրոշին ամրացրեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանը: Սույն տարե-

դարձի առթիվ նույն թվականին թողարկվեցին նաև հայկական կոնյակներ⁴⁵:

Հայկական ԽՍՀ գյուղերում նույնպես տեղի էին ունենում հանդիսավոր նիստեր, որտեղ արձանագրվում էին ձեռք բերված հաջողությունները: Գյուղխորհրդի գործկոմի, կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների նախագահները հիմնականում ընդգծում էին այն հանգամանքը, թե ինչպես նախահեղափոխական «հետամնաց գյուղը» դարձավ բարեկարգ: ՀԿ(Բ)Կ Մեղրու շրջկոմի և աշխատավորների պատգամավորների շրջանային խորհրդի «Կոլխոզային գյուղ» պաշտոնաթերթում կարդում ենք. «Նախասովետական շրջանում մեղրեցին կարոտ էր մնում նավթի, ձեթի ճրագին, իսկ հեռավոր գյուղերում մուգն ընկնելուն պես քնում էին: Սովետական իշխանությունը լույս տվեց Մեղրիի աշխատավորներին...: Եթե նախասովետական մեղրեցին գաղափար չունեին ռադիոյի մասին, ապա այժմ ռադիոֆիկացված են շրջանի գյուղերի մեծ մասը...: Կինոն առաջին անգամ մուտք է գործել գյուղ սովետական իշխանության տարիներին»⁴⁶:

Կարելի է փաստել, որ նոյեմբերի 29-ը Խորհրդային Հայաստանի համար «մեծ հաշվետվության» օր էր. այն արձանագրում էր տարեցտարի իրականացվող փոփոխությունները և հաջողությունները: Այն արտադրական ձեռնարկություններում և գիտական հաստատություններում «տարեկան պլանի կատարման» և «լավ կատարողականի» օր էր: Ուստի՝ այս ամենով կարելի է բացատրել այն միտքը, որ ժամանակակիցների մոտ նոյեմբերի 29-ը չէր արթնանացնում տոնական վառ հիշողություններ, ինչպես, օրինակ, մայիսյան տոները:

⁴³ «Երեկոյան Երևան», 1965, N 281:

⁴⁴ «Սովետական Հայաստան», 1968, N 277:

⁴⁵ «Սովետական Հայաստան», 1970, N 279, «Ավանգարդ», 1970, N 141:

⁴⁶ «Կոլխոզային գյուղ», 1950, N 58:

Այսպիսով, այն գաղափարական գործառույթը, որը կատարում էին տոները Խորհրդային Միությունում, ծառայում էր իր նպատակին: Տոները ներխուժում էին ոչ միայն մարդկանց առօրյա, այլև հոգեբանական խորը ազդեցություն էին թողնում նրանց վրա: Մարդիկ հավատում էին, որ իրենք կարևորի մաս են կազմում և դա երբեմն օգնում էր չտեսնել կամ մոռացության տալ այն դժվարությունները, որը ստեղծում էր համակարգը: Ներխուժելով մարդկանց առօրյա՝ խորհրդային տոներն ընդունեցին տեղական առանձնահատկություններ: Խորհրդային Հայաստանի բնակչությունը, իր էթնիկ հոգեբանական առանձնահատկություններից ելնելով, շատ տոներ յուրովի ընկալեց և փորձեց դարձնել ազգային: Գաղափարական դաստիարակությունից զատ, կարող ենք փաստել, որ տոները ապահովում էին ոչ միայն խորհրդահայ բնակչության ուրախ առօրյան, այլև իրենց մեջ պարունակում էին ազգային դաստիարակության որոշ տարրեր: Հստակ է և այն, որ տոները զարգացրեցին հայկական գյուղ՝ գյուղական առօրյա ներմուծելով քաղաքային կենցաղը:

ԳԱՅԱՆԵ ԿԱԶԱՐՅԱՆ

СОВЕТСКИЕ ПРАЗДНИКИ В КОНТЕКСТЕ БЫТОВОЙ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ АРМЯНСКОЙ ССР

Резюме

В статье представлены советские праздники как неотъемлемая часть повседневной истории Советской Армении. Предпринята попытка выяснить, как праздники влияли на сознание лю-

дей и какую роль в этом играло государство. В основу статьи легли собранные нами, также ранее опубликованные воспоминания советских людей о проведении разных праздников, которые в сопоставлении с фактическим материалом позволяют выявить определенную картину. В частности, подчеркивается тот факт, что праздники действительно выполняли свою идеологическую функцию, но в разные периоды существования Советского государства имели разную степень воздействия на сознание советских людей.

GAYANE GHAZARYAN

SOVIET HOLIDAYS IN THE CONTEXT OF THE DAILY LIFE OF THE POPULATION OF THE ARMENIAN SSR

Summary

The article presents the Soviet holidays as an integral part of everyday history of Soviet Armenia. An attempt is made to find out how the holidays influenced on consciousness of people and what role has the state played in this. The article is based on the memories of Soviet people collected by us, also previously published, about the conduct of various holidays, which by combining with the factual material, enables to reveal a certain picture. In particular, it emphasizes the fact that the holidays did fulfill their ideological function, but in different periods of the Soviet state had a different degree of impact on the consciousness of Soviet people.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԱՆ	3
ՀԱՄՈՍՈՒՔԻԱՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՅՈՒԴԻ ԱՌՈՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ	7
ՀԱՄՈՍՈՒՔԻԱՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1946–1948 թթ.)	20
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԱՌՈՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1946–1948 թթ.)	37
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԱՐՎԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԱՌՈՐՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	55
ԿԱՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ	
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ «ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ» ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946–1948 թթ.)	67
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՀԽՍՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՐՅԱՅՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	90

ՀԱՄՈՍՈՒՔԻԱՅԱՆ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՁՈՒԹՅԱՆ ԱՌՈՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ (1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)	101
ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ	
ԱՌԱՋՆԱՊԵՍ ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1950-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ – 1960-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲԻՆ (ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)	115
ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ	
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՀԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ (1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)	130
ГАГИК ЖАМГАРЯН	
«НЕСУНЫ» В СОВЕТСКОЙ АРМЕНИИ 1960-ЫХ ГОДОВ»: АНАЛИЗ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ ПО УСТНЫМ ИСТОЧНИКАМ	142
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՄԱՆՈՐԸ ԵՎ ԱՅՆ ՏՈՆԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	159
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԲՆԱԿՁՈՒԹՅԱՆ ԱՌՈՐՅԱ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	174

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԻ «ՍՊԻՏԱԿ
ԷՋԵՐԸ» (1940–1960 ԹԹ.)**

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«БЕЛЫЕ СТРАНИЦЫ» ПОВСЕДНЕВНОЙ ЖИЗНИ СОВЕТСКОЙ
АРМЕНИИ (1940–1960-Е ГОДЫ)**

СБОРНИК СТАТЕЙ

**“WHITE PAGES” OF SOVIET ARMENIA'S EVERYDAY LIFE
(1940–1960S)**

COLLECTED PAPERS

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի

Տպագրվել է «ԻՆՖՈԿՈՊԻ» ՍՊԸ-ի տպարանում
Տպաքանակը՝ 100 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>